




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Վ. ՕՇԱԿԱՆ Ժամագրութիւն
- 16.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Բանաստեղծութիւններ
- 23.- * * * ՅԱԿՈՒ ՍԻՄՕՆԻ
- 24.- Ե. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ ՅԱԿՈՒ ՍԻՄՕՆԻ
- 26.- Յ. ՍԻՄՕՆԻ Բանաստեղծութիւններ
- 29.- Յ. ՍԻՄՕՆԻ Արձակ բանաստեղծութիւններ
- 33.- Կ. ՓՕԼԱՏԵԱՆ Զրոյցներ՝
Լիւի - Անտրէ Մարտէլի,
Փօլ Էլիարի,
Կոստան Զարեանի,
Սէն - շոն ֆէրսի հետ
- 47.- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ Գրողը և իր գործը
- 50.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Սերունդի մը տագնապներուն
յամճմառու արձակագիրները
- 64.- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ Համբարային մի վկայութիւն
- 65.- Ա. ԽԱՆՈՒԼԻՆ Տաղանդի սպանութիւնը
- 69.- * * * Մշակութային լուրեր

Բազմը



ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ Ե ԱՐՈՒՆԵՍԻ

Ի Ս. ՕՍՐԻ. Թ Ի Ի Գ Գ ՈՒ Լ Ի Ս 1996 Գ Է Ն Ե Բ Ե Ի Բ

Վ. ՕՇԱԿԱՆ

Ժ Ա Մ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն



Ձեր ստեղծագործությունները, կոչումն կհատկապես մըն էր, իրեն նման շարժում է գրվում, ուղղութենէ հասած, համայնարանի պարտեզին մէջ միւս-մինակ: Այլևս շատ քիչ անգամ քաղաք կ'իջնէր, հաղարհներու հետ ինքն ալ արուարձանները փախած, ուպատանած, անկարող տակալու կեանքի հրմշտուկին, հակառակ անոր, որ զոնհիկ բազմութիւններէն շէր խորշեր ու կը նախընտրէր ասպունջով ճամբորդել, քան թէ Պրին Մոտի այդ որկրամոլ ու ծակաչափ միջին դասակարգին հետ ճեպընթացը նստիլ: Այսօր ալ այդպէս ճամբորդէր էր, հին բարեկեցիկ, անուանի, բայց նօսրացող դերդաստանի վերջին անդամի իր քայուածքով, դիտու բռնուածքով հանդարտօրէն կտրելով մայթը ու սովորական մարդոց բազմութիւնը: Փնտրելովանորոշ համայնարանի մուտքին՝ իր պարզ, ճաշակաւոր ու ինքնամփոփ կերպարանքը պահ մը սպասէր էր կանաչ լոյսին, օքաններու հասանքին վրայէն բանալով իր երեւակայութիւնը ուղեկան այն հմայքին, որ կը պարուրէր իրեն համար համայնարանի ներկայութիւնը: Յետոյ, կտրէր էր փողոցը գանդազօրէն՝ բարձր կրունկներուն վրայ հասարակչուում, նայուածքը գետին, նման մէկուն, որ մշակութի լուս, խիտ կիսումթին մէջ մեծցած, աղնուայած՝ չի կրնար յարժարիլ ածապարուում, անկեդրոն, շղային բազմութիւններու կենցաղին:

Պէն Ձրանքիքի տրճանին տակ կամաց մը կանգ առաւ, քիչ մը վաւանուտ, բայց արթուն՝ թուլ պատկերին, որ շուրջը փուռեր էր ստեղին:

Handwritten signature or scribble

Յետոյ, քանի մը քայլ Հեռացաւ եկած ճամբէն ու անցքի մը բերին կանգ առաւ: Վայրկեան մը մնաց այդպէս, նայելով դետինը կացահարող աղանձիններուն, յետոյ Հոս-Հոն նստարաններուն վրայ փլած, հրկնցած մարդկային մարմիններուն, որոնք, անտեսանելի թելիքէ կախուած՝ մէյ մը թելը, մէյ մը գլուխը կամ ոտքը կը շարժէին, յանկարծ ոտքի կ'ելլէին, կը նստէին նորէն, մինչ ուրիշներ կը քալէին-կ'երթային արդէն ու թոյլ, չգիտազրոյց ողին մէջ կը կորսուէին:

Հինգ քայլ անդին պարագ նստարան մը կար: Թէ՛ յոգնած էր, թէ ալ Հաւանարար պէտք պիտի ըլլար երկար սպասել ու օտար սա վայրը, ոտքի անշարժ, առանց յենարանի՝ ինքզինք խոցելի պիտի դարձար: Իսկ եթէ նստէր՝ քունը պիտի գար, գիտէր, որովհետեւ առտուան Հինգէն ի վեր ոտքի էր, կը պատրաստուէր այս վայրկեաններուն: Անօթի ալ էր, սակայն տխրօտակ չունէր ու արդէն չէր սիրեր ուտելիք պտըացնել Հետը ու հրապարակաւ ուտել, ծամել՝ կենդանիներու պէս մարդոց աչքին նայելով: Այ իսկ սովորութիւն ունէր այդպէս Հանրային տեղ մը նստելու եւ անձանօթիներու կողմէ դիտուելու կամ նոյնիսկ շուրջի մարդիկը չտեսնել ձեւացնելու, անտեսելու: Ինք ամբողջ կեանքը մարդիկը դիտելով ու երեւակայելով, վերուձելով ու դադարնի ապրեցնելով անցուցեր էր, բայց միշտ Հեռուէն, իր առանձնութեան պատուհանէն, առանց Համարձակելու անոնց թաքուն, վտանգաւոր էութիւնը արթնցնելու ու գոհանալով անոնց ալլապան գոյններուն, բաւերուն ու շարժումներուն տուած վայելքով:

— Նստիմ, բայց շատ քիչ, յոգնութիւնս առնեմ միայն:

Նստաւ: Ա՛յ սկսած էր շուտ յոգնիլ: Չուզեց ոտքերը առաջ երկարել տղամարդոց պէս — հրիտաարդուութեան իսկ ատանկ բան չէր ըրած: Հիմա, բարակ, բարձեւ սրունքները քով քովի բերաւ, շտկեց կոնակը, վար քաշեց երկայն, գունաւոր փէշը, կարծր, գոց-կարմիր կողքով բարակ դիրք մը Հանեց կապոյտ, քիչ մը մաշած, բայց ներկայանալի պայուսակէն, գոր գոգը տեղաւորեց: Կոկիկ, ինքնաբաւ, աշխարհէն անջատ, շուրջի զանգուածէն զանազանող ուշադրաւ տարբերութեամբ կնքուած՝ տիկին Նոյնմի Հիմա դարձաւ դէպի մարդկութիւնը, զայն իր անկիւնէն դիմաւորելու, իր ուղած ձեւով ապրեցնելու իր սովորութեան, զուարթ որոշ արամադրութեամբ մը պաշտպանուած:

Աջին, ոտքերուն քով, չորս աղտոտ, գէր աղանձներ կը թափառէին, սակայն Հեռացուց նայուածքը: Չէր սիրեր քաղաքի ընտանի անասունները, մ'անատնուր ասոնք, մուրացիկ ու անբարոյական: Արագ մը շուրջը քնեց — քիչ մը անդին տձեւ մարմնով աղջիկ մը արեւու լուսանք կ'առնէր մարդին երկարած, յետոյ՝ երկու նիհար, սեւամորթ կիներ բարձր-բարձր խնդալով անցան անցքն ի վար՝ իրենց ամբողջ քրտնած, մօեղէն էութիւնը մերկացուցած հանրութեան... Գանած՝ անդին նայեցաւ — դիրուկ, կարճ տարատ, կարծիր շապիկ ու սանտալ հագած աննշան մէկը տասը քայլ անդին նստարանի մը վրայ դանդաղօրէն նստաւ, մինչ խոշոր, արտառոց մարմնով աղջիկ մը, ուշտի քայլերով դիմացի մատնադարանի աստիճաններէն վար կը վազէր, աշխարհը ցնցելով: Հեռուէն ճակըր մը կը վազէր, աւելի մօտ՝ մէջքէն վեր մերկ, անմազ, ողորկ ու վաշտող մորթով խումբ մը իրարու նմանող երիտասարդներ, Հին յունական կիսատուածներու մարմնեղէն կատարելութիւնը, ուժը, վայելքը ցուցադրելով իրեն կը մօտենային: Ո՛ւր գառնար՝ օրէնքի, չափի, գեղեցկութեան սրբազան սահմաններու բռնաբարում կար, ու զիտակցութեան բնական գնացքին ցնցումը կը խախտէր պահը:

— Փախուտ չկայ:

Սիզընական ուրախութիւնը կը պարպուէր շուրջէն, ներսէն, ու ինք

ոչինչ կրնար ընել կասեցնելու համար: Տակաւ պիտի լռէր շուրջի հետ զազ-
տագողի, տենդագին խօսակցութիւնը, պիտի հատնէին հարցումները ու ամ-
բողջ երթեւեկը մտածումներու, զգայնութիւններու, որ զինքը կը դրազեց-
նէր առտուրնէ գիշեր ու այն ատեն վրան պիտի խուժէր անձկութիւնը, որ
յաւրդար էր ժամը հինգէն մինչեւ հիմա զայսի, անխառն մտահոգութեան մը
վերածնել, մտածումներու հոտին պարտող անունի մը, անոր վեղեցիկ, խոռ-
վիչ գեժօք ցոլբին... Առանձնութիւնը պիտի զոցուէր շորս կողմէն:

Գիրքը հանեց: «Օրերի պտակը», որ միշտ ատանկ տեղեր հետը կը տա-
նէր, իբրեւ ինքնութեան, ուժի, վստահութեան աղբիւր: Երբ բացաւ, բու-
րումի անուշ զգայնութիւն մը տարածուեցաւ էջերէն: Ընթերցումին չլքե-
ւած՝ անգամ մը այ նայեցաւ ասդին-անդին: Ոչինչ փոխուիչ էր եւ իրակա-
նութիւնը, միօրինակ ու թմրած տաքէն՝ կը կոտտար: Մակայն պահը ներքին
տոկունութիւն մը առեւր էր, գիրքը ձեռքը ու անցեալի ուժը՝ դեռ հոն էր,
կրակ ու բոց աղջիկ եղած էր ժամանակին ու հոկայ խարոյկէն դեռ բո-
ցեր կը վազէին մարմնին մէջ:

— Աէ, բունս չի գար հիմա, կրնամ նստիլ:
Ու հիմա ինքզինքն էր, որ երեւակայեց ան, այդպէս դուրսէն, օտա-
րութեան ափերէն — միջազգային համայնարանի մը անանձնական պարտէ-
զին կարծր, սեւցած տախտակէ նստարանին վրայ տնծանօթ, աննշմար ու
թանկարանէն էյած կին մը, կորսուած աշխարհի մը հմայքը հաղցուցած
իր ԾՆ տարիներուն եւ որ ինքնիր մէջ կ'եփէր ամէն վայրկեան իր անձին մա-
նքը, բայց տեղեզբքը լեցնող ապրումին փաթթուած... Օհանը ողջ ըլլար՝
«հարս», կը շնչար պղտիկ, նուրբ ակունջին, մինչեւ որ օր մը օղիքը կոր-
սըւեր էին... «ամէն ինչ կը կորսուի կոր», նոյնի, ես ալ կ'երթամ կոր...»
այո, Օհան, պիտի երթար, եւ օր մը յիշատակն ալ պիտի շմայլ, ու աշխար-
հէն կորուած պիտի սպրիմ, ասոր համար է, որ այսպէս կ'ընն կը մնամ,
գեղեցկութեան սիրահար, որ չըլլա՛յ թէ կեանքը հասնի ինձմով ու աղջիկս
դայ նէ՝ ճանչնայ ինձի... Լուսարփի:

Բուր հաղի եկած էր գիտակցութեան մտկերեսին, երբ հին սարսափը
պլլուեցաւ սրտին: Անմիջապէս դուրսը ծռեց ու սկսաւ կարդալ:

Երբ զգաց, որ առանձին էր՝ բացաւ աչքերը: Գոտիկ, խճողուն սեն-
եակ մըն էր շուրջը, փայլուն գործիքներով, բաց-կապոյտ հաստ պատերով:
Ալին՝ խոշոր, կոշտ պատուհան մը, ուրկէ մեզկ, արդէն շուքերու խառնու-
ած յոյս մը կը թափէր: Ձախին՝ պարապ անկողին մը, մարուր, կոկիկ
շտկուած, տառապանքի իր մարմինին համար կազմ ու պատրաստ, գրեթէ
զուարթ, անհամբեր: Հականեխիչի հոտը, որմէ կը սոսկար, եւ որ ամէն
տեղ էր, գոյներուն խառնուած: Ու շուրջէն, դուրսէն՝ քարէ շինուած մեծղի
կատուի մը մրմրուքին նման փխրուն, անյատակ՝ աղմուկը մարդերու, տե-
սակ մը շշուկ, որ շէնքին սկիորներուն մէջէն կը թուէր քայել: Ու այս հըս-
կայ դաւաղութեան փորին մէջ, մէկ կտոր պտուկած՝ ինքը, զսպուած, ան-
դործածիչի, գրեթէ թակարդ մը ինկած, վերածուած ամբողջութեամբ ինչի՞,
ինչի՞, միայն թէ կարենար ինքզինքը գտնել՝ առանց ժամանակն ու կեանքի
նիւթեղէնը կորսնցնելու:

— Գէտք է կլլեմ հոսկէ, անպայման... անպայման:
Միայն այդ անտրամաբանուած մտածումէն ետքն էր, որ միտքը դար-
ձաւ իր վրայ: Հիւանդանոցն էր անկասկած, հինգ կողմէն բոց պատերով ու
ապակիէ երեսներով, օակայն ասիկա ոչ մէկ պատճառ էր, որ հոն մնար,
խցուած շիշի պէս սպասէր, որ կեանքը դար պինքը վերցնէր, ոտքի հանէր,

ես իր երկաթէ գիծերուն վրայ գնէր զէպի անծանօթ, խելքէ-միտքէ անդին կայարանը... Ինք ոչ ոքի կը նմանէր, գիտէր, որ իր տարիքի ու կարողութեան տէր աղջիկներէն բոլորովին տարբեր, տարաշխարհիկ էակ մըն էր, որ ո՛չ երջանկութիւն, ո՛չ դրամ, ոչ ալ խեղճութիւններու մէջ մեծութիւն, համբաւ կը հետապնդէր, ինքը բացառիկ, եղական ճակատագիր մը ունէր ու չէր կրնար ասանկ հասարակ մարդոց պէս անկողնին դամուիլ-մնալ, պէտք էր ելլէր... Բայց ատկէ առաջ հաւանաբար բժիշկը գտար: Հազիւ մտածուած ունեցաւ բժիշկին, երբ իր մէջ խուժեց զգացումներուն ամէնէն ժխտականը՝ այդ խղճակի, տղէտ էակներուն հանդէպ, որոնք կոյր որդի պէս կը հակասէին թէ՛ կեանքին, թէ՛ ալ մահուան... ունայնամիտ, ծիծաղելի... իրենց սպուշ լաւատեսութեամբ... կնիկի կակուշ մատներով...

Բայց Լուսարփի զուպեց մտածումի շղթան, որ, գիտէր, կրնար զինք ժամերով զբաղեցնել: Անհրաժեշտ էր կացութեան տէր դառնալ ամբողջութիւն: Նախ զէպք մը կար անմիջական անցեալին մէջ, որ իրն էր, իր կեանքին անբաժանելի մասը ու մտադի այդ անաւոր ժխտը, որ զինքը ճգմեր ու նետեր էր մուծ ցաւի մը խորը. բայց ինչպէ՞ս, ինչո՞ւ... Պէտք էր իւրացնէր իր կեանքը ամբողջովին, իր գոյութեամբ պայմանաւոր ամէն եղբայրիւն իրեն էր, ինքն էր կեղծորէն ամէն լսմի՛քի: Սակայն չէր եղած կեանքին մէջ մէկ օր, երբ լո՛ժիքի օրէնքէն դուրս չէր յորդած, չէր ստեղծած իր լո՛ժիքը՝ խընդաւրով ու փրփրուն երեւակայութեամբ դիտելով մարդոց շուարումը համալարանի տափակ դասախօսներէն մինչեւ արուեստագէտներու սենեակները: Ու հիմա, Լուսարփի դիտէր, թէ ինչ ճամբայ որ բռնէր մտածումը՝ այդ վայրէջ միտքն մէկ ուղի կրնար առնել տրամաբանութիւնը, մէկ լո՛ժիք կար կեանքին մէջ հիմա ու այդ ալ ուղիղ համալարանին ծառուղիին շուքերուն կը տանէր, հո՛ն՝ ուր զգոյշ, թունաւոր ու հազուագիւտ բոյսի մը նման՝ ան իրեն կը սպասէր... Երկվայրկեան մը լուկ երեւակայեց զայն — հոն էր, սպարտէղի նստարանին ծայրը հազիւ նստած, ամէն ինչէ անջատ կերպարանք մը, առանց ջրայնութիւն կամ անհամբերութիւն ցոյց տալու, արհամարհոտ, փխրուն եւ սակայն խոցելի, ինքնաբաւ ու անտարբեր՝ իր ամբողջ կեղեցկութեամբ կրկնապէս վտանգաւոր, անզուժ պրեթէ:

Դուռը բացուեցաւ:

Հասարակ, անինքնութիւն, անանձնական հիւանդապահուհի մը, որ զինքը շտեմնել ձեւացնելով՝ զլիսուն քով եկաւ ու անբեւութացաւ տեսողութեան: Լուսարփի բոլորովին անտեսեց այդ խեղճ էակը՝ զուրկ որեւէ շահեկանութենէ ու միտքը նորէն զնաց անոր, որ հիմա գաղտնի կերպով տակնուվրայ կ'ըլլար, ծառուղիին մէջ հաւանաբար գիրք մը բացած, բարակ, դունաթափ հատոր մը, մոռցուած աշխարհի մը շնչատ, արտակեղրոն արուեստագէտի մը, որու նման գիրքերու գրաւորութեան տակ անցուցեր էր իր երիտասարդութիւնն ու շափահասութիւնը, տեսակ մը զուպուած բարկութեամբ: Հիմա, քովէն հիւանդապահուհին բան մը ըսաւ իրեն, սակայն ինք ակնով չկարեց:

— Ոչ մէկ կեղեցկութիւն, ներսէն ու դուրսէն... անխելք զոհեր:

Կատէր այս տեսակ անձերը — քարտուղարուհի, հիւանդապահուհի, ուսուցչուհի ու նմանները — իրենց թոնձր, դաշտան հոտոզ մարմիններով, լաթէ շինուած հոգիներով եւ որոնք կտոր մը ապահովութեան ու քել մը հաճոյքի համար՝ պատրաստ էին կենդանի փոխուելու, ծախուելու, գնուելու... Ու հիմա՝ ձեռքը ինկեր էր այդ տեսակներուն, ազատութենէ, երեւակայութենէ գրկուած մարմիններ, մինչ ինք կը յորդէր ինքնիրմէ դուրս, զգայարանները կը ցատկէին մարմնէն անդին, կը վառէր կեանքի վախով ու սիրով... ինքը Լուսարփին, արուեստի բոցերով լուսաւոր, խարանդած...

Դուռը մեղմ գոցուեցաւ հիւանդապահուհիին վրայ, Յանկարծ լուռ-
 թիւնը զգտիլ զարձեռ էր, բայց ինք կորսնցուցեր էր հետաքրքրութիւնը
 սեննակին հանդէպ: Այն ատեն երեւակայութիւնը նորէն շինեց կնկան նի-
 ճար, նուրբ ուրուագիծը, որ հինգ ժամ դրեր էր շոգեկաւքով Պոսթընէն հոն
 դալու համար, երեք տարուան լուռ, անձկալի կարօտը կոկորդը սեղմած,
 իր դրկած հետադիրը հաւանարար դեռ պայտուակին մէջ ճմռթկուած, կար-
 ծելով՝ որ ինք Փարիզէն նոր ժամանած էր Ֆրիստելֆիա, բայց իրականու-
 թեան մէջ մէկ ամիս առաջ ձգած էր Ֆրանսան ու անցած Միացեալ Նահանգ-
 ներ՝ թէ՛ սիրտ տանող մշակութիւն պահ մը փախչելու եւ թէ՛ երաժշտութեան
 հետեւելու համար: Ու առանց երեւելի պատճառի՝ տարօրինակ ուրախու-
 թիւն մը հիմա նուաճեց զինքը. եթէ ասոյ՛լ ըլլար՝ պատուան կը վազէր ու
 կը պոսար լատիներէն տողերը Օվիտի մէկ Էոպիֆ ոտանաւորին, մինչ հոն,
 վարը, ան կը շարձարուէր, կորսուած քայքայուող ժամանակի կտորուանք-
 ներուն մէջ: Դէմքը պայծառացեր էր մէկին, ոչ ոք կրնար զինքը մեկուսաց-
 նել իր երեւակայութենէն, իր ազատութենէն, իր անձին զաշտնի ներկա-
 յութենէն:

Տարուած այս փոթորկող ու անարամբանական տրամադրութենէն՝
 ան մոռցաւ մարմինն վիճակը, ճիգ մը ըրաւ նստելու: Այլ ծոնկէն ցաւի վայ-
 րազ սլաք մը սուրաց մինչեւ ուսերը, յետոյ տարածուեցաւ կունակին երկայն-
 քին ու տիրանալով մարմնին՝ բունեց զայն իր ցանցին մէջ: Դիւանար՝ սա-
 ռեցաւ եղած անդը, յետոյ վախով ու դանդաղօրէն՝ ընկրկեցաւ ու քրտնքը
 անկտրին, շունչը սեղմած՝ անշարժացաւ նախկին իր դէրքով:

— Աստուած իմ... պիտի մեռնիմ...
 Հաւատաց իր շուկին ոչ թէ վախնալուն կամ վախկոտ ըլլալուն, այլ
 որովհետեւ մահը, մահուան զգացումը եւ մտածումը իր կենսաբնի մտնէն
 մտերիմ, մնայուն պարուսները եղեր էին ու որքան շուրջը առաջօրէն թափ-
 ւած աշխարհի հոտերը, գոյները կամ պարզ գոյանութիւնները զինովցուցեր
 էին զինքը ամէն քայլափոխի, որքան երաժշտութեան անձնատուր՝ փախեր
 էր իրականութեան ծանրութենէն՝ այնքան վախը շատցեր էր մէջը, թէ ե-
 դածը իսպ մըն էր, երազի պէս բան մը ու մահը պիտի գար զինքը յանկարծ
 արթնցնելու՝ դեռ սիրոյ համն իսկ չառած...: Իրմէ անկախ՝ տառապանքը
 հազար ձեւով միշտ ծներ էր իր հրճուանքներու սրտէն իսկ, բա՛ն մը՝ որ ինք
 իր հայկականութեան, հայու ողբերգութեան վերագրեր էր, մանաւաղ ու-
 սանոգութեան տարիներուն, նախ՝ Հոռոմ, սպանացի արուեստագէտին հետ,
 որ երկու տարի խնթի պէս պաշտեր, նկարեր ու կերակրեր էր իր կարտպի
 մարմինը, գիշերներով լացեր էր իր անմատչելի, անհասկնալի գեղեցկու-
 թեան առջեւ, սակայն չէր կրցեր նուաճել ոչ իր սրտին, դեթիլ աղջկնու-
 թիւնը, ոչ ալ զազանի անձը, որ կ'ապրէր կծկուած, ապաստանած իր կա-
 տարեալ առանձնութեան հրուանդանին ծայրը... մինչ սիրտը կը թփրտար
 վախէն, անապահովութենէն, սիրոյ ու մահուան սպասումէն: Յետոյ՝ Փա-
 րիզ, նոյն փնտրուողին հալածական՝ այս անգամ ինքզինքը նետելով գրող-
 ներու, բանաստեղծներու եւ պզտիկ փիլիսոփաներու աշխարհին մէջ, Քար-
 թիէ Լաթէնի շուրջ, բայց նոյն ատեն անոնց ձեռքերը, շրթունքները ու մա-
 նուանդ՝ բռները զսպելով, որպէսզի ասոնց ետին անցնէր ու գտնէր զինքը
 կրծող առանձնութեան, վախերուն ու անձկութեան նման բովանդակութիւն
 մը, զէթ ծարուր բովանդակութեան, որմէ արուեստը կը բխէր, ըստ իրեն:
 Ձախողէր էր, առանց սակայն գլջալու փորձած ըլլալուն համար, ի վերջոյ,
 մէկ տարին քիչ էր, թէ բաւարար՝ հասկնալու, թէ առանձնութեան, ինք-
 նաբաւութեան տուած ազատութեան զգացումը պատրանք էր լոկ եւ թէ՛
 կըր փորձն դուրս փախչիլ այդ առանձնութենէն, անձին ծածուկ, յանցաւոր

մտերմութենէն իրեն հետ, վար ցատկել գիտակցութեան բանտերէն՝ յանկարծ ինքզինքդ մերկ կը դռնես ու այն ատեն սովահար, ամբոյններու ճիւղանը կ'իջնաս ու քեզ կը շահագործեն, կը ծաղրեն, կը... Բայց սէ՛րը — ոչ իսկ Արտաշէսը, այդ տաղանդաւոր քերթողը, որ Հայաստանն ու ընտանիքը լքեք էք՝ իր ետեւէն դալու համար ու սիրային բանաստեղծութիւններու ամբողջ հատորի մը ձեռագիրը այրեք էք, իր սիրտը բանալու համար՝ կըրցեք էք բովանդակել:

— Մահուան շատ մօտ պիտի կայնիս, որ կեանքը իրապէս ապրիս, Արտաշէս:

- Ձեռ հասկանում:
- Հասկնալիք բան չկայ. զդացում է սա, զգացում: Մի տրամաբաներ, մի հասկնար, բանաստեղծ ես, պէտք է դիտնաս ինչ կ'ըսեմ:
- Ի՞նչ ես ուզում սաել:
- Ձեռ գիտեք... ո՛չ, մի մօտենար, հեռու կեցիր... հոն, ատանկ, քեզմէ անդին, դուռնէն դուրս, փողոցի միւսին մէջէն, մտելով, անօթի, ազգատ... պիտի չզարնաս ինծի, որ կարենաս մէջս նայիլ...
- Մեռցնում ես ինձ, Լուսարփի:
- Հարկա...

Երբ հանդարտեցան ջրղերը, դպաց, որ չոր էր բերանը, սակայն չուղեց հիւանդապահուհին կանչել: Աչքը պտտացուց ամալի սենեակին մէջ, փորձելով միտքը պահ մը պարպել ամէն մտածումէ ու յուզումի տակաւ բարձրացող այլբէն: Կարելի չեղաւ — հոն էր ան, դաժան տրամաբանութեան մը ծայրը կայնած, այդ կինը, որ զինքը սպասեք էր մանկութեան սանդուղիներէն ի վեր՝ ամէն օրուայ սկիզբն ու ծայրը, իր աչքերուն ու մորթին մէջէն բուսեք էր, իրմով սնանեք էր մօտէն, հեռուէն, լրտեսի մը պէս, նոյնիսկ՝ երբ մեծցեք էր, Փարիզի մէջ իր հեռաւոր յարկաբաժնի լուսամուտէն քաղաքի տանիքներու վրայէն ու պաղէն, առանձնութենէն հաւանաբար զոգալով, բաց անոնայ զինք փնտռելով, սլացիկ, գորշ շուք մը, որ վռնտեք էր իր տարիքոտ, շէն, բայց միամիտ ամուսինը, որ հազար ճիւղ կը թափէր երեսասարդ երեւալու ձեռքերով, աչքերով ու կեղծ մազերով, ու երբ կատակները շատ մօտեցեք էին իր մարմնին՝ մայրը ճամբու դրեք էր, օ՛հ, ինչ մեծ հաճոյքով, կատաղութեամբ...

Գիմացի պատին նայեցաւ ու նոր տեսաւ ժպտուն, վարդազոյն այտերով երեսայի մը նկարը՝ փակցուած օրացոյցի մը վրան, որ քեզ մը ծոած էր գամին վրայ: Նկարին տակ բաց-կանաչ բաղկաթոտ մը կար: Նայուածքը փախաւ պատահանին, ուր երեկոյեան մեղմ մթութիւն մը սկսեք էր տեղադրուել, յետոյ գնաց դուռ ու ետ եկաւ ծուռ օրացոյցին:

- Ապուշները:
- Անզգալարար ծունկը շարժեց, որ ելլէր պատկերը շտկէք: Այս անգամ ցաւը չզարկած՝ անշարժացաւ:
- Ի՞նչ էք եղաւ ինծի...

Հարցում չէր, ոչ ալ կասկած, այլ ցանկութիւն մը իր մտղէն, ծանր բաժինը հեռու պահելու իր անձէն...: Մարմինը որեւէ մէկ ատեն լուրջի չէր առած ինք, չէր ուզած, որ իր իմացականութիւնը զբաղեցնելու շտի կարեւոր ներկայութիւն մը դառնար ան, ո՛չ թէ աղտոտ, ամօթալի կամ տղել բոն մը ըլլալուն, այլ որովհետեւ չէր գիտեք ի՞նչ ընէր, ո՛ւր դնէր ատիկա, ինչի՛ կը ծառայէր՝ երկվայրկեանական հաճոյքներ տալէ դատ: Գեղեցկութեան դատուանդան մը, շատ-շատ, զգայնութիւններու զործիք մը, որ իրը չէր, ուրիշէն առնուած, սեղէ մը գտնուած բան մը, պատահականութեան մը ան-

իլուստֆիլի արդիւնքը, մահուան շօշափելի ներկայութիւնը: Լաւազոյն պարագային՝ պատնէշ մը, մարդոց դէմ:

— Ի՞նչ եղաւ... արկած էր, այո:

Փորձեց երեւակայիլ վարը, փողոցը, յաւիտենական անհատնում ներկայութիւնը մարդկութեան, որ իր ճամբան կը գոցէր եւ որմէ չէր կրնար փախչիլ: Ո՛ւր դառնար՝ մարդիկ իրենց յիմար օրէնքներով, պահանջներով, ճղճիմ ու ասպարիտ կայծեր, որոնք կը ցատկոտեն պարագայ զանկերու մէջ Նալաձեղով խարուսիկ գոհացումներ, որպէսզի ճաշը լափեն, թերթը կարդան, ասոր-անոր խօսին, զերուին, պակին, պրկուին մերկ ու տգեղ...: Անիլուստֆիլի էր թախումը իր ու անոնց միջև: Յետոյ տեսաւ իր նուրբ, թափանցիկ, Հաւասարակշռուած մարմինը հեծանիւին վրայ, իր յարափոփոխ, վերանցիկ, գունագեղ ինքնութիւնը, տեսակ մը լուսապսակ, զոր ոչ ոք կը տեսնէր իրմէ զատ: Ոչ իսկ ան...: Չորս կողմը սակայն մեքենաներ, աճապարող մարդիկ, որոնք չես գիտեր ինչ գործ ունին մէջտեղները իրարու նման իրարու ետեւէ՝ մայթերու աղանձիններուն սկէս եւ, միւս կողմէ՝ ամէն կողմէ զաղաքին ազմուկը: Չեսթնաթ փողոցի վրայ խառնուած երթեւեկին, որուն կը փորձէր վարժուիլ ամիսէ մը ի վեր, որ հոն էր ետին ձգած Նորմանտի լեռներուն խորը թաքնուած Գարմէլիթներու վանքը, ուր երեք շաբաթ անցուցեր էր՝ շտեմնելու համար Արտաշէսը դեփ-դեղին պակած հիւանդանոցը ու հարցնելով առանձնութեան մէջ իրած իր գիտակցութեան, թէ ինչպէ՞ս կ'ըլլայ, որ մարդիկ սիրոյ համար կը մեռցնեն կամ կը մեռնեն...: Արկած էր:

— Գեղարկաներուն արկած չի պատահիր... ասիկա միայն հասարակ մարդոց համար է... դուն տարբեր ես... ասոր համար է կը զողոզողամ վերադ... իմ արուեստի գործս ես...

Բայց չէր կրցեր վարժուիլ ամերիկեան կեանքին: Ո՛չ Սըրբուս փողոցի իր սենեակին, ոչ ալ պատուահին տակի փողոցին, որուն ուսանողական բընակչութիւնը, մկանները, ծանր դիրքերը ու թանձր եսականութիւնը շալկած՝ երջանիկ ուղտերու կարաւանի մը սպաւորութիւնը ըրեր էր իրեն: Այդպէս էր, որ կը փախչէր անոնցմէ, հեծանիւր նստած, աչքը ծառերուն տակի տերեւներուն խլրտուն շուքերուն, կարմիր սալակներուն վրայ ինկած ու խաղալով, մինչ ամէն կողմէն կը շարժէին մարդիկ բուսային էակներու նման ու ճիւղալայն բռնակառքերը իրենց դիւցազներգական կերպարանքը կը հրէին գիտակցութենէն ներս, մինչև որ այդ հսկան յանկարծ իր վրայ դարձեր էր թովնափ փողոցէն...

— Ո՛չ, արկած չէր:

Դուրսէն ազմուկ մը ցնցեց շիղերը: Սթափեցաւ: Սենեակը, ամայի, դեռ բունէր էր զինքը: Օրացոյցը հոն էր, ծուռ ու դռնակի: Ամէն կողմ օտարութիւն, ոչ մէկ յոյս կեանքը, իր կեանքը շարունակելու իր ձեռով կամ նոյնիսկ սկսելու տեղէ մը, առանց դուրսէն դալիք եղիլութեան մը, անձի մը, արտակարգ վայրկեանի մը: Բայց գոնէ իր առանձնութիւնը իրն էր: Ու ճիշդ կեղբունը ասոր, հո՛ն՝ ուր ինքը պէտք էր ըլլար, ուրիշ մէկը կայներ՝ կը սպասէր իրեն:

Քիչ մը հեռուն ծեր կին մը, ով գիտէ ինչպէս մոլորած այս կողմերը, պաւազանին կոթնած՝ կայներ էր անցքերու խաչածեւումին ու շորս կողմը կը քննէր: Բարձրերէն, տեղէ մը, ժամացոյց մը ժամը սկսաւ դարնել: Հաշուեց հարուածները, քիչ մը մտացիր, սակայն վայելելով կլոր բրդոտ սարդի նման ինկող ձայները մէկ-մէկ — վեց:

— Ինձի նայէ, լուս նայէ, ձեռքերովդ, աչքերովդ նայէ, և ուսարփի, որ հասկնաս :

— Գուն հատեր-գացեր ես, ալ ի՞նչ նայիմ, ինչի՞ դ :

— Կեանքի մէջ բանի մը պիտի կոթնիս ի վերջոյ, շեւ կրնար ասանկ հովուն պէս...

— Խրատ մի տար ինձի :

— Կեանքի մէջ լոժիք մը կայ, ոճ մը կայ, ամէն ինչ երեւակայութիւն չէ :

— Ի՞նչ լոժիքէ կը խօսիս կոր ինձի :

— Մի պոռար, խուլ չեմ :

— Ինձի մի ըսեր կեանքը ինչ է, պէտք շունիմ զու կամ ոեւէ մէկուն իմաստութեան, ես պիտի գտնեմ ասիկա, ես պիտի դնեմ օրէնքն ալ, լոժիքն ալ՝ եթէ պէտք է... իսկ եթէ պէտք չէ՝ հոյսակաւ բան, ոչինչ կը փոխուի... դուն զու անկիւնիդ՝ ես ալ իմ ճամբաներու վրայ...

Ծեր կիներ նստեր էր: Ինքն ալ հոս հասեր էր, հասցուցեր էր իր ժամանակը մինչեւ այս կէտը հրելով, քաշելով, յուսուլով, որ ծայրը իմաստ մը կ'ըլլար, որ պիտի արժեցնէր այսքան հիշ ու անձկութիւն: Բայց եթէ չըլլար իսկ՝ անոր գոյութիւնը պիտի բուէր, որ փութթուէր անոր մերկ, ջինջ դեղնակոթեան, անոր ազնկայ անմեղ, անխառամ ու անզուգական հոթեան, քերթուածի մը պէս վերայական ու իրական նոյն ատեն:

Գոցեց գիրքը: Կոստան Ջարեանի քերթողութիւնը թարմ, երիտասարդ համ մը ունէր ժամանակին, որ կը սիրէր: Գրաւիչ ԱՅՈՒՆՈՐԱՄ մը, երեւակայութեան շօշափելի մերկութիւնը կար, տեսակ մը հոթիք ապրում մը: Ինչո՞ւ ատեր Գոթթեմէն հետը բերեր էր: Երեսուն տարուան յիշատակները, իր ազնկանութեան փոթորկոտ օրե՞րը ետ պիտի գային: Խնդաց քերթին տակէն:

Այն ատեն նշմարեց՝ ինչպէս ուսանող մը եկիր էր նոտարանին վրայ, իրմէ երեք ոտք անպին նստեր՝ աղանձիններուն հացի փշրանք կը նետէր: Նախ ուղեց ոտքի ելլել ու երթալ, ջղայնացած այդ կեղծ զղացումներէն՝ մարդէն զէպի անասուն ու ետ: Սակայն չշարժեցաւ ու աչքին պոչով նայեցաւ տղուն — ամշկոտ, զոյց մէկը կը թուէր ըլլալ, լուրջ ու տխուր արտայայտութեամբ: Յետոյ նայուածքը զնայ ծառերուն: Տաքը կը փակէր մորթին, ծերութեան պէս կը կտրուէր վրայէն:

— Ուշացաւ, կէս ժամ ուշացաւ...

Նորէն յիմար վայրկեաններու փշրանքները, մարդ մարդու կապելու շնչին ճիւղերը կը ջարդայէին կեանքի ամբողջութեան զեղնեղնութիւնը, աշխարհի ու իր միութիւնը: Այս տարեքին հասած՝ Նոյնմի պիտի ուզէր, որ կեանքը բանաստեղծական որակ մը տանէր վերջապէս, կտրուէր առօրեային պարպայական զէպերէն, կէս ժամ ուշանալէն ու կէտորտան տաքէն, պիտի ուզէր, որ զեղնուէին կեանքէն ու մարդկութենէն իր անկաշուութիւնները եւ ինք ամբողջութեամբ հնազանդէր իր ներքին վիճակներուն, պիտի ուզէր, փողոցէն անցած ատեն ո՛չ ցուցափեղկերուն եւ ոչ ալ երթեւեկին ուշադրութեան ընէր ու, անտարբեր չուրջի ետուղեովին՝ ջուրը յուշերու կակուղ գորգերուն վրայէն, արձազանգներու երկրաշարժութեան մը մէջէն, որպէսզի իր էութիւնը կեղծանար մէկ ու միակ էակի մը վրայ, իր գեղեցկագոյն ստեղծումը, իր զլուխ-գործոյը: Բայց այդպէս չէր ըլլար ու հակառակ անոր, որ մարդիկ անորոշ կերպարանքներ էին ատանց խորքի, բովանդակութեան կամ նշանակութեան՝ միշտ իրեն հետ զգացական կապեր կը ստեղծուէին, որոնցմէ ոչ մէկ մնալուն զոհուանակութիւն կը ստանար ինք: Մէկէն իր ձայնը լսեց իրմէ անկախ:

- Ուշացաւ :
- Ո՞վ ուշացաւ :
- Աղջիկս :

Նոյեմբին այնպէս թուեցաւ, որ բեմի մը վրայ կը գտնուէր ու դեր մը կը խաղար, որուն հետ կապուած էր քովը նստած երիտասարդը, որ առաջ ծոփեր էր, էր կողմ դարձեր՝ առանց աղանձներուն կեր տալը դադարեցնելու: Ծանօթ էր անոր դիմապծին հակառակ անոր, որ շին ճանշար դալն, չէ՞ր լսած առաջ անոր ձայնը, որ երկու բառ ըսելէ ետք՝ լսած էր ու կը թուէր սպասել, որ ինք նոր բան մը ընէր կամ ըսէր էր աղջկան մասին: Հիմա, ուսանողը իրեն իսկ չէր նայեր, բայց դեռ կար սպասումը ո՛չ միայն տղուն, այլեւ՝ աշխարհի մէջ...

— Եկե՛ք եմ կը կարծէ...

Սև յիշեց այդ տարիքս, ջղուտ, տունէ դուրս դրուած ու փախուկ կիները, առ հասարակ աղքատ, բայց երբեմն շատ ալ ներկայանալի երեւոյթով, որոնք օրօքսիւսի կայաններուն, սապուէյին ու յաճախ փողոցին մէջ մէկէն կը սկսէին բարձրաձայն խօսիլ, պոռալ, նոյնիսկ կռիւ ընել անտեսանելի թշնամիի մը հետ եւ որոնց մարդ կարեւորութիւն չէր տար ու այնպէս մը կը ձևացնէին, որ գոյութիւն իսկ չունէր թշուառ կիներ: Ինքը միշտ վատով, ակնածակեղով նայեր էր անոնց ու անգամ մը նոյնիսկ փորձեր էր խօսիլ մէկուն հետ, հասկնալ տէրտը, համոզել: Պատաւը երեսին խնդացեր էր՝ առանց գիներ տեսնելու եւ շարունակներ էր պոռչաւորը:

- Ինչպէ՞ս եղաւ, որ մինակս խօսեցայ :
- Ձախ դարձուց գլուխը ու տղան իրեն կը նայէր :
- Ոչ, խենթի տեղ չի դնեք գիս :
- Առջին, դեռինք կաղ աղանձի մը կար, որ յանկարծ վար փլաւ ու այնպէս մտաց: Ուսանողը իր բարակ մասներուն կը նայէր :
- Կը սիրէ՞ք երաժշտութիւնը :
- Ի՞նչ :
- Կը սիրէ՞ք երաժշտութիւնը :

Նոյեմի շահակցաւ ինչ կաղ կար երաժշտութեան, իր աղջկան ու սըղուն միջև, որուն գլուխէն անդին երկու հոգի կու գային, մէկը նորածին մը գրկած: Գեանէն՝ փլած աղանձին իրեն կը նայէր, գլուխը ծռած: Գիմացի նստարանին երկու կին քիթ քիթի կը խօսէին: Ամէն ինչ շուրջը կը դաւէր, որ բացուէր իր լեզուն, քակուէր, թեթեանար ներսի խճողումը, վատերու եւ անմկութեան թնճուկը, հաւանաբար այդ փոխակիներու նման:

Մտածումը հաղիւ եկաւ՝ ու արդէն Նոյեմի կողմէն էր իր ներսի դուռները: Մէկ վայրկեանէն միւսը մոռցաւ տղուն ներկայութիւնը: Եթէ լուսասարփի պիտի չգար՝ ինչո՞ւ նստիլ հոն ու խօսիլ այդ մասին, ինչո՞ւ ասան գիտել աչքի պոչով, մարդոց մէջ մարդ ըլլալ, բնութեան ու շէնքերու միջև ինկած մաշող գեղեցկութեան մը կերպարանքը առնել: Ի՞նչ կ'արժէր ապրիլ՝ եթէ չկար սպասել մը վայրկեանէ վայրկեան՝ յուսալով, որ կեանք կոշուածը պիտի ի վերջոյ ամբողջանար, կատարեալ դառնար: Երիտասարդութենէն ի վեր այն ապրումը ունեցեր էր, որ աշխարհի մէջ ամէն ինչ իր տեղն էր, լի էր ինքնիրմով, բացի մէկ բանէ — չկար նշանակութիւն, չկար իմաստ: Ու հազար ձևով փորձեր էր ինք տալ այդ նշանակութիւնը, սկսելով իր առանձնութենէն մինչև մահուան վախը, մինչև անանձնական, անըմբռնելի, չէղք, անտարբեր տուտուած մը, որու զաղափարով քանի մը անգամ հարբեր էր, մինակը: Անշուտ, շատ բան Փարիզի համալսարանէն բերեր էր, որոշ արհամարհանքով մրն ալ նայելով ցիր ու ցան հայերուն, որոնք դորդ նորագլուխ ու աղմուտ մոռցիկներ զուճարելով՝ կը քաշկոսուէին քսաներորդ

դարու խոհանոցին ջովերը, մինչ ինքը իր ինքնութիւնը ունէր, իր միտքը, արուեստներու եւ փիլիսոփայութեան հնոցին մէջ եկած...: Մէկ բան սակայն զինք կը կապէր այդ հայկական գեոնաբարը բազմութիւններուն — Լուսարփին, որուն արդիական դաստիարակութեան ու յետոյ ազատ, նուրբ մտածողութեան, կրթութեան համար տուեր էր իր սննդած-չուննցածը, առն ու էրիկ, բարեկամներ ու պատիւ, սէր ու երջանկութիւն...: Մէկ էր իրենց ճակատագիրը, հայութիւնն ու մարդկութիւնը համադրած՝ գերազանց իտէալի մը նման...:

Այսպէս էր, որ երեք տարուան բացակայութենէ հաջ, իր զակին վերադարձը եւ իր գիտակցութեան գերկը՝ փոթորիկ ստեղծեր էր իր մէջ: Անոր հետ քիլեֆալով չէր խօսած, որպէսզի առաջին հանդիպումը պահէր իր ամբողջ բուն թարմութիւնը ու անակնկալ ապրումին ուժը. ո՛չ ջրով, ո՛չ ալ բարեկամներուն լուր տուեր էր ու առտու կանուխ մեկնելով Գոսթընէն՝ հասեր էր Նիւ Եորք, որուն պողոտաներուն երկայնքով պտըտեր էր ժամեր անընդհատ, անտարբեր՝ մարդոց ինքնութեան, բայց բոլորովին մերկ անոնցմէ եկած զգայնութեանց դուռանքին, անձկալի ուրախութիւնը թեթեւ-ցուցած էր մարմինը, զոր զրկէր էր ամէն տեսակ հանգիստէ, ուսելիքէ, որպէսզի շատ աւելի մօտ ըլլար ապրումին: Մինչև ետ շողակառք նստելը դէպի Ֆիլատելֆիա, ճամբորդութիւնը ուխտազնացութեան մը բնոյթը տներ էր, մտատանջ ու սրտատրոփ, այտերն ու ականջները բռնկած՝ անկարող միտքը կեդրոնացնելու գոգը դրած բաց գրգռի վրայ ու պատահանէն դուրս սուրբացող տեսարանին անձնատուր: Բայց մեծագոյն յուզումը կապուած կը մնար վերադարձի վերջին կէտին, հանդիպումի անստղիւտ պահին, սրբահարու գիրկընդառնումը ծառի շուքին, որուն պիտի յաղորդէր զանդաղ, բայց անդիմազրելի խաղաղութիւնը, որ կը լեցնէր զինքը, երբ կը զանէր, կարճ ժամանակի համար, իր գոյութեան ապահովութիւնը Լուսարփիի անմիջական ներկայութեան:

Քոյվը նայեցաւ — ուսանողը ե՞րբ մեկնէր էր: Այսբան սպասուճէ ետք չէր կրնար չլսել, այսպէս անիմաստ էր ամէն բան, մէջն ըլլալով անոր գոյութիւնը, որ իրմէ հետու պիտի զրկուէր ինքնութենէ ու վերածուէր սա դունազեղ, թափառիկ ուրուականներուն, անպէտ ծաւերուն ու տղեղ շէնքերուն: Բայց դեռ իմաստ կար շուրջը, կեանքը անսպասելի կը հոսէր մէջն ու պիտի յորդէր իրմէ դուրս ամէն թոյլէ եւ նոյնիսկ եթէ Լուսարփի անորամարանական, արուեստագէտի բնակարանութիւն ունէր իր հօր նման՝ ինքը մայրն էր ու կրնար փրկել կացութիւնը: Գաղտնիքը իր ջոյն էր:

— Ես ստեղծեցի զինքը, ինձմէ կ'առնէ իմաստը... իմ գործս է ան, պէտք է ետ ինձի գայ, պիտի գայ, անշուշտ:

Ուրախութիւնը, վայելելի ակնկալութիւնը կը խլրտէին մէջը, շուրջը: Իր սպասումը նորէն նշանակութիւն պիտի առնէր, միայն թէ գար, գար, դա՛ր...: Ձեռք առաւ գիրքը, բացաւ որեւէ տեղ, բայց կարելի չեղաւ կեդրոնանալ: Եթէ միայն վստահ ըլլար, թէ Փարիզը չէր աւրած անոր կեանքի ինչ բովանդակութիւնը, գիտնար, թէ անոր աչքերուն մէջ գեղեցկութեան, մաքրութեան բոցը դեռ վառ էր...: Ինքը՝ որ իր ամուսինը զոհեր էր անոր պիտին, վճռուէր էր գայն, որպէսզի իր Լուսարփին միայն մէկ, մաքուր ապակէ, մէկ առողջ արմատէ ուժ առնէր մնալու համար ազատ, անբիծ ու արթուն — ի՛նքը, ո՛ր հասեր էր ինքը: Ոչ մէկ տեղ ու ոչինչ, փոխուած էր սկիզբէն ի վեր, նոյն շուրջպարը տիեզերքի ու ատոր կեդրոնը՝ ինքը ու Լուսարփին ծնունդը, մանկութիւնը, աճիլը՝ առանց սակայն մեծնալու, նոյնիսկ կ'ըր շրջանաւարտ կ'ըլլար Ֆրանսական Լիւսէն, սլացիկ հասակով, հանդարտ, խորունկ աչքերով, այնպէս՝ ինչպէս ինք երազէր էր տարիներով՝

Անշուշտ արկած չէր :

Ո՛ր չիմա, ոչ ալ առաջ : Ինչ որ պատահած էր Գահիրէի յարկարած-
նին մէջ ութ տարի առաջ, երբ ինք դեռ 14 տարեկան շէկնող, անխորձ ազըը-
նակ մըն էր՝ մարդկային շատ սովորական տեսարան մըն էր — հայրը գե-
տինը ծունկի եկած, մէկ ձեռքով շէկ մը բռնած, միւսը բարձրացուցած ժօք
փէշերն ի վեր, լաւով, պաղատելով՝ որ եղածը պարզ արկած մըն էր, կամ-
քէն անկախ, բախտի խաղ մը, արկածի զոհ մըն էր ինքը ու ալ պիտի չը-
կըրկնուէր որքան որ ապրէր, առաջինն ու վերջինն էր, ա՛լ ուրիշ ոչ մէկ
կնկալ երես պիտի նայէր, ոչ մէկ օտար մարմին պիտի բռնէր մինչեւ մեռ-
նիլը...

- Արկած, ի՞նչ արկած :
- Ատուած վկայ, Նոյեմի, արկած էր :
- Արկածը էշերուն կը պատահէ :
- Այն ատեն ես էչ եմ :
- Ոչ, դուն էչ չես, Օհան, ժամանակին դուն դաւակն հայրն էիր, իմ
ալ ամուսինս էիր, կը յիշե՞ս :
- Այո, այո... չիմա ալ եմ, էրիկդ եմ... միայն ձգէ, որ ռաքի ել-
լեմ :
- Ո՛ր :
- Նոյեմի, ազնկանս առջև զիս մի ոչնչացներ, մեղք եմ, անոր ալ
մեղք է... կը զղջաս օր մը, հաւատա՛ :
- Ատոր մասին առաջ պէտք էր մտածէիր, չիմա ուչ է : չիմա պո-
տիժի ատենն է, պիտի վճարես :
- Ինչե՞ր կ'ըսես կոր, ի՞նչ պատիժ :
- Այո :
- Ամբողջ կեանքս քեզ սիրած եմ, մէկ անգամ մը սխալ բան մը ըրի
ըսելով...
- Ձեռ հասկնար կոր, Օհան, լմնցած հարց է : Գլուխդ կ'առնես-կ'եր-
թաս :
- Ո՛ւր, ո՛ւր կրնամ երթալ :
- Ո՛ւր որ կ'ուզես, ՌէնէՅՅէ՛մ :
- Գո՛ւն, Լուսարփի՞ն :
- Մինք մեր գլխուն ճարը կը նայինք, ե՛լչ հոգ մ'ըներ... ա՛լ մեր
հետ գործ չունիս... արուեստագէտ մարդ ես, ապրում, ներշնչում, տա-
ռապանք կ'ուզես — առ քեզի տառապանք :
- Իբաւունք չունիս :
- Ունի՛մ... ես պէտք է դաւակն ու զիս պաշտպանեմ, մա՛նաւանդ
դաւակն... պէտք է զայն պաշտպանեմ տղեղ բաներէ ու անբարոյականու-
թիւնը էն առաջ տղեղ, տղեղ բան է, անանկ որ...
- Բայց...
- Բայց-մայց չկայ, զիչեր բարի, քալէ, Լուսարփի :
- Նոյեմի, Լուսարփի... եկէ՛ք... մի՛ լքէք զիս...

Անշուշտ, ինք չէր լքեր զինք, երբեք, մա՛նաւանդ այդ վերջին ահա-
ւոր տեսարանը, դատին ինկած, սողալով, պաղատելով, որ զինք չլքեն :
Երկու ամիսէն արդէն քայքայուեր էր ու առտու մը, զինովութեան ծայրը
հասած՝ տուն բերեր էին օտարկանները, մէկ շարթուան ժօքուքով, վրան-
դուխը ցերի մէջ, շիշը գրպանը խոթած : Տեսեր էր զինք, աստիճաններուն
վրայ, ճիշդ այն ատեն, երբ իր վալէի դասին կ'երթար Մառամ Լուվէնի քով
ու չէր ճանչցեր զայն... Միայն վայրկեան մը ետք, փողոցը քալած ատեն,

յանկարծ անդրադարձեր էր, թէ հայրն էր այդ գետին նետուած մարդը: Վայրկենան մը մտածեր էր ետ տուն վազել, դրկել զայն, արթնցնել ու հետը խօսիլ... Իր բարի, խելոճ, անվնաս, բանաստեղծ հայրը, որուն կեանքին միակ քաջ, անկախ արարքը գինովնայլը եղած էր... եւ ուզած էր զարնել մօրը, պոռալ երեսին, թէ ինքն էր պատճառը, որ հայրը տուն չէր դար, ո՛չ ուտելիք, ո՛չ նստելիք, ոչ ալ հանգիստ կար, միայն լաթի, թուղթի, գիրքերու լեռներ շորս կողմը, դաշնակի ձայն, կեղտոտ խոհանոց ու տակնուվրայ սենեակներ...: Ու փոխանակ էրիկ մարդիկը արհամարհելու կամ աստելու՝ ինչ որ մօր նպատակն էր հաւանաբար, երբ հայրը դուրս դրեր էր՝ ինք վախցիր էր կեանքի անմիջական շփումէն ու հեռացեր էր մարդոցմէ, անոնց շունչէն, ափերէն ու լեցուցիչ էր աշխարհը գուժով՝ անկարող սիրոյ պարզ ու բուռն սպրումին:

Տկար մարդ էր հայրս... Խելքը-միտքը ողջ մնալ էր, դրամ չիներ, անուն չիներ, լալիան երեւակայական ստանաւորներ գրել, սէր մտրալ... ով գիտէ լու ալ չէր...

Այնպէս որ, անհետացեր էր, դացեր Սուրիս, հաւանաբար զիւրի մը մէջ վարժապետ եղեր ու յետոյ կորսուեր էր: Ու մնացեր էին ինքն ու մայրը, տան խճողուն պարապութեան մէջ, հեռուէ հեռու իրարու կառչած ու կեանքը թաւալեր էր քանի մը տարի ալ, սէր, թշուառութիւն, ատելութիւն, զառնութիւն ու արուեստ իրարու խառնած, մինչեւ որ Աթէնքի մէջ, ամբասն արձակուրդին, քաղաքներու բազմութեան մէջէն անջատուելով՝ պոսթընցի հայը մտեր էր իրենց կեանքին մէջ: Այդ զարհուրելիօրէն հասարակ, անչանեկան արզահատելի մեծահարուստը...

Բուռը բացուեր էր ու ճերմակ համազօքեստով, շիկահեր, ակնոցաւոր, լեցունեկեկ երիտասարդ մը կայներ էր մէկ քայլ անդին: Հիւանդապահուհիին քովը կեցեր էր: Իրեն կը նայէին:

— Հէլօ, ինչպէ՞ս ես:

Կէս-լուրջ, կէս-զուարթ ձայնը ս"ր լսեր էր ասկէ առաջ ամէն կողմ: Երիտասարդը կը ջանար բժիշկէ հովեր ասնել:

— Ո՞վ էք դուք:

— Նախահնամութեան ձեռքը:

— Պարապ խօսք:

— Իրաւունք ունիս:

Կարճ լռութիւն մը: Բայց դերասանութիւնը շարունակուեր էր:

— Պարզապէս քու բժիշկը: Եկայ նայելու, թէ ինչպէ՞ս ես այս առտու:

Լուսարփի գլուխը անդին դարձուց: Կը ճանչնար այս մարդիկը, իրենց կեղծ զուարթութիւնը, շինծու բանգիտութիւնը, մէկ ծայրէն մեւսը սովորական, յուսկնոտ, խելացի շունչանորդիներ, որոնք մակարոյձի պէս իր մարմնին միջոցաւ անձնական ճակատագիր պիտի շինէին: Յետին մասվաճառն անզամ աւելի գունազեղ էր, քան սա մարդը:

— Տեղ մը ցաւ ունի՞ս:

Գլուխը շարժեց: Պատուհանէն անդին մութը կոխեր էր:

— Փորձեցիր շարժիլ:

Նորէն դուխով նշան ըրաւ:

— Ես քու տեղը ըլլամ՝ քանի մը օր բնաւ չեմ շարժիր տեղէս: Բաւական լուրջ է ծանկին սակորին կոտորածը: Ձեռ գիտեր անշուշտ, բայց ես էի, որ փակցուցի սկզբները:

Յետոյ դարձաւ հիւանդապահուհիին ու բաներ մը ըսաւ: Ինչո՞ւ ինքը այսքան լեցուեր էր սա խեղճին դէմ: Ի վերջոյ, եթէ ինքը հոս չըլլար՝ ան ալ

պիտի չկրնար իր սենեակը դալ ու ինքզինքը իր մտերմութեան սահմաններուն դնել: Հետը խօսելու իրաւունք ունենալ: Յանցաւոր չէր մարդը, իր ուզելովն էր, որ հկած էր քովը ու հիմա ինքզինքին Նախախնամութեան Ձեռքի Երեւոյթ կու տար: Ենդալը եկաւ: Ետ մարդուն նայեցաւ:

Բացեր էր վերմակը ու կը քննէր դաճէ սարքուածը ալ սրունքին վերայ: Լրջացեր էր արտայայտութիւնը, նայուածքը սրեր էր: Աղուոր դէմք մըն էր, քիչ մը շատ աղուոր:

— Ի՞նչ գիտէ առիկա կեանքի մասին, տառապանքի, երջանկութեան, ցաւի մասին... Գիշերները՝ նաւահանգիստի գոբհերրուն մարդիկ զիրար կը մորթին, հարուածները խոնաւ, կարծր, անարձագանգ կը մխրճուին հում մարմիններու մէջ ու ճիչ անգամ չ'ելլեն, մատներ կը ճաթուտին, կը կտրտուին չոր ճիւղերու պէս, երջանկութիւնը նորէն Երազի նման կ'անցնի աշխարհի վրայէն առանց դպնալու, առանց հետքի ու աս մարդը վրաս կախուեր կը կարծէ, թէ ես աս եմ, կոտորած սրունքով աղջիկ մը... Ի՞նչ գիտէ, թէ մարդիկ մեռնելու վախին մէջէն իսկ կեանքի սարուոր կ'ապրին մէկ, վերջին ու հոյակապ ձեւով...:

— Պալըրի՞ն հղած ես:

Բժիշկը նստեր էր, քովնտի, իր անկողնին վրայ ու կը փորձէր մտերմանալ, դէմքին ժպտի պէս բան մը կար: Լուսարփիին դուրը շարժեցաւ:

— Ինչպէ՞ս է օրունքս:

Ինքն ալ անհնկայի եկաւ եւ ձայնին զուտ, անարտայայտելի թոնէն:

— Օ՛, մեծ բան մը չէ, երկու ամիսէն կը բուժուի: Կը վախնաս որ չկարեննա՞ս պարել:

Լուսարփի դարձացաւ յանկարծ, թէ ինչու մինչեւ հիմա չէր մտածեր այդ մասին:

— Ոչ:

— Կարծեմ հինգ ամիսէն բացարձակապէս առողջացած կ'ըլլաս: Իսկոյր մէկ տեղէն միայն կոտորուած է: Եթէ քանի մը տեղէ ըլլար՝ այն ատեն շատ աւելի դժուար կը բուժուէր: Բախտաւոր ես:

Հիւանդապահուհին հիմա քովը եկեր էր, մինչ բժիշկը, ոտքի կայնած՝ իրմէ անուշ խօսքի մը կը սպասէր: Լուսարփի կզպեց բեմանը, դոցեց ամբարը ու իր հին սովորութեամբ ուղիղ անոք աչքերուն մէջ նայեցաւ, խիստ ու անհարողական: Կ'ուզէր հիմա հարցնել, թէ ե՞րբ կրնար հոնկէ դուրս ելլել, թէ՛ չէր ուզեր որեւէ այցելու եւ թէ իր գալն իսկ աւելորդ էր: Բժիշկը կը թուէր կարգալ իր մտածումները, որովհետեւ շատ ցած ձայնով ու մէկ քայլ ետ երթալով՝ խօսեցաւ:

— Ես օֆիսը հրահանգ կու տամ, որ մարդ քեզ չխանդարէ, եւ թէ ամէն անգամ, որ մէկը քովդ դալ ուզէ՝ նախ քեզմէ հրաման թող առնէ:

— Լաւ:

— Եթէ մասնաւոր թերթեր, գիրքեր կան, որ կ'ուզէիր ունենալ...:

— Ոչ, պէտք չկայ:

Հոս բժիշկը վարանեցաւ երկվայրկեան մը, յետոյ նոյն զգոյշ թոնով ըսաւ:

— Եթէ կայ մէկը, որուն լուր առլ կ'ուզես...:

Լուսարփի գլխով ժխտական նշան դրաւ:

— Ազգական մը, հայր, մայր...:

Պատասխան չտուաւ: Յանկարծ դէմքը պայծառացաւ, փայլեցան աչքերը:

— Հնձիկս, ի՞նչ եղաւ հեծիկիս:

Անակնկալի եկած՝ բժիշկը խնդաց: Յետոյ, դառնալով հիւանդապահ-
հուհիին.

- Դուք ի՞նչ ե՛նչ կ'ընեն հոս վերաւոր հեծիկները:
- Վարը, փարփիցիկն քով տեղ մը կայ, հոն կը ձգեն, կարծեմ թէ:
- Բժիշկը կ'ուզէր կատակ մը ընել, բայց կը քաշուէր...: Լուսար-
փի կէտ-լուրջ ձայնով մը խօսեցաւ.
- Եթէ կ'ուզէք օգտակար ըլլալ՝ ապահովեցէք, որ հեծիկս վարը
գտաւ ձեռքերու մէջ է, հոգ չէ թէ կուրած-մոտրած:
- Շատ լաւ, Օրհորդ: Ուրի՛շ, ուրի՛շ բան մը կա՞յ:
- Այո:

Լուսիկն: Բռնեց երկուքին ալ նայուածքները, մտածելով, թէ ի՞ր
հեծիկը մաս կը կազմէր իր անձին, անհրաժեշտ էր, որ իր քովը ըլլար, հոս,
սենեակին մէջ:

- Հոս բերէք:
- Ի՞նչը:
- Հեծիկս:
- Ի՞նչ...

Զկրկնեց: Միտքը արդէն ուրիշ տեղ գացեր էր, վարը, Համալսարա-
նի մեծ բակը, հոն նստած կի՛նը, որ ոչ ոք վայրկեանին կը դոցէր դիրքը, ժամա-
ցոյցին կը նայէր ու ոտքի կ'ելլէր, կ'ուղղուէր դէպի վեր, դէպի Սբրուս
փողոց թիւ 40Աի երկրորդ յարկի սենեակը: Գաղափարը այնքան ընդմիջ-
ցուցիչ էր, որ ցնցեց գլուխը զղայնութեան: Տեսաւ դայն, իր ինքնահաւան,
բարձրադիր կեցուածքով կայնած դոնապանին եւ պատահական խրատիլակ
ուսանողներու մէջ հարցնելով իր մասին ու հաւանաբար համոզելով վիեթ-
նամցի դոնապանը, որ բանար իր սենեակին դուռը ու միասին ներս մտնէին,
հոս-հոն դպնային, բռնաբարէին իր առանձնութիւնը, իր սենեակին գաղտնի
մերկութիւնը, որ մորթի պէս պրկուած էր, նոր անկողնին, սեղանին, աթոռին
ու քանի մը գիրքերուն վրայ, մոնկոլ միաւորներու դէմքերուն պէս անպութ,
լերկ, բացարձակ: Ոչ ոք դեռ ոտք կոխած էր իր սենեակէն ներս, իր թաղա-
ւորութիւնը, իր ազատութիւնը...

- Մէկ վայրկեան:
- Բժիշկը արդէն դրան մէջն էր ու ձեռքը մազերուն տարած՝ կը շտկէր
անոնց ծալքերը. յետոյ կար հիւանդապահուհիին խոշոր յետոյքը, կոշտ
կիսադէմը: Սենեակին մուտքը դոցուէր էր: Ի՞նչ դործ ունէր ինք ասոնց
աշխարհին մէջ:
- Եթէ իրապէս կ'ուզէր բարիք մը ընել...
- Բժիշկը մէկ քայլ մտեցաւ, ձեռքին փափուկ մատները հանգչեցուց
անկողնին ոտքի խողովակին վրայ: Մինչ մայրը անդին...
- Մայրս... այսօր ժամադրուած էինք Համալսարանի զբոսարանին
առջեւ:
- Զի՞ դիտեր որ հոս ես:
- Ոչ:
- Հիմա պատուհանին քով գացած է, լոյսը կը քննէ... գիրքերուս կը
նայի:
- Միակ անձն է, որ կը ճանչնամ աս քաղաքին մէջ:
- Հեռախօս ըրէ, ո՛ւր որ է կու գայ վաղը առտու:
- Վաղը կը մեկնէ ետ Պոսթըն: Զեմ գիտեր ո՞ր պանդուկը իջած է
Տիրստոնիֆիս:

Բժիշկը մաքուր, նուրբ եղունդներ ունէր ու Հիմա անոնց կը նայէր :
Վերցուց գլուխը :

— Հեծի՛կը :

Լուսարփի պիտի խնդար, բայց զօպեց ինքզինքը : Սա յիմարը ինչպէ՞ս պիտի զգար մարդկային Հաղորդակցութեան կրակէ պահանջը, նոյնիսկ մեքենայի մը հետ : Արագ մը յիշեց Գարմէլիթներու վանքը անցուցած հրեք շարաթները, մխրճուած այդ պարտադիր, թանձրացած լուսութեան խորը, որուն մէջէն կը դիտէր անխօս խորհուար մայրապետները, զոյգ-զոյգ քալող, աշխատող, ճերմակ գլխանոցները վար Հակած, աչքերը հողին ցերեկ-գիշեր ու ինք մինչեւ առտու փակուած իր մանր խուցին մէջ ու կարօտանալով ճանճի մը ազդոցը, մարդկային շնչին մէկ նշանը, կապը, որպէսզի շինողութիւն իր առանձնութեան մէջ, ուր ո՛չ Աստուած, ոչ ընկերութեան միատիկը որեւէ միտքարութիւն կրնային բերել : Հաղորդակցութիւնը առաջին ու է՛ն կարեւոր քայլը կը սեպէր ինք ոչպիտի արուեստ, ոչպիտի սէր ու ոչպիտի ազատագրումը առանձնութեան կեդծ գրախտէն, ու այս Հապիտները ի՞նչ գիտէին այդ բալորին մասին :

Այնպէս որ, թացարեց բժիշկին հրկաք-բարակ ու աւելցուց .

— Նիհար, երկայն, նուրբ երեւակայութեամբ շրջապատուած կին մըն է մայրս, իր յետուններուն մէջ, Վան Բէլլիթ Մատենադարանին առջեւի նստարաններուն վրայ ըլլալու է, Հաւանարար գիրք կը կարդայ... չո՛ւտ ըրէք :

— Հիմա պահակ մը կը գտնեմ-կը զրկեմ, որ գտնէ բերէ, կամ ալ Հիւանդապահուհի մը :

Ենորհակայութիւն չյայտնեց Լուսարփի : Միտքը ուրիշ տեղ էր արդէն, ճամբայ կը բանար անոր գալուստն... միայն թէ կարենար մարմինը անոր աչքերէն, ձեռքերէն ու, մա՛նաւանդ՝ երեւակայութենէն ազատ պահել... :

— Մէկ վերջին խնդրանք :

— Ո՞րն է :

— Երբ Հոս գայ, մարդ չեմ ուզեր, որ հետը ներս մտնէ : Կ'ուզեմ առանձին ըլլալ ժօրս Հետ :

Գուրս եղան : Լուսարփի խորունկ շունչ մը քաշեց : Առաջ շարժեցաւ մարմինը, ցաւը զարկաւ որունքէն վեր, բայց սեղմեց սկուաները, կամաց մը աւելի ծանցաւ, որ ցաւը շատնայ, յետոյ, նոյն պրկումին թափով՝ շտկեց մէջը ու յաջողեցաւ նստիլ : Ցաւը աստտիկ էր, բայց տոկաց : Ի վերջոյ Հանդարտութեան պէս բան մը եկաւ վրան, թուլցան աղոտները, խոր շունչ մը առաւ ու կռթնեցաւ անկողնի կռնակին : Ալ Հիմա ազատ էր միտքը :

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

(Շար. 1)

Յ. Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ա Ն

Մ Ի Ջ Ա Կ Է Տ

Թող կանգ առնենք
 մեր իդճերուն երգանուագն ընդհատող
 ճիշդ այս կէտին,
 ուր կանգ առնէ
 ժամանակի խօլ սլացքը մեզի հետ
 եւ ջնջուի տարածութիւնն անպարփակ՝
 մեր յայգերուն շիրմահանգոյց գիտակցութեան:

Թող կանգ առնէ
 մեր խոհերուն ուղեկցող
 ամէն կասկած հետախոյզ
 եւ թող դադրին հեծեծանքներ մահերգային,
 որ կը յածին դեռ մեր շուրջ՝
 հեռալուծ ուղիներու կարօտով...

Ճիշդ այս կէտին,
 վերակերտենք շքեղանքը հանդերձեայ
 մեր անցեալի շուշանակերպ յղացին,
 եղբմայուշ օրհնանքներէ գրկուած
 նախամարդու անօթեան ցանկութեամբ:

Սնցնի՛նք կրկին
 հին երգերու թախծամուր մայքերէն,
 անապաշտ,
 անարցունք.
 տառապագեղ ամէն յուշ
 իր խորարմատ գեղեցկութեամբ ընկալող
 իմաստութեամբ վերնային...

digitised by A.R.A.R.@

Յառի՛նք կրկին
 մեր անցեալի ցնորարաշխ փաղցրութեան,
 առանց երբեք հաշուեցոյցը կատարելու
 մոխրածաւալ դաշտերու մէջ փարացած
 ծիծաղներու յուսաբեկ
 եւ կազմելու մահացոյցը
 ասրումներու սիրատարփ
 եւ տարփայեղց մորմոխներու
 անըզալուր ծնծղերգին...

Եւ չափսասանք սեւեռումով յետադարձ
 կորուստն անդարձ այն սիրալուր դաշնութեան,
 որ դուրս մնաց երգացանկէն մեր կեանքին
 եւ չափսասանք տերեւաթափն ապաժամ
 մեր յոյսերուն խոհացանկէն արտաքսուած՝
 խորհրդաստեղծ պահերու...

171-2000

Մեր իդօներուն համանուագն ընդհատող
 միշտ ա՛յս կէտին,
 երբ կը փորձեմ ազատագրել
 ողջ առասպելն անցեալիս
 պատրանաշուրք հեքիաթներու վերլիշումէն՝
 հնավարթամ ինչպէս փտոքը Նինուէի,
 կամ հնաքանդ պարիսպները Երիֆովի,
 կը գիտակցի՛մ
 եւ կը զգա՛մ,
 թէ ճանապարհն իմ անցեալ
 դարձած է լռի
 միջակէտէ ալ միջակէտ խարսխուած՝
 հոգեկայան մը լռին
 եւ լռախոհ վայրկեաններով շղթայայար՝
 վերանորոգ կոտսանքներու
 անդրադարձում մը տխուր...

Ճամբուս վըրայ,
 ամէն անցեալ միջակէտ
 խորհրդանիշն է եղած
 երազի մը գահավէժ,
 բաղձանքի մը փլուզուած
 եւ հոգի հետ հարսնացած
 ջրահարսի անփառունակ ճակատագրին...

Ամեն անցեալ միջակէտ
 հանգրիմուած է խոհերուս մէջ
 իբրեւ խորհուրդ պառակտիչ
 եւ դաւադիր ցուցանիչ.
 դարձած իմ մէջ՝
 հեզմածուկիտ կարեկցամբ,
 խեղաթիւրուած նշմարտութիւն
 եւ հաւատքի խաբեպատիր աստղանիչ...

Թափառած եմ միջակէտէ միջակէտ,
 խառնած էրզն իմ
 անէացած գրգանքներու ողբերգութեան՝
 խաչելութեամբ անգիտակ
 եւ գուցակցած
 խորշակահար ծաղիկներու ճայներգութեանց՝
 յարատրտունջ քախիծով...

Ամեն անցեալ միջակէտ
 մերթ յառած է աչքերուս՝
 հոգեվարքի մը պրկումովը ջգածից,
 խաչափայտի մը տեսիլովը երկնախոյզ
 եւ հրաշքի մը գոյութեամբ անվերծան...

Պարուրած զիս՝
 աւերակի մը վազնջայուչ կերպարով.
 ոգորած զիս՝
 գաղափարի նուիրագործ երկունքով
 եւ աղջունած՝
 ժամանակի քարանձաւէն յայտնուած
 պղատոնեան տիպարներու
 ստուերադէմ խոհերով...

**

Մեր իդոներուն ցայգանուագն ընդհատող
 ճիշդ ա՛յս կէտին,
 կ'արձագանգեն սպասումներ երբ իմ մէջ՝
 դեռ չերգուած կարօտներու անձկութեամբ.
 կ'առանձնանան ոգեմարմին երագներ՝
 ողջակիզուած այծեամբերու արցունքով.
 կ'արձանանան խոստումնադրուծ վայրկեաններ՝
 իրենց ցառով տեհչայոյզ,
 ճիշդ ա՛յս կէտին,
 ուր դուն հիմա,
 զիս կը դիտես ափունքներէ օտարտի,
 digitised by A.R.A.R.@

գուցէ դարձած
 հին բաղձանք մը ոգեյայտ,
 դարձած ստուեր դարանակալ՝
 կ'ուզեմ ըլլալ
 տառապանքիդ հոլովոյթը ընդհատող
 միջակէտ մը խոհաշիթ-
 եւ ծնունդ տալ,
 քեզ ցնծառիթ տենչանքներով գապանակող
 նոր յոյսերու անմիջակէտ եղանակին...

կ'ուզեմ ծնի՛լ
 քու իդձերուդ ճամբաներուն դեղնալոյս՝
 միջակէտի մը նման
 եւ ընդհատե՛լ
 նախաժա՛յլն իսկ՝
 առհասարակ փորձութեան մը
 վիճակներուն երկդիմի,
 որ չդառնան վիշտը լկիչ՝
 չըմբռնշնուած երազանքիդ այգաբացին...

Փ Ա Կ Ա Պ Ի Ծ

Թող պահ մը լոկ
 պարփակուէինք դուն եւ ես
 սողաշարին մէջ օրերու մուտք գործած՝
 փակագիծի մը ներքեւ:

Մեր ներամփոփ բնաշխարհէն տարանջատ
 թող զարգանար տող առ տող
 եղելութիւնը կեանքին
 եւ ընթանար իբրեւ յանկերգը գոյակից՝
 իմացումին դարերու:
 եւ թող յանգէր արարչաստեղծ լիութեան
 կենսախորհուրդ ամէն երազ
 եւ հոյակերտ ամէն ապրում:

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ փոյթ, թէ մենք,
 մեր էութեամբ ներատոյգ,
 մնայինք լուռ ու մտորուն,
 անաշխարհիկ ամայֆներու յանձնուած՝
 մենաստանի մը նման
 եւ մնայինք անհաղորդ՝
 դիպուածներու վերահաս,
 դրուագներու խելայեղ,
 առանց երբեք ըմբռնելու
 տիպարային վիճակներու
 տառապամէք կենսահոլով
 եւ գոյութեան խաչմերուկին սեւեռող՝
 տարակուսանքը մտփի...

Բաւ է միայն,
 որ մնայինք ներփակուած
 տողաշարին մէջ օրերու,
 ուր մենք կեանքի խորհուրդներուն խոհարձակուած
 մեր յարակից յուզաշխարհով,
 նշմարտութեան անհերքելի գաւանգներին
 լռելի վկաներն ըլլայինք...

Ներփակուելի ե՛ս միայն
 ոլորտին մէջ հայեացքիդ,
 իմ յուզերով յարափոխ,
 իմ յայտնութեամբ խոհաստուեր.
 Ինչ փոյթ, սակայն,
 թէ խախտուէր իր կանխորոշ յղացքէն՝
 վիպահամգոյց իրադրութիւնը կեանքիդ...

Վիպերգութիւնն օրերուդ՝
 իմ յուշերով ցանկապատուած
 թող փակագիծ մը դառնար,
 ուր մնայինք դուն եւ ես
 վկայութիւնը իբրեւ
 չհասկցուած բազմանգներու տուայտանքին
 եւ բացուելիք լուսամուտին ժամանակի
 ներաշխարհի մը նման,
 որ տենդայոյգ խոռվֆներով
 փակագծուած ինք իր մէջ՝
 ներանձնային փակագիծեր կը փոխէ՝
 գոյամարտին մէջ կեանքի...

Վ Ա Խ Ճ Ա Ն Ա Կ Է Տ

Ես գիտէի,
 թէ հոս պիտի եզրափակուէր
 ծիծղուն երգը երազանքիդ,
 հմայագեղ իբր պերճանքէն մերկացած՝
 սուսպիլի մը նման:

Ես գիտէի,
 թէ ցնծայորդ Մայիսն ամբողջ երազանքիդ
 պիտի օր մը թարշամէր
 մեղսակորոյս հաւատքի մը շունչին տակ
 եւ գուր փնտուէր մեղանչական տխրութեամբ,
 բեղմնածիծաղ խոստումներուն մէջ կեանքին՝
 կենդանութիւնն իբր անդարձ:

Եւ կը դիտեմ ես հիմա,
 հայեացքիս դէմ կռակ-կռակ մակընթացող
 վայրկեաններու իրավիճակն անորոշ,
 ուրկէ անդին,
 կը ծաւալի ո՛չ մէկ երազ ցայգաշող՝
 հոգեմատոյց հեշտութեամբ:

Բայց ես գիտեմ,
 թէ հանգրուանն այս յետին՝
 վախճանը չէ
 մեր խնդութեան դափնածիծաղ երգերուն
 եւ ոչ նախերգը տխուր՝
 մեր ցաւերուն անյարակից ուղեկցութեան.
 այլ ծնունդն է
 երազակերպ նոր պահերու եղանակին.
 անցում մըն է
 ենթաշխարհէ այլ ենթաշխարհ,
 եւ ձգտում մը գոյակերպ՝
 հեռաձգուած ուղիներու ոգեկան...

Հանգրուանն այս,
 ոգեշաւիղ այն վայրն է,
 ուր մենք պիտի վերագտնենք
 վաղամեռիկ երանութիւնն անցեալի.
 Եւ ընթանանք
 հեռամշուշ բաւիղներէն յիշողութեան,
 ուր կը ծաղկի կեանքն իբրեւ
 խաչածեղած երազներու
 մտաբերում մը անվերջ
 եւ մոռցուած ծիծաղներու
 անմիջնարար յայտնակերպում...

Հանգրուանն այս
 նախաշաւիղ այն վայրն է,
 ուր մենք պիտի վերադառնանք
 մեր բաժանման յորձագալար մամբաներէն,
 հաստատելու նախադրոյթը ցանկալի՝
 մեր գոյութեան համարնոյթ երգերուն...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՅԱԿՈՒՄ ՍԻՄՕՆԻ

Մարդեր եղած են կեանքին մէջ, կ'ան, զիչ մը տարօրինակօրէն հմայիչ բախտով աշխարհ եկած մարդեր, որոնք իմացական մարդերու մէջ մեծակշիռ վառասկ մը չեն ունեցած, չեն վայելած ճակատամարտ մը վարած հերոսի մը վառքը, ոչ ալ ազօր բացած են այս կամ այն ասպարէզին մէջ, բայց մեծերու համահասարակ տեղադրում մը ունեցած են ժամանակակիցներու հոգեբանութեան ու աշխարհայեացքին կազմութեան մէջ: Քիմէն սերունդ կը յիշէ իր ներքին անձին ձեւաւորման մէջ զոր ունեցած նման տնձ մը, որուն իրաւ կեանքին օրինակով պահած է իր հաւատարակութիւնը:

Նման անհատականութեան մը տէր մէկն էր Յակոբ Սիմոնի, որուն անունը, ճիշդ է, նոր սերունդներուն ոչինչ կ'ըսէ, բայց Լիբանանի, Մուրիոյ եւ Յունաստանի երկնքներուն տակ զօրուար է գտնել մեր միջովայրին մէջ սպրան վաթուոր անց անձ մը, որ մինչև այսօր երկնքան յարգանքով մը չորհելով անոր յիշատակը, այնպէս՝ ինչպէս կ'որհելոյն հաւաքականութեան մը ստորեային ու խոհային իրենք զիրենք զուարթած երախտաւորները:

Մահուան առիթով, իր մտերմութեան մէջ սպրան մտաւորական մը կը գրէր.

«Գրագէտ, իմաստասէր թէ բանաստեղծ, ամենքն ալ չէիմ կրնար չիմանալ, նրա հագին Յակոբը-արամ մը աւարտած Սիմոնին կը խօսէր առաջնայի մը պէս ճերմուտած եւ իր անտեմմ երեսակայութեամբ, ինքն իրմէ կ'լուծ, կայծակնաւորութիւն ու ցեցող պատկերներով կը ճկարէր իր գազափարմանն ու տեսլականը...»:

Նոյն առիթով, օւրիներ հաս խօսք առին ու գրիչ վերցուցին, հանրային դէմքեր, բանաստեղծներ, զրոյներ՝ Գասպար Իֆէկհան, Մ. Իշխան, Ա. Մառուկեան, Եդ. Տարօնեան, որոնցմէ ոեւէ մէկը կրնար ստորագրել վերի վկայութիւնը, որովհետեւ առ այդ լեցուցած իրենց սիւնակները գրեթէ նոյն յովանգակութիւնը ունէին, համարումով լի, զեզուն, վարակիչ:

Սիմոնի մտիկը սպրան է նաեւ զբաղմունքու եւ յորինած է չափածոյ եւ արձակ էջեր, որոնցմէ քանի մը նմոյշ լոյս տեսած մեր մամուլին մէջ, յիսուական թուականներէն զէչ մը առաջ, իր մահուան առիթով:

Սիմոնիի ձեռագիրներուն տետրակը վերջերս յանձնուեցաւ իր եղբոր թոռնուհիին, որ հետագայ էջերուն կը ներկայացնէ անկէ փոշի մը՝ ու զեկողման էլէ մը հետ:



ՄԱՀՈՒԱՆ ԵՐԿԻՄՂ

Մեծ սարդ մը ինչպէս, գիշերը թել-թել իր սեւ մատներով կը շիւտ ոտտայն: Ու հոգին բռնած ցանցին մէջ անի թախիծ առ թախիծ կը պատմենէ գայն: Քաղցր յիշատակներ այցն իրենց վերջին կու տամ արցունքիս վերջին կաթիլին, Ոչ մէկ երգ այլեւ որ արձագանգ տար Յոյսի վանկ մը, գէթ պատրանքի համար: Կը վայել միայն սեւ բաւ մը հեռու՝ Արեւիկաներուն վրայ ողբերգու, Մահն է որ կ'անցնի սարսուռ առ սարսուռ Շարժելով ուսին մանգաղն ծայրասուր: Մեծ սարդ մը ինչպէս, գիշերը թել-թել իր սեւ մատներով կը շիւտ ոտտայն Ու հոգին առած ցանցին մէջ անի թախիծ առ թախիծ կը պատմենէ գայն...

ՅԱԿՈՒՄ ՍԻՄՕՆԻ

Սիրելի Սիմօնի, բարեւ: Հեռուէն յիշատակս քեզի հետ կապելու համար, ահա կը գրեմ: Քիչ բան գիտեմ ես քեզմէ: Տանս մէջ թէ բարեկամներէ միշտ լուծ եմ որ դուն շատ վայելչակամ տղամարդ էիր, շատ տաղանդաւոր, զուարթախոհ, անսահմանօրէն բարի ու համեստ: Այնքա՛ն պատմութիւններ կան հիւսուած քու հմայիչ անուանդ շուրջ: մութէ ու լոյսէ ասեղնագործուած հեքիաթանման ու հոյսաքանչ ասքեր, կեանքի, մահուան, սարսափելի ու խոր իրականութիւններու մասին: Գիտեմ որ տարիներով թովեցիր բեմբասացի անմոռաց ձիրքերովդ հիփնոսացած հիացիկ հայ ամբոխներ: Գիտեմ որ հոգիդ, քաղցրալուր ու բանաստեղծ, երբեմն թուզթին յանձնեց սիրտդ ու միաքոյ յուզող հարցերը բոլոր: Կ'ըսեն, թէ երբ հիւրասիրութեան մը պահուն խօսք կ'առնէիր դուն, այդ տան մանուկներն ու կիները, զաղանի ու զգայուն ճառագայթումիդ արագ սիրահար, ամբողջապէս դերուած էին քեզմով: Գիտեմ որ գործիչ ալ եղար, իտէպապաշտ էութիւնդ չէր կրնար անտարբեր մնալ ազգիդ լուռ ցաւին ու միջկեցիք քանի՜ հայ որրուկներու կեանքը, Սուրբիայէն մինչև թուրքիա: Պմբապէր եղար, մշակոյթը սիրող մարդ, ու պարզութիւնը դասեցիր ամէն բանէ գերիվեր: Հաւատացիր մեր յեղափոխութեան, հայ մարդու անկեղծ ցասումով, բաղձանքով: Հալատանն ու Հաւատքը եղան կեանքիդ գեղեցկագոյն երկու սիւները, որոնց շուրջ հիւսուեցաւ օրերուդ այնքա՛ն հոգեզմայլ, այնքա՛ն տարբեր թեքսթը առինքնող:

Բարեւ, Սիմօնի: Մեծ հօրաբոս, կը ներշնչես դիս: Երբ ասկէ քանի մը տարիներ առաջ սրտամօտ բարեկամուհի մը փափաք յայտնեց ինձի յանձնելու քու անտիպ բանաստեղծութիւններուդ ղեղանմոյշ մէկ տրցակը, ես չէի կարծեր թէ օր մը առիթը պիտի ընծայուէր գանոնք տեղ մը տպագրուած տեսնելու: Այսօր, քու յիշատակիդ նուրբ խորանին բարի գեղեցկութիւն մը ինկելու շատ անձնական ու նաեւ համայնական վայելքին համար, կ'ուզեմ շնորհել խօսքէդ դէթ մաս մը ի հաճոյս բոլորի՛ն: Ներէ ամօթխածութեանս այս հաւանական պակասին, ներէ համարձակութեանս: Ընդունէ այս աքթը, որպէս յապաղած ազօթք, որ կ'ըզձայ ըլլալ յոյնութիւններով, դառնութիւններով եւ գրկանքներով միշտ լի քու կեանքիդ քիչ մը բալասան ու քիչ մը ընծայ: Իմ մէջն ես հիմա ու բոլոր անոնց, որոնք սիրեցին ու յարգեցին քեզ: Ներէ անկեղծութեանս, սէրը սահման չունի:

Սիմօնի, բուրմնաւէտ խօսք, քաղցրահոտ դրէչ, հաւատացող մարդ: Կեանքդ սէր էր, խունկ, առաքելութիւն: Մեծ էիր, բայց եղար ծառայ. խոր էիր, բայց մնացիր պարզ: Յան-



ՅԱՎՈՐ ՍԻՄՕՆԻ, ՆԻՎՈՆ ԱՂԱՆԵԱՆ, ԼԵՆԻՆ ՇԱՆՔ

Կուսիւնս է որ միշտ նշխարութիս ողջերուս ու փոխանցես մեզի կեանքի խորհուրդը, որ դուն սորվեցար Հոգիի՛ աչքով: Բաշխուէ մեզի, բան մը տուր քեզմէ: Գէթ յիշատակդ թող երջանկացնէ: Ու մենք, ողջերս, փորձենք մաքրուիլ փորձութիւններու ալեկոծ չարէն, մեր սիրտը լուանք խօսքիդ գուլայ առուններուն մէջ: Թե- բեւս նաւարկենք դէպի բաց ծովը, դէպի ջինջ հորիզոնը մեր ա- մէնէն արդար ցանկութիւններուն, ըզձանքներուն: Յիշատակդ, Սիմօն, յաւիտենապէս ծաւալող աղօթքի համ է, որ կ'օգնէ ինձի հիմա ապրելու, հազարդուելու, բերեղանալու:

ՇՈՒՇԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

2 Յուլիս 1986

digitised by A.R.A.R.@

Յ. Ս Ի Մ Օ Ն Ի

Բ Ա Ն Ա Մ Տ Ե Ղ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍՊԱՍՈՒՄ

Աչքերուն տակ իր ազուր՝
Ազբուր սիրոյ եւ լոյսի,
Սիրտը՝ ճեղքուած սափոր,
Կը սպասեմ որ պիտի լեցուի,
Ես՝ յարածամ ծարաւի,
Իր աչքերուն ծն՝վ ծաւի...

ԿԸ ՁԻԻՆԷ

Տակաւ կը ճիւնէ
Ու ծովը խելառ
Տըլտուր հծծիւնն է
Որբի մ'ցրտահար...
 Գուցէ կը մեռնին,
 Այս ցուրտ ճմռանին
 Անմեղ սաստիկներ,
 Շուար, բնաւեր...
Այս ցուրտ ճմռանին
Գուցէ կը մեռնին,
Երազը սրտիմ՝
Հիւանդներ դեղին...
 Տակաւ կը ճիւնէ,
 Ու հովը խելառ
 Տըլտուր հծծիւնն է
 Որբի մ'ցրտահար...

ՀՈՎՆ Է ԿԸ ՓՉԷ

Հո՛վն է կը փչէ,
Թէ կը շշգրէ
Ձայնըդ ականջիս...
Կը կանչես զիս
Ու կը փախչիս...
Հոգիս կը սուրբայ
Հովերուն վրայ
Ու կը հառաչէ,
Քեզի՛ կը կանչէ...
 Հո՛վն է կը փչէ,
 Թէ կը շշգրէ
 Ձայնըդ ականջիս...

ԵՐԱՆԻՐ

Աստղերն երանի՛ր
Սէրս բամբակ
Երկնակամարի
Անհաս մակատին
Ու համբոյրիմ
Անհնարին,
Միշտ կարօտին
Բոցերուն մէջ
Անշէջ,
Շրթներս այրէին,
Զհասնէի՛նք քեզ...
Ըլլայի ողջակէզ,
Ու հովերը ցրուէին
Անխնայ անտէր
Աստղերն ի վեր,
Ու եոզին հըրճուէր
Համբոյրովն անհուն,
Կոպո՛յտ աստղերուն...

ԿԱՊՈՅՏ ԱՉՔԵՐՈՒՆ

Ծովը, հեռո՛ւն,
Արցունքով լեցուն
Կասպյտ աչքերուն
Որբա՛ն
Է մտան :
 Հոգիս կը ծփայ
 Կասպյտին վրայ
 Առագաստ բացած,
 Գուցէ հիւս
 Աչքերն եմ քաց՝
 Ծն՝վ
 Թախիծով.
 Հեռո՛ւն,
 Ու աչքերուն
 Մէջ կը ծփայ
 Գուցէ հիւս,
 Հոգիս՝ իբրեւ մաւ
 Ու բնաւ
 Առագաստն իր
 Զ՛ամփոփուիր...

Ծովը, հեռո՛ւն
Արցունքով լեցուն
Կապոյտ աչքերուն,
Որքա՛ն
է մահն...

ՄԻՐՏՍՍ ՍԻՐԱԽՈՑ

Սիրտըս սիրախոց
Նետեցի փողոց
Քաղցած շուներու .
Զայն հոտոտեցին
Ու փախան հեռու ,
Տըխուր սոսնձերն...

Բոզ մը առանձին,
Անցաւ փողոցէն,
Անհոգ, անվարան,
Ս՛, կռիւնց վրան
Ու ծիծաղելէն
Հեռացաւ գնաց :

Իր մեղքին դիմաց՝
Շուներն փողոցին
Երկա՛ր սոսնձերն...

ՄԱՀԱՄԱՐՍՈՒՌ

Լուռ .
Ու գիշերին մահաաբառու
Կ'իջնէ յորհուրդն հոգիէս
Ներս

Իւ
Լսի երազ մ'ահաւոր սել
Այ կը կառչի աչքերուս :
Յո՛յս...

Ահա մարտն
Կու գայ բանակն մեռելներուն
Գանդաղօրէն,
Պատանքն իրենց, մինչեւ հեռուն

Անտանքն
Ամպի մը պէս տարածած
Մեռելական

Խօլ պալաւ, կ'երգեն ցած .

«Հոգիդ տըխուր,
«Սիրտդ թափուր,
«Ի՞նչ կը օպասես
«Դագաղի պէս .

«Յոյսն է ի գուր,
«Եկո՛ւր, եկո՛ւր,
«Եկուր պարէ :
«Պարէ՛, պարէ :
«Տե՛ս,
«Մենք
«Ինչպէս
«Կը պարենք,
«Մենք
«Ահեղ
«Ենք
«Ամէն տեղ,
«Մենք կը պարենք
«Ամէն տեղ» :

«Ճակատագի՛ր,
«Դագաղ մտիր,
«Ու ազիտ,
«Եկուր հոս .
«Եկուր պարէ,
«Պարդ պարէ .
«Տես մենք անվիրտ
«Կը պարենք միշտ» :

«Հուսնին շողեր
«Հոս կը ծաղկին
«Ամէն գիշեր,
«Աստղերն անհամար
«Ծաղիկ մեզ համար
«Մեռիք, քաղքէնք,
«Եկուր քաղքէնք» :

«Սիրտդ տըխուր,
«Հոգիդ թափուր,
«Ի՞նչ կը օպասես
«Դագաղի պէս .
«Յոյսն է ի գուր,
«Եկո՛ւր, եկո՛ւր,
«Կեանքը մահ է
«Անպայման,
«Մահը կեանքն է
«Անսահման...» :

Կ'անհետանան
Երբ կը սպառի երգը մահուան,
Ու պատանքնին
Կ'ըլլայ մըշուշ իրենց ետին,

Ուրկէ — Երա՛գ —
Կու գայ կի՞ն մը հեզանագ,
Ինձն է...
Կ'երգէ.

«Տե՛ս, ահա
«Ես Եկայ.
«Ծաղիկներ բերի
«Քուրճը քեզի՛:
«Բայց... ինչո՞ւ ես դեղներ,
«Մի՛թէ կը մտնե՞մ...
«Ես ալ եմ մտնը,
«Ենչոր գրկէ գիւ...»:

Ու քեւերուս մէջ կարկառուն
Նրազն այդ սիրուն
Կուրծփիս վրայ
Դագազ մը կ'ըլլայ...

Ի ԶՈՒՐ ԱՅՐԵՍ ԴՈՒՆ ԶՔԵԶ

Սիրտըս կըծատն է մտնն,
Որ հեւ ի հեւ տակաւին,
Կը սնանի բոցն իր յետինն,
Արցունքին մէջ ջերմագին...

Յայգաթիթեռ անզգոյ՜
Սէ՛ր իմ, բոցը այս առկայծ,
Պիտի մարի քիչ մը ուշ,
Եթէ քեւերդ բացած

Զիս չգրկես մահատենջ :
Պիտի մեռնիմ քիչ մը վերջ
Խեղցուելով արցունքէս,
Ի գո՛ւր այրես դուն գէեզ...

ԱՂՕԹՔ

Զի սա է մարմին իմ
որ վասն ձեզ բազմաց բաշխի

Կեանքիս ճամբուն վրայ մայր,
Տէ՛ր, ինձ տուած ցուերդ բոլոր
Տարի անտրտունջ,

վասնդի գարունէդ
Ծաղկաւտ,
Ինձի քաժին ինկած մէկ փունջ,
Եղաւ քուսկան,
Սիրելու ցուն իսկ սեփական :
Բայց երբ ճամբուն վրայ
Ուրիշին ցուր տեսայ
Ու չկրցայ ինձ երկարող
Հաշմանդամին անկարող
Ձեռքին քանի մը սեւ փող
Տալ, կամ կտոր մը հաց,
Աստուած՝ Իսահակի եւ Յակոբայ
Կեանքէն զգուցայ...
Ի՞նչ ընեմ կեանքը իմ
Երբ ոչինչ ունիմ
Ուրիշին տալու
Յօժա՛ր եւ կլու...

Գունէ տէր ըլլար
Սէրս անըսպառ
Եւ անանձնական .
Նման
Ծաղիկին,
Բոյրին,
Որպէ՛սզի
Տայի,
Անխորհր եւ հաւասար,
Հարուստին եւ ազատին,
Գեղեցիկին, տղային,
Կազին, կոյրին
Ու սրտեր անհամար
Ըլլային քաղաք
Սիրոյս համար,
Որ ծաղիկն իր բոնար :
Ըլլա՛ր հոգիս
Թազմապատառ
Նշխար .
Հազարդութիւն սրբազան
Եւ անսահման
Հիւանդներուն եւ որբերուն
Թափառական եւ անտուն
Մաւրացիկին,
Հաշմանդամին,
Լեռած բոլո՛ր հոգիներուն...
Ըլլար սէրըս ինչպէս բոլոր ծաղիկին
Եւ հոգիս՝ հազարդութիւն
Եւ ունեմայի երանութիւնն
Մըտածելու որ տուի
Ի՞նչ որ ունէի...

ԱՐՉԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Լիալուսին: Գարնան գիշեր է:

Վարդերը ննջեր են երես երեսի, կանաչ մետաքսէ քարձերու վրայ:

Շուշանները սպիտակ սաւան են ծածկեր թիթեռնիկներուն վրայ: Մտները օրօր կ'երգեն:

Ու փաստարանները փշրուած աստղեր են, որ գիշերին մէջ կը յածին:

Ես մինակ եմ ու ինչ կը փնտռեմ, վարդեմիներու ստուերից մէջ, ծառերու շուփին տակ ու ազբիրմներուն հով:

Հոգիս յոգնած ու շուարած է փաստարաններու լոյսերը հուսածեղէն, որովհետեւ անոնք էս կայսրս աշխարհ չ'ենալ փայլը ունին:

Լիալուսին գարնան գիշեր է, սիրելիս. ու ես ինչ փնտռելից յոգնած, պառկեր եմ մտախոնկներուն թափշին վրայ ու ինձ կը թուի թէ ինչ եմ գրկած...:

2. — ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հեռուէն ձայնագրի մը եղանակը:

Կիթառի մը վրայ արցունքի կաթիլներ կ'իյնան, կը դողան, կը հառաչեն ու վանկ առ վանկ կը կաթին որտեւ մէջ ու կը լնան:

Երազը նունուփարներ կը ծաղկի:

Յիշատակները՝ կարապ, կը լողան արցունքի լնակի եզերքին եւ մարգարիտներ կը կոտորեն...:

Կիթառը կու յայ վանկ առ վանկ:

Լնակին վրայ սարսուռներ կը վէտվտին:

Կին մը սրտէս ներս կը նայի ու յէմքը կը փայլի լնակին վրայ: Ան համբարյոյժ կ'օժէ կուսուցը կարապներուն եւ կը ժպտի: Արցունքի լնակին վրայ ծիածամ մը կը հիւստի ժպտի նառագայթներով:

Կիթառին վրայ արցունք չկայ, լարին վրայ համբարյոյ մը կը դողայ...:

3. — ԵՐԱԶ ԳԻՇԵՐ

Տակաւ լուսին մը կը բարձրանայ բարսիմներու գագաթէն:

Շուրջս փլատակ փարեր, խորան մը աւեր ու յիշատակներ...:

Սոյլը հովերուն՝ սաղմոսերգութիւն:

Լուս կ'ունկնդրէ հոգիս ազօրքը գիշերին ու տակաւ ինքն ալ

աստղերուն տակ ազօրք մը կը դառնայ...: Որտե՛ս աչքերն են սա
 քոյգ աչքերը խորանին առջեւ, որ զիս կը կանչեն...
 Փլատակ քարեր, խորան մը աւեր եւ յիշատակներ...:

4.— ՎԱՅՐԵՐ ՍԻՐԵԼԻ

Նայն լեռներն ահա:

Ծառ, ձոր ու անտառ, ազրիւր ու վտակ:

Նայն ժայռը ահա՛ ուր կը նստէինք գիշերն ժամերով, երկուքս
 քովէ քով: Աստղերուն տակ, ազրիւրը հեզասահ՝ հայելի պայծառ
 ու գուռը մարմար, ազամանդներով միշտ լեցուն կ'ըլլար, երբ մեր
 շրթունքով կը համբուրէինք թաց շրթունքները անոր եւ յետոյ
 մեր...:

Ահա նորէն ազրիւրը նայն, գուռը մարմար, քուրը յտակ-
 աստղերն այնտեղ ծագկած լուսաս ու շրթունքներս տեղեւորն ճայն
 ծորակին համբայրին մարմար...:

Ա՛յո, ուր է սակայն ինքը այս գիշեր:

Լակ տրտում ստուեր միշտ քովս ի վեր...:

5.— ԶՈՅԳ ՄԸ ԱՐԵՒՈՎ Կ'ԱՊՐԻՄ ԵՍ

ԻՄ ՊԸՎԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՍ

Հագիւ կը յիշեմ, դամբանի մը պէտ ցած առաստաղով, սեն-
 եակը հիւանդանոցին:

Հոգիս դատարկ էր անդունդի մը մտն ու գարկը սրտիս՝ ա-
 նոր վերել, վիրաւոր արծիւի մը թեւափայտումը՝ ծանր, ուժգին եւ
 անհատասարակչիւ:

Տեղին հրդեհը կը հոսէր անկողնիս մէջէն ու զիս դժոխք
 կը բշտէր...:

Մտածումներս, խառնաշփոթ եւ յեղակարծ, կը տարողնէին,
 կը ցրտէին, անորոշ եւ անուղի, ինչպէս թիթեռնիկներու շուար ե-
 րամ խօլ փոքորկի մը յորձանքին անձնատուր...:

Շուրջս ամէն բան կը մաշէր, կը հատնէր, կը սպասէր...:

Մշտ՛ւշ, մշտ՛ւշ...: Գորշ պատտա մը միայն, ուրկէ երբեմն
 ծանրաբաշխ կ'անցնէր սեւագգեստ մայրապետ մը, մէջէն փղտկլրէ
 խաչը առկախ, շրթունքին քառեր ազօթքի: Ու անոր ռոնաձայնը նը-
 ման էր մուրմի մը խօլ ձայնին, որ դագաղի մը կափարիչը կը գա-
 մէ...:

Յուսահատութիւնը մեծ սարդի մը պէս կուրծքիս տակ թել-
 թել թախիծով պատանք կը հիւսէ...:

Ու բիրաւոր յուշեր թափօր կազմած յուզարկաւոր կ'անցնին
 սրտիս արահետներէն:

Գանկիս մէջ ծանր մտրեմ մը կոչման կը գործէ մահագանգ ու գանգիւնը քաւ, արձագանգէ արձագանգ կը տարածուի, կ'երկարա-
ձգուի էութեանս անծայրածիր պարսպաւթեան մէջ:

Քառս
.

— Սիւտնի'... ինծի' նայէ:

Հմայի'չ շունչ, կախարդի'չ ձայն, երաժշտութի'ւն, որ իր
կենսատու սարսուռները կը պտրտցնէ մարմնիս բոլոր հիւսուածք-
ներուն վրայ:

Քառսիմ մէջէն յանկարծակի ցայտող սրշայտս, որ ճառա-
գայք առ ճառագայք լոյսի հրդեհներ կը բռնցնէ:

Ձայգ մը աչքեր' գոյգ մը աստղեր սրտիս վրայ կապոյտ ա-
քամանց կը գամեն ճաճանչներով...:

Վարդաճանչոյ մատներու շունգէր կ'ունցնի ճակտիս վրայէն ու
աչքերս քաց, աչքերուն դիմաց, լոյսով կ'ազդարւին:

Կեանք է եւ Արեւ:

— Սիւտնի', բարեւ:

Բարեւ, իմ Արեւ:



Ու ամէն օր արշալոյսին, արեւիմ հետ արեւ մ'ալ ինք, սեն-
եակիս մէջ ծագեցան ու ճառագայքներով զիս ամբօրէն կապեցին
կեանքիմ:

Ես կ'ապրիմ հիմա, գոյգ մը արեւով:

6. — ԵՐԱԶԱՅԻՆ

Գիշերը կը տարածուի: Ստուերներուն հետ քաթիծ մը կը
մազուի շուրջս բոլոր:

Առանց քեզի' հոգիիս մէջ մեծ բացակայ մը կայ...:

Դատարկ է հոգիս...: Լեցուն եմ աչքերս միայն... արքուն-
ճով:

Հովերը հառաչանքիս հետ, շրթունքներէս կը խլեն անունդ
ազուար ու կը տանին երկինք, աստղերուն:

Ուշ գիշերին, խրճիթին սեմին մասած կը նայիմ աստղերուն
ու կը սպասեմ...:

Պիտի չքերե'ն հովերը այնտեղէն քիչ' երագ...:

Աստղերուն աղաւանդը կը կաթկթի ու ճաճանչ առ ճաճանչ
մարմին կ'առնես դուն, քափանցիկ եւ անհպելի:

Մութիմ մէջ, ճովս ես դուն' լուսեղէն մարմին:

Ու քաղցրութիւնը աչքերուդ ճառագայթ առ ճառագայթ հագիս աղբամուղը կը լեցնէ լոյսով :

Երազներ կը ծաղկին սրտիս մէջ ու համերգներ՝ շրթումքիս վրայ :

Երկինքէն մանանայ կը տեղայ :

Հովերը միջոցիմ մէջ հաշիշի բուրմունք ու գինովութիւն կը ինկարկեմ :

Շրթումքներէդ լուսածաղիկ, երգ մը կը ծաւալի՝ աստուածային քաղցրութեամբ :

Գինով եմ :

Քնացա՛ր գիտ, հա՛րսն իմ երագիս ու թռչ մտռամ որ հիւանդ եմ, որ եմ միմակ, առ՛նց քեզի... :

Գիշերը կը տարածուի... :

7. — ԱՆԿՈՒՄ

Խեղճ ու յանդուզն արծիւի մը պէս սիրտս տեղեաց արեւին հասնիլ :

Հասնիլ արեւին ու կտցահարել ճառագայթներ աղամանդ :

Ու ճախրեց, ճախրե՛ց, լողաց լոյսի մէջ, շողաց լոյսի մէջ :

Ու սաղմերգեցին խոյանքն իր հպարտ փոթորիկներն ապշահար :

Ու փոքուցտն շանթեր հրաշէկ՝ հարուածովն իր կտուցին :

Ու ճախրեց, ճախրե՛ց, հարկսնները ճեղքեց, լողաց լոյսի մէջ, շողաց լոյսի մէջ :

Բայց արեւին դէռ չհասած՝ այրեց թւերմ իր հուժկու եւ երկինքէն ինկու վար... :

Կարիւնի հիմա սիրտս քեւաբեկ կարօտովը հորիզոնիմ ու լոյսին, փոթորիկիմ ու շանթին ու աչքերուն մէջ հագեղարք ճառագայթները կը ստոյն... :

Խեղճ ու յանդուզն արծիւի մը պէս սիրտս տեղեաց արեւին հասնիլ... :

ՅԱՆՈՒ ՍԻՄՕՆԻ



ԶԳԱԼԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ...

27 Մայիսին, հազիմ դարձաւ մեր աշխատակիցներէն Կ. Փօլատեան, 75 տարեկան հասակին, Մարտիլ:

Համաշխարհային երկրորդ պատերազմէն ետք, Ֆրանսայի տարածքին հրապարակ իշխած գրողներուն մէջ Կ. Փօլատեան, անկասկած, հանդիսացաւ ամենէն աշխուժը: Ֆրանսահայ մամուլի էջերուն բարակցութիւններ, ռոտատար ու արձակ նախադրձեր ստարագրելէ ետք, 1946ին ան լոյս ընծայեց իր առաջին վեպը՝ «Արեւիկէի տղաքը», որ նուիրագործեց իր մտտերը Սփիւռքի գրականութեան մէջ: Այնուհետեւ հրատարակեց վիպական սեռին պատկանող չորս գործ եւս՝ «Արծիւները անապատին ձկնը», «Կը հրածարիմ Հայաստանէ», «Կրակէ լապիկը», «Լոյսերը», սպա՛ չափածոյ հասար մը՝ «Վերադարձ» եւ բնօրինակներու ժողովածու մը՝ «Հայկական Սփիւռքը իր գերակատարներով»:

Փօլատեանի վեպերը, պատմութեանը, կէս հրապարակագրական գործերն ու հրատարակագրական նշմաները կարգաւորեցան օրին եւ մինչեւ այսօր ունին իրենց ընթերցողները, բայց եթէ պայման է (եւ պայման է) առաջին կերպին հայտի առնել սուր գրողի բնութեան ներքինը, ապա ուրեմն, Փօլատեանի պարագային, անպայման կանգ պիտի առնենք իր իրագործած գրողներուն ազգի:

Քրոջի սերը, իրեն յաջում եւ իրագործում՝ բացարձակ նորութիւն մը չէ հորկու, բայց Սփիւռքի գրականութեան մէջ Փօլատեանն էր, որ անոր տուաւ առանձին նշանակութիւն մը, լոյսին բերելով, բերել՝ սակավ վարկածային քննութեան կողմէն հարցազնուեցնելով, իրագործութիւններու միջոց պատճառներ, բարեմակեց, հակառակութիւններ, տօնացումներ: Միջին ծառայով կինը հասար են Փօլատեանի լոյս ընծայած գրողները, որոնց առաջին երկուքը մեծաւանդ, իրենց իտերին ու շունչին շնորհիւ՝ երբեք պիտի չկորսնցնեն իրենց այժմեալները:

Կ. Փօլատեանի վաստակին մէջ պակաս տեղ մը չի գրուել նաեւ քաղաքական գրականութիւնը՝ իր երկու երեսով, փրանսերէնէն հայերէն եւ հայերէնէն փրանսերէն, առաջինը իր սակական նախանձնութեամբ, երկրորդը՝ Նարեկացիով ոգեշնչուած ու մեր իրականութեան մէջ խոր հաճարում վայելած Լիւի-Ամորէ Մարսելի իրեն աշխատակից: Նարեկացիէն ետք, Ֆրանսացիներուն հնարաւորութիւն տրուեցաւ իրենց լեզուով կարգաւորուող քանակականութեան միւս երկու հեղանակներէն՝ վարուժանէն եւ Ձարեկցէն նմայնեք, ձեռնարկ մը, որուն իրագործումը Լիւի-Ամորէ Մարսելին չափ կը պարտինք Փօլատեանի նախանձնութեան, ոգեւորութեան, հետնողականութեան, Փօլատեանի անակարկ գեղարարութեան...

Ան կը ճանչնար Ֆրանսայի ժողովուրդն ու փրանսական գրականութիւնը՝ միջին փրանսացիի մը չափ, գիտէր փրանսերէնը՝ մայրենի լեզուին պէս եւ այդ հանգամանակներուն

ընթացում է, որ համարակարգի բայտ համարաւար դէմքերում դուռները, անոց մօտ կե-
տաքրքրութիւն սանդո՛ւ հայ ժողովուրդին ու գրականութեան շուրջ, ծանօթութիւնները
խորացնէ ու քաղէ վկայութիւններ, որոնք անզնիւի են...

Կտաճումներով բարի էր, բնութարարները առատաճան, համբար ուներ իրքիւ կեն-
տաւէր եւ իր ծառայութեան տենդը չափ ու սահման չուներ: Իր այդ ազնիւ մղումներու կեն-
տագործման մէջ էի զիստ շնորհակալ հարկաւ բախտը, որ մեզի ծանօթ գրողներէն շատէ մեկէն
աւելին շատը եղաւ իրեն հանդէպ՝ ժամանակային քէ նիւթական զոյգ հնարաւորութիւննե-
րով: Կրճար արեւտ ասեմ արեւտ՝ արշու՛մ ասեմ եւ նոյն դիրքութեամբ յարգել արշու՛մը՝
յսմանն աշխատանքի, համարակարգի քէ նորարարութեան, մղումն է հարկէ, անհամարժեքացող
մտազարկերի մը, նոր ապրումի մը, մտածումի մը, վկայութեան մը է իմնքիւր, միշտ մեր
ժողովուրդի՛ համար, անոր գրականութեան ու պատմութեան հաշուայն, գիրքի ու խօսքի
նամբանքով:

Այս բոլորը, կրկնեմք, նուիրում կ'ուզէին անշուշտ, եւ փոյտեան լի էր նուիրումի
տարումներով, կիրք կ'ուզէին եւ փոյտեան ուներ այդ խմորէն, ժամանակ կ'ուզէին, եւ
փոյտեան շինայեց իր ժամանակը մեր ժողովուրդին եւ մշակոյթին օգտին:

Ներկայութիւն մըն էր, զարժաւ զգալի բացակայութիւն մը...

4. Փ Օ Լ Ա Տ Ե Ա Ն

Զ Ր Ո Յ Ց Ն Ե Ր



Լ Ի Ի Ք . Ա Ն Տ Ր Է . Մ Ա Ր Ս Է Լ Ի Ն Ե Տ

— Ի՞նչ է ձեզի համար բանաստեղծութիւնը:

— Ոչ ոք գտած է այդ հարցումին պատասխանը, դո՛ւ չապուցիչ կեր-
պով: Ետանք զգացած են, բայց չեն կրցած բառերով սահմանել: Հատ մըն
ալ ես փորձեմ. — Բանաստեղծութիւնը մարդկային խորունկ պահերու, վի-
ճակներու տիրացումն է, որ կը ձգտի բացարձակ զեղեցկութեան եւ բա-
ցարձակ ճշմարտութեան իմացումին: Բառերու կոյտ մը, ինչպէս ըսի, ա-
սոր պէս տասնեակ մը փորձիւններ կարելի է իրարու քով շարել, առանց ար-
դիւնքի:

— Ի՞նչ կը խորհիք զեկամարուած արուեստի մասին, հարցաւ անկատէ՞
գրականութեան մասին...

— Ծիծաղելի կը զանեմ...: Արուեստը չի կրնար հպատակիլ հաւա-
քական օգտապաշտական առաջադրութիւններու: Ճիշդ ասոր հակառակն է:
Բանաստեղծութիւնը անհատական ստեղծագործութիւն է, ինչպէս բոլոր ար-
ւեստները, ո՛չ միայն անհատական, այլեւ այդ անհատին մէջ գոյութիւն
ունեցող ամէնէն եզակի, ամէնէն առանձնապատուկ ժայթքն է, զգայնութիւնն
է: Այդ անհատին ներքին զեղեցկութիւնն է, անխարդախ, անշեղ: Ինչպէ՞ս
կարելի է այդ եզակի զգայնութիւնը, մտածելակերպը ի սպաս դնել քաղա-

Մտածումի եւ զգայնութեան խեղճութիւնը կ'ուզենք ծածկել արտասոց ձեւերու տակ... Աւելն է, որ հետըզհետէ կը պակսի, պէտք է վերանորոգել, նոր շունչ մտցնել։ Բայց ոչ մակերեսային հասկտութիւններով, անպայման տարօրինակ դառնալու մարմաւորով։



ԼԻՒՔ-ԱՆՏՐԷ ՍԱՐՍԷԼ

Քական կամ դասակարգային այս կամ այն վարդապետութեան։ Արուեստը ամբողջութիւն մը կը կազմէ, սէտք չունի դուրսէն եկող որեւէ հրահանգի։ Արուեստը ի՞նչ կրնայ հրահանգներ տալ, բայց երբեք չի կրնար ստանալ։ Պրոֆիլ դիժում մը՝ կը դադրի արուեստ ըլլալէ, կ'ըլլայ ամէն ինչ, քարոզ, զբօսանք, խաղ, ինչ որ կ'ուզէք։

— Որո՞նք են ձեր նախընտրած հեղինակները, վեր ի վերայ կը կոտորեն, բայց...

— Պատէր, Մայրամէ, Վալերի, Ֆրանսական վերջին ժամանակներու բանաստեղծներուն մէջ, բայց ինծի համար Ֆրանսական հանճարին բիրտզայտն ներկայացուցիչը Ռասինն է։

— Ի՞նչ կը մտածէք Ֆրանսայի արդի հակասական եւ բիչ մը խառնակ ուղղութիւններուն մասին։ Ի՞նչ կը յուսաք որ դուրս գայ այդ...

— Ըսէք, մի՛ վախնաք, այդ քառսէն։ Մտածումի եւ զգայնութեան խեղճութիւնը կ'ուզենք ծածկել արտասոց ձեւերու տակ... Աւելն է, որ հետըզհետէ կը պակսի, պէտք է վերանորոգել, նոր շունչ մտցնել։ Բայց ոչ մակերեսային հասկտութիւններով, անպայման տարօրինակ դառնալու մարմաւորով։ Հոս տեղն է, որ ըսեմ։ Երբ մօտեցայ հայ բանաստեղծութեան, կը յուսայի ներշնչման նոր աղբիւրներ գտնել, չէի սխալած։ Ֆրանսացին հետաքրքիր միտք չէ, իրմէ հետուն չ'ուզեր տեսնել, ինչ որ սխալ մըն է։ Պէտք է պրպտել, փնտռել։ Գրականութիւնը ծառի մը կը նմանի, երբ ծերանայ, պէտք է խորհել զայն պատուաստելու մասին։ Գիտէ՞ք ինչ է, իր բերած բոլոր զեղեցկութիւններէն ալ վեր, հայ բանաստեղծութեան դասը։

— Կ'ուզէի զայ այդ հարցումին, ի՞նչ լաւ եղաւ, որ բնակամօրէն դուք եկաք, — ի՞նչ է, ընդհանուր կերպով այդ նոր փերթաւածներուն ձեր վրայ ձգած տպաւորութիւնը, ի՞նչ դասի մասին է ձեր խօսքը։

— Ահաւասիկ, — զեղեցկութիւնը, ինչպէս նաեւ սէրը, կամքի խընդիր մըն է, բռնի չ'ըլլար։ Հայ բանաստեղծութիւնը մեզի շատ թանկադին ապացոյցը կու տայ այս ճշմարտութեան։ Ան, այդ բանաստեղծութիւնը, ուզեց հասասարիլ ամէնէն համեստ առարկաներուն, ան մեզի ցոյց կու տայ, թէ այս ետապաշտական դարուն չկայ աւելի յիմար եւ աւելի սուղ արժող փափաք, քան ամէն բանի մէջ եւ ամէն բանի դէմ զարտուղի երեւալու մոլութիւնը։ Ինքնասպտութիւնը բնական երեւոյթ մըն է եւ ոչ թէ կանխամտածում։ Ինքնասպտ կրնայ դառնալ ա՛ն՝ որ ինքզինքը կը զգայ ազատ ու հասարակ։ Իրականութեան մէջ, ամէն իրաւ բանաստեղծ կ'ուզէ նմանիլ։ Ու զերթուածը կը դառնայ փոխանցում մը, իրմէ, իր երգած առարկային, հե-

տեսարար փրկուած ձեռ մը, փրկուած նիւթէն եւ տարկայէն: Որովհետեւ նմանելուն մէջ է տիրացումը, նմանութեան մէջ է խօսութիւնը:

Այս է Հայ բանաստեղծութեան մեղի տուած մեծ դասը: Լաւ հասկըց-ւելով, ան կրնայ բարեփոխել մեր գեղագիտական ըմբռնումները, մեր այ-սօրուան հիւանդկախ տեսակէտները արուեստի մասին, առողջ ու պարզ չի-նուկ մը պատուաստել ներացած մեր գրականութեան:

— Ինչպէ՛ս խոր կը վերլուծէք ամէն խնդիր: Ձեռ գիտեր, թէ կրցա՞յ մշտնջեն արտայայտել ձեր մտածումները: Ուրիշ հարցում մը, եթէ կը հաճիք.— Ի՞նչ տպաւորութիւն կրեց առհասարակ ֆրանսացի բնօրհայտը ձեր քարգմանութիւններէ: Խանդավառութիւնը մեծ էր ձեր դասախօսութեան գիշերը, բայց ուրիշ արձագանքներ ունեցա՞նք ձեր քարգմանութիւնները, ֆրանսական աւելի լայն շրջանակներու մօտ:

— Պ. Պարսը թող ըսէ, թէ որքան նամակ է ստացեր: Ամէնն ալ Հիւ-ցած են, գարմացած, անակնկալի եկած: Նամակներու դէպ մըն ալ ես ու-նիմ... Եւ գիտե՞ք զիս ամէնէն աւելի յուզողը, ամէնէն մեծ հաճոյք պատ-ճառողը ո՞րն է, Ֆրանսահայ երիտասարդ բանաստեղծէ մըն է... անունն է միայն Հայ, եւ Հայերէն չի գիտեր, «Քայիլի տիւ սիւտսի մէջ գրած է Ֆրանսերէն շատ սողուող ստանաւորներ, տաղանդ ունի եւ կը կոչուի Արմէն Դարբինեան, կը բնակի Նիսի կողմերը: Նամակը քովս չէ, բայց վեր ի վե-րոյ կ'ըսէ հետեւեալը. «Ներք կարդացի ձեր յօդուածն ու թարգմանութիւն-ները, խղճմտանքս սկսաւ զիս տանջել, թէ ինչպէ՞ս, ես, Հայ անուն կրող երիտասարդ, մինչեւ այսօր անգիտացած եմ այդ հրաշալի գեղեցկութիւն-ները... Առաջին անգամ ըլլալով ինքզինքս հպարտ զգացի Հայ անուն մը կրելուս, եւ... առաջին անգամ նաեւ մեծ ուժով մը, անկէ այդքան հեռա-նալուս»:

— Իրապէս որ յուզիչ է... Յամեմայնդեպս դուք յաջողած էք հո՞ն՝ որ մեմք կը ձայնդիմք, մեզմէ փախչողներն անգամ մեզի կը վերադարձը-նէք... Այս մէկուն չէի տպաներ:

— Եւ ըսել թէ այդ քանի մը քերթուածները միայն մէկ անկարեւոր մասն են: Կ'երեւակայեմ, թէ դեռ ինչե՞ր կան... Յօդուածէս ի վեր տե-սածներս դադարիս մը կու սան մնացածին մասին:

— Այո՛, միայն մէկ մասն է, ուրիշ ամուսներ կան, ուրիշ գործեր, մայնիսկ աշուղներէն, մեր միջնադարու բանաստեղծներէն կարեւորներ կը պակտին... Մարդ բան չէ՞ ըսած ձեզի ներսէս Ենոքիայի մասին... Որ-բան հեղեղային է Նարեկացիին, այնքան թնժուշ ու թիւրեղային՝ Ենոքիային: Վստահ եմ թէ պիտի սիրէք գայն, իր դասական մաքուր տաղերը...

Առաւօտ լուսոյ.— Արեգակն արցար.— Առ իս լոյս ծագեալ...

— Ի՞նչ քաղցր է, չեմ լսած այդ անունը եւ ոչ ալ այդ տողերը: Գի-տեմ սակայն, թէ դեռ ինչե՞ր չեմ գիտեր...

— Նայնիսկ Զիւսանի՞ն, իսկ աւելի մեծ աշուղ մը, Սայաթ-Նովա, ծա-նօ՞թ էք անոր, դուք որ երաժիշտ ալ էք...

— Սայաթ-Նովա՞, Սայաթ-Նովա՞... Կարծեմ թէ լսած եմ, այս ան չէ՞, որ նահատակուեցաւ եկեղեցիին մէջ:

— Այո, մայն իմքն:

— Ձէք կրնար երևակայել, թէ որքան եմ յուզուած, որքան եմ մտածած: Ամբողջ գիշեր մը այդ տեսարանը աչքէս չ'հեռացաւ... Հայ ա-շուղ մը կու դան կը բռնեն եկեղեցիին մէջ, հաթաղանը իրենց ձեռքին... ա-ռաջարկելով, որ ուրանայ իր հուսադը... Եւ այդ Հայ աշուղը իր սնրա-

գործներուն լիբուով ոտանաւոր կը շինէ ու կը պատասխանէ...: Նոյնիսկ ըսին բառ առ բառ այդ երկու տողերը, ինչպէ՞ս էր:

**Զըխմանամ Քիլիսատամ
Տէօնմանամ Խատամ:**

— Ամբողջ Հայ ժողովուրդի կեանքը այդ երկու տողին մէջ է, ու նաեւ ամբողջ Հայ բանաստեղծութեան մեծութիւնը. ոչ մէկ ժողովուրդի մէջ ժողովուրդն ու բանաստեղծութիւնը չեն նոյնացած, չեն ձուլուած այսքան սերտօրէն, որքան ձեր մէջ:

— Ըսած էիք Նարեկացիի եւ Քուչակի մասին, թէ...

— Այո, բանաստեղծ մը՝ Նարեկացին, որ կը վերածուի սուրբի, կը պաշտուի սուրբի մը պէս, կը մխիթարէ ու մահը կը քաղցրացնէ... բանաստեղծի մը Համար, ի՞նչ հրաշալի ճակատագիր: Եւ ահա, ուրիշ մը, Սալաթ-Նովան, աշուղ մը, իր հերոսական երկու տողով, ամբողջ ողբերգութիւնը, ամբողջ գեղեցկութիւնը ցեղին:

ՓՕԼ ԷԼԻՒԱՐԻ ՆԵՏ

— Ի՞նչ է գերիբապաշտութիւնը:

— Օհօ՛, գիտէի թէ գիտ նեղը պիտի գնէիք: Գերիբապաշտութիւնը...: Կարելի՞ է քանի մը վայրկեանի մէջ սահմանել զայն:

— Դուք կը գտնուիք այն խաւովին մէջ, որ հիմնեց այդ դպրոցը, այիտի հանէի՞ք Բանի մը բառով ըսել, թէ ի՞նչ կ'ուզէիք ընել:

— Ի՞նչ կ'ուզէիք ընել...: Օ՛, կ'ուզէիք շատ բան ընել, կ'ուզէիք աշխարհը տակնուվրայ ընել, կերպարանափոխել մարդկային Հասկացողութիւնները: Սրբազան խենթութիւն մը, որ միայն կրնայ ծաղկիլ երիտասարդ ուղեղներու մէջ: Կասակը մէկդէ: Կ'ուզէիք մեր հոգին պատմել: Առաջին Համաշխարհային պատերազմէն դուրս կ'ելլէիք: Աշխարհը փոխուած էր, մարդիկ փոխուած էին, եւ իրենց հետ՝ իրենց հոգին: Մեր գեղեցկագիտական, բարոյական, ընկերային ըմբռնումները շփոթութեան մէջ էին: Ուղեցինք այդ ժամանակին հոգին տալ:

— Ես կը կարծեի, թէ գերիբապաշտութիւնը մտաւորական արկածախրման արարչութիւն մըն էր:

— Եստ ճիշդ, եւ այդ նոյն բառը գործածած ենք մենք ալ: Ինչպէս բառն ալ ցոյց կու տայ, մեզ շրջապատող առարկաները, շարժումները, աւելի հեռուն երթալով՝ անոնց ծնունդ տուող զգացումներն ու գաղափարները տեսնելու նոր ձեւ մըն է, տարբեր ձեւ մը: Մտաւորական արկածախրման արարչութիւնը տեսողական էր:

— Այդ էր պատճառը կարծեմ, որ նկարիչները գերախալութիւն մը տեսնեցին մէջ, բանաստեղծներու, գրագէտներու անմիջապէս կողքին:

— Ժիշէ, զարձեւալ ճիշդ: Ա. Պրեթոն, Արակոն եւ ես, շատ բան կը պարտինք իրմտի, Փիլասոյի եւ Երիտոյի: Աւելի ճիշդը՝ այդ նկարիչները նոյնքան, Լթէ ոչ աւելի՝ մեր դրօշակներն են: Գեանքը տարբեր անկիւնէ



Բանաստեղծը պէտք է օգնէ մար-
դուն, որ ինքզինք ազատագրէ: Բանաս-
տեղծը պէտք է աշխատի, որ բոլոր
մարդիկը իրարու միանան, զանոնք
միմիջարե ևս իրանդալուէ, զանոնք
ներշնչէ:

ՓՈԼ ԷԼԻՒԱՐ

Մը դիտել, իրականէն տարբեր տեսնել, ո՛չ թէ փոխել, խեղաթիւրել, այլ
աւելի թափանցել, դժուարութիւնները մասերու բաժնել, առանձին-առան-
ձին ուսումնասիրել: Չգոհանալ, ինչպէս իրապաշտները կ'ընէին, պարզ լու-
սանկարներով, այլ մեկնել ամէն առարկայ, ամէն մտածում ըստ մեր ներքին
հայեցողութեան, մեր տեսողութեան:

Շատեր դու մինչև հիմա կը կարծեն, թէ մեր զիչ մը տափակ, հա-
տարակ բանաստեղծութիւնները, այլանդակ նկարները, ուրիշները զարմա-
ցընելու համար ստեղծուած, մեր խելապատկէն ելած խաղեր են: Ի հարկէ
զայնթակղութեան բաժին մը կայ. կ'ընդունիմ, թէ ուզեցինք նախ զայնթակ-
ղեցնել, արտասոցութիւններ բրինջ, բայց ամէն յեղափոխական շարժում
այդպէս կը սկսի: Պէտք է քանդել գոյութիւն ունեցող բոլոր կեղծ ըմբռնում-
ները՝ նորը կառուցանել առաջ: Արուեստները դասակարգի մը համար չեն
ստեղծուիր: Պէտք է ընդունիլ, թէ սնունք, արուեստները, սկսած էին գիր-
նայ, լաւ սնունդ աւնող մարդու պէս նարայ կապել: Պէտք էր նօսքացնել ա-
նոնք թանձրացեալ արիւնը, թեթեւցնել, ժողովրդականացնել, աւելի մարդ-
կային դարձնել:

— Սկիզբէն ի վեր ա՞յդ է եղած գեորդապաշտներու տիրական մտանք-
գութիւնը, թէ մեր վարդապետութիւնը յեղաշրջուած է հետզհետէ եւ հասած
այսօրուան ըմբռնումին:

— Կ'ուզէք դիտ նեղը զնել, անձանօթ բայց ա՛լ ինծի շատ մօտիկ բա-
րեկամս: Հաւանաբար իրաւունք ունիք այդ հարցումը ընել եւ կը հասկնամ
անոր տակ պահուած կասկածը: Բայց պէտք է ըսել, գոնէ ինծի համար,
թէ, այս՝ սկիզբէն ի վեր ա՞յդ է եղած մեր մտահոգութիւնը:

— Կ'ընդունիմ ձեզի համար, մեր ամբողջ գործին մէջ 25 տարի է շե-
ղում չկայ: Անգեալ պատերազմէն մինչեւ այսօրը ան կը յառաջանայ ուղիղ
նամբով մը, եւ երբ մեր առաջին գրուածները կու գան կը միանան այսօր-
ւաններուն, առաջինները կը բացատրեն վերջինները, առաջինները կը յան-
գին վերջիններուն. սակա՛ն նուազագոյն սքժէ՛քը չէ մեր ամբողջական գոր-
ծին:

— Շնորհակալ եմ, ուրախ եմ որ այդ տպաւորութիւնը մզած եմ ըն-

Քերցողին վրայ: Ձեր բերնէն ելած այս հաստատումը, ամէն զնահասու-
թենէ աւելի զիս կ'ուրախացնէ:

— Ձեմ ուզեմ ձեր սուգ ժամանակը սպառել, որովհետեւ զիս հեռա-
բլրոքով արիւշ պատասխաններ ալ կ'ուզեմ հետս տամիլ այսօր:

— Կարեւորութիւն չունի: Եզրակացնելով պէտք է ըսել, թէ գերիթա-
պաշտ բանաստեղծութեան մը գլխաւոր յատկութիւնը, մտահոգութիւնը, ո՛չ
թէ զգացում մը, հոգեվիճակ մը ներկայացնել է, այլ՝ Յերշմշիլ:

Ահագին բան գրուած է գերիթապաշտութեան մասին, սխալ թէ շի-
տակ: Անկարելի է անոր յարուցած բոլոր խնդիրները քննել այսպէս հապ-
ճեպ կերպով: Կը հասկնաք, ան միա՛յն գրական դպրոց մը չէ. հիմա կա-
րելի է ըսել, թէ ապրելու գերիթապաշտ ձեւ մը կայ, հագուելու, խորհելու,
սիրելու, գրելու, նկարելու գերիթապաշտ եղանակ մը: Այդ բոլորը սակայն
գրողներէն յիշեալ են, չեն բացատրեր ամէն ինչ: Գերիթապաշտութիւնը հա-
մաշխարհային դարձած է. ամերիկացիներու ըմբռնումը բոլորովին տարբեր
է մեր ըմբռնումէն, եւ պրագմատիկացիներունը՝ ուրիշ հազուատ հազած է:

Ներշմշիլ, անա՛ մեծ բարը: Հոս մենք կ'երթանք, կը միանանք ար-
ւեստագէտին տրուած հին կոչումին, առաքեալ մը, մող մըն է ան: Եւ այդ
կ'ենթադրէ հասարակական գործունէութիւն մը: Ես եւ մեր խումբը չէինք
ուզէր որեւէ ձեւով հետու մնալ ժողովուրդէն, մարդէն: Ես իրաւունք եւ
պարտականութիւն կու տամ ինքզինքիս խառնուել հասարակաց կեանքին:

«Արուեստը՝ արուեստին համար», ի՛նչ նեղ եւ փուճ ըմբռնում:
Բանաստեղծը պէտք է ոգնէ մարդուն, որ ան ինքզինքը ազատագրէ.
բանաստեղծը պէտք է աշխատի, որ բոլոր մարդիկը իրարու միանան, զա-
նոնք միմեկարէ եւ խանդավառէ, զանոնք Յերշմշիլ:

Արուեստագէտները պէտք է ընդունին, թէ իրենց կ'իյնայ այս անպի-
տան, չար, միշտ ինքզինքը բզկատող մարդկութիւնը փոխելու, ազնուացնելու
գործը:

Կեցէք ձեզի բան մը ըսեմ, որ շիջ մը գերիթապաշտ ըլլայ. սկիզբէն
ի վեր պատուելիի մը պէս կը խօսիմ: Նայեցէք, մարդիկը աւելի ակնիւ ը-
նելու համար ես կ'ուզեմ, որ արմատական փոփոխութեան մը ենթարկենք
անոնց կեանքը: Մարդս պէտք է հրաժարի միս ուտելէ: Գէտք է, բացի մար-
դէն, բոլոր կենդանիները փճացնել միանգամ ընդմիջտ:

— Ինչպէ՞ս կարելի է այդ:

— Մէկ վայրկեանի մէջ ամբողջ քաղաքի մը բնակիչները սպաննելու
միջոցը խորհող մարդիկը կրնան շատ դիւրութեամբ այս գործն ալ գլուխ
հանել:

Կը տեսնէ՞ք, ամէն օր, ազանի մը, նապաստակ մը, եզ մը մորթող
մարդը մորթելու վարժութիւնը կը ստանայ, կ'ընտելանայ որեւէ շնչաւոր
արարած մորթելու գաղափարին հետ, եւ երբ կը գտնուի իր նմանները մոր-
թելու, չըսենք ստիպումին, այլ պարզ մտածումին առջեւ, չի քաշուիք, չի
սոսկար: Սպանդանոցները առաջին դպրոցներն են ոճրագործութեան, նախ՝
մարդէ մարդ, յետոյ՝ խումբէ խումբ, վերջապէս՝ ազդէ ազդ: Մենք է, որ
զանոնք կը պատրաստենք այդ աշխատանքին համար:

— Ինչո՞վ պիտի սնանի այդ նոր մարդկութիւնը:

— Հարցումը նոյնիսկ աւելորդ է: Կենդանիներու միսը ո՛չ միայն ան-
հրաժեշտ չէ, այլ՝ նոյնիսկ վնասակար մարդկային օրկանիզմին:

— Գիտեմ, թէ ի՞նչ պիտի պատասխանէ հետեւեալ հարցումիս, —

հասպա՞ քոյ կենդանիներու մեզի տուած ուժը, անոնց մեզի ընծայած օգնութիւնը:

— *Հիւլէական դիւտի այս դարուն հասկցաք, թէ աւելորդ է այդ մասին մտահոգուիլ: Մտածեցէք ասոր վրայ, — ըսաւ. հլիւար ոտքի ելլելով: Յետոյ ուսիս վրայէն հայերէն անո՞ւնք անո՞ւնք անո՞ւնք անո՞ւնք անո՞ւնք, հարցուց.*

— *Ուրիշ ի՞նչ եիթ կայ օրակարգին վրայ:*

— *Կուզէի, որ քանի մը վայրկեան ալ խօսէիք Դիմադրական գրահանութեան մասին, եւ ձեր ունեցած սքանչելի գործունէութեամբ՝ գերմանական գրաւումի տակ հեծող ֆրանսացի մեծ ժողովուրդի մէջ:*

— *Լա՛ւ, բայց սկսաւ կոկորդա չորնալ, բան մը խմենք. կեցէ՛ք վայրկեան մը:*



— *Հասպա դիմադրական գրահանութեան մասին հարցումս:*

— *Հարկ չկայ, — ըսաւ ան ձեռքը ինծի երկարելով, — հայերուն պէտք չունիմ այդ մասին խօսելու, դուք աւելի լաւ գիտէք, զայցէք հարցուցէք ձեր դրագէտներուն, զայցէք հարցուցէք այն անմասն տղոց, որոնք հոս եւս, Ֆրանսայի մէջ, ցոյց տուին մեղի, թէ ի՞նչ է Դիմադրութիւնը, Ազատութեան համար հերոսական պայքարը.*

Դուրս ելայ յուզուած, լալու աստիճան, ուրախ, երջանիկ, եւ հըպարտ՝ Հայ ըլլալուս:

Ֆրանսայի մէջ ապրող մեծազոյն բանաստեղծէն, գերիւրապաշտ բանաստեղծէ մը, զոր տարօրինակ բան մը կը կարծէի, պիտի լսէի իմ ազգիս մասին ամէնէն յուզիչ բառերը:

Եւ այս իմ մեծագործն դարձանքս պիտի ըլլար, այդ դրոյցի ընթացքին, ուր ուրիշներ ալ շղակահեցան, ինչպէս պիտի հաստատեն ընթերցողները:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՆԵՏ

— *Լա՛ւ... Գիտեմ, որ 1912ին Պիլնիքս էիք: Ինչպէ՞ս եղաւ որ անցաք Վենետիկ եւ...*

— *Հա՛, դա մի շատ կարեւոր հարց է: Հարկ է պատմել իմ կեանքի այդ անկիւնագարձը: Ինչո՞ւ եմ զնայել Վենետիկ եւ ինչո՞ւ եմ ուզեցել հայերէն սովորել... Ինձ այդ դադափարը թելադրել է էմիլ Վերհարնը...*

— *Ինչպէ՞ս, լաւ չեաւկցայ, էմիլ Վերհարնը ձեզի ըսել է, որ երթաք Վենետիկ եւ հայերէն սովորէք:*

— *Այո՛, եթէ կարելի է էլ պէս ասել, Դէպքը տեղի է ունեցել էսպէս: Վերհարնը ծանօթ բանաստեղծ էր ու մենք մտերիմներ էինք: Յաճախ ինձ կարդում էր իր քերթուածները: Մի երեկոյ նրան տեսայ իմ սենեակում, մի քնի յուզուած: Ինձ երկարեց մի ինչ-որ գրական թերթ, Փարիզ հրատարակուող: Մի ջննադատական յօդուած էր իր վերջին հատորի մասին: Մեծ գովեստով էր խօսում նա իմ բարեկամի մասին: Կար էնտեղ մի տարօրինակ*



Մեր հպուստից զճրտաբար մեռել է միայն կմաթը: Մնացել է արտաքին գեթը, կրեկ է ներքին կրեմ-փիլիսոփայական բնոյթը: Հայ բանաստեղծը պէտք է այդ վերականգնի:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

միտք նաեւ: Յօդուածագիրը ասում էր, որ տեղ-տեղ երեւում է քերթողի պելճիքացի լինելը, թէ նա տիրապետելով Հանդերձ Փրանսերէնին...

Այժմ հասկանում էի ընկերոջս վրդովումը: Յիմար էր էդ դրողը, մայրենի լեզու չի՞ Փրանսերէնը, կարելի՞ էր մի հրպիտի յիմարութիւն ասել կմիլ վերհանի մասին: Բուռն կերպով բողոքեցի գրուածքի այդ մտքին դէմ եւ նոյնքան կորովի կերպով սկսեցի պաշտպանել իմ ընկերը: «Ուշադրութիւն մի անի այդ յիմարի խօսքերին», մօտեցայ բանաստեղծ ընկերոջս...: Նա ինձ պիտեց երկարօրէն, օտքի կանգնեց, բռնեց ուսիցս եւ ասաւ.

— Կոստան, էդ յօդուածագիրը իրաւունք ունի, ես հասկանում եմ նրան, Հաստա՛ որ նա իրաւունք ունի: Հարկ է գրել մայրենի լեզուով: Արեւոտագէտը իր բարձրագոյն գեղեցկութեան կարող է հասնել միմիայն իր մայրենի լեզուով...: Դա մասամբ ճիշդ է ինձ համար, ու ճիշդ է մանաւանդ քեզ համար: Մայրենի լեզուով գրէր, Կոստան, եթէ ուզում ես մեծ գրող լինել:

Շատ էի սիրում վերհանին եւ իր խօսքերը հնչեցին իմ ականջին իբրև մի պատգամ:

Մի քանի օրից յետոյ ես վենետիկ էի...

— Շատ գեղեցիկ է ձեր կեանքի այդ դրուագը, ուրեմն զացիք վենետիկ հայերէն սորվելու, ի հարկէ բոլորովին չէիք մօռցած ձեր...

— Գրեթէ մոռացած, խօսում էի մեր դաւառի բարբառը իմ մանկութեան, քայց նրանից էլ մեծ բան չէր մնացել երկարատեւ ուսման տարիներէից յետոյ:

— Որքան մնացիք վենետիկ եւ սքմե՞ դա ասիք:

— Աւելի քան մէկ տարի, գիշեր-ցերեկ: Ինձ տուեցին երկու ուսու-

ցիչ, մին՝ դարարի համար, միւսը՝ աշխարհարարի: Հայր Ղազիկեանը եւ հայր Տիրոյեանը: Ողջ օրը մի խուցից միւս խուցն էի մտնում-ելնում: Վենետիկից անցայ Պոլիս եւ սկսեցի գրել հայերէն: Էնտեղ էին Հաւաքուել իմ սերունդի ընտիր գրողները: Հիմնեցինք «Մեհեան»ը, Վարուժան, Գեղամ Բարսեղեան, Յակոբ Քիւֆէճեան (Օշական), Ահարոն՝...

.....

— Մեր ճախնեաց մշակած արուեստներում մէջ ա՞րն է, ըստ ձեզի, որ կ'արտայայտէ եայ հագին լաւագոյն կերպով: Ո՞ր մէկուն մէջ հասած ենք մեծութեան, ամենայրի գեղեցկութեան: Հայ բանաստեղծութի՞ւնը, երաժշտութի՞ւնը, թէ արտարարութիւնը:

— Անտարկոյս մեր հարտարարութիւնն է: Այդ մասին շատ անգամ դրած եմ եւ նորից կրկնելու պէտք չեմ դրում: Հայ ճարտարարութիւնը այն հիմնական հոգեկան կառուցուածքն է, որ բնորոշում է հայ ժողովրդին: Այնտեղ է, որ պէտք է փնտռենք մեր հաւաքական ենթադրատկութեան պայմանութեան հասցրած արժէքները եւ նրանով է, որ պէտք է ներշնչուենք նոր ուղիներ որոնելու համար:

Մեր ժողովրդական բանահիւտութիւնը, մասամբ աղաւաղուած, սերտօրէն կապուած է նրա հետ: Մեր էպոսից դժբախտաբար մնացել է միայն կըմախքը: Մնացել է արտաքին ժեստը, կորել է ներքին կրօնա-փիլիսոփայական բնոյթը: Հայ բանաստեղծը պէտք է այդ վերականգնի: Պէտք է վերադառնի յայտնատեսութեամբ ներքին այն հոգեկան բովանդակութիւնը, այն տիեզերական շնչը եւ յայտնութիւնը, որ նախապէս կազմել է նրա կառուցողական մեծութիւնը՝ Հայաստանի Ուխտը:

Պատմական այս օրերին մենք ապրում ենք մերաւամա եւ արուցքամա մի բախտորոշ շրջան: Մէկ կողմից ազգը վերակազմւում է, միւս կողմից ցրւում եւ կորչում է: Ազգային գիտակից ուժերը պէտք է լծուեն ներառման գործին եւ ուրախ թափով վերականգնեն մրրկեցիկ ենթարկուած շէնքը: Կա՞յ աւելի զեղեցիկ գործ, քան այդ:

Մեր ժամանակի մեծ երեսօյթներից մէկն եմ համարում հայ երաժշտութեան անուպասելի դարգացումը: Այդ տեսակէտից Արամ Սաչաւորեանը նշանակալից եւ իսկապէս բախտաւոր երեսօյթ է: Նրա երաժշտութեան ամէն մէկ տողում վերապրում են դաշտանկարը, մեր լեռները, մեր ձորերը եւ մեր ապրումները: Ինձ համար նա հանճարեղ է:

— Ըստ ձեզի, ա՞ր արուեստն է, որ կ'արտայայտէ մարդկային հագին գեղեցկօրէն:

— Մարդկային հոգին արտայայտուելու համար իր գաղտնի ձեւերը ունի: Այդ ձեւերը դասաւորելու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Բոլոր արուեստներն էլ համարժէք են: Արուեստը չէ, որ ստեղծում եւ արժեւորում է մարդը, այլ մարդն է, որ արուեստին հասցնում է իր մտքեկան բարձրութեան համալսփութեան:

.....

— Գիտեմ, որ դուք եմարիչն էք գեղեցիկ բառի մը, էնթէրփէնէթրասիոն, ներքափանցում: Առաջին անգամ դուք էք գործածած այդ բառը: Կ'ուզէի՞ք բացատրել, թէ ի՞նչ էր ձեր նպատակը եւ ի՞նչ պարագագերու մէջ գոր-

ծածեցիք այդ բառը : Կարծեմ Փարիզ էր, ունեիք գրական թերթ մը, փրանսերէն : «Թուր տը Պապել» («Բարեխոնի աշտարակը») :

— Այդ շրջանին մի քանի մանիֆեստ էի գրել եւ շրկել բոլոր յայտնի բանաստեղծներին : Նրա մէջ շեշտում էի աշխարհների ներթափանցման անհրաժեշտ գործընթացի կարեւորութիւնը : Տաղորդ առաջինը եղաւ, որ ոգեւորուած պատասխանեց իմ կողմն : Բազմաթիւ ֆրանսացի գրողներ եւ արեւմտադէտներ — Լիտէն, Պիկասոն, Անդրէ Սալմոնը եւ ուրիշներ — սուսնիացիներ, որոնց մէջ հանդուցեալ Մալարոն, Ունամունոն, Սալինաքը, շատ լինացիներ, ճապոնացիներ : Ընդհանուր ոգեւորութիւն առաջ եկաւ եւ այդ բառը մտաւ ֆրանսական լեզուի մէջ : Հիմա, դրեթէ ամէն օր, թերթերի եւ հանդէսների մէջ հանդիպում եմ այդ բառին : Թէ ինչպէ՞ս հայ օտարին տարրեր, մղուած քաղաքական մտքի եւ այլ հանրակրօնի, խանդարեցին, խափանեցին իմ դործս, այդ մասին մի օր կը պատմեմ : Ինչ որ է՝ բառը մնաց :

— Ուրիշ հարցում մը, ի՞նչ է արուեստը ձեզի համար :

— Արուեստը ինձ համար ամբողջովին իրականանալու միջոց է : Նա տրուած է ինձ իրրեւ ճակատագիր : Զարգացնել ներքին եսը, ընդունել կեանքը ինչպէ՞ս որ է եւ իրականութեան բովից հասնել գերազոյն իրականութեան՝ ախեղբերականին :

— Ի՞նչ կը մտածէք օտար լեզուով գրող արուեստագէտներու մասին : Դուք ալ գրած էք ֆրանսերէն, իտալերէն, անգլերէն : Հայ գրողը պէ՞տք է գրէ օտար լեզուով, այսօր, տրուած պայմաններու մէջ :

— Օտար լեզուով գրելու մասին շատ անգամ արտայայտուած եմ : Մի երկու տարի սրանից առաջ, «Յուսարիք» այդ գրուածքներից մի մասը արտատպեց եւ ակնորդ է, որ այստեղ նորից կրկնեմ :

Ամէն մի արուեստագէտ կարող է փորձել, ի միջի այլոց, նաեւ գրել օտար լեզուով : Ես ինքս գրած եմ ոտանաւորներ ուսերէն, ֆրանսերէն, անգլերէն, եւ, վաստակելու համար, շատ լեզուներով յօդուածներ : Բայց դժբանք միայն զործի հետ ոչ մի կապ չունեն : Կալիգոններ են : Լեզուն արիւն է, արդ՝ արիւնը չի կարելի փոխել : Լեզուն սգի է, այդ սգին չի կարելի ազատագրել : Դրանք տարրական ճշմարտութիւններ են : Կարելի է ազդու օճով հայ եկեղեցի շինել : Կարելի չէ եւ հայը չի մտնի, ախտեղ չի աղօթի : Իսկ նրանք, որ ուզում են օտարանալ՝ բարի ճանապարհ, թող օտարանան : Արդէն հայութիւնը քանակ չէ, այլ որակ է :

ՍԷՆ-ՃՈՆ ՓԵՐՍԻ ՆԵՏ

Սէն-Ճոն Փերս կը շտկուի իր աթառին վրայ եւ երկու բազուկները կ'երկարէ իմ ուղղութեամբս :

— Հիմա կրնաք ընել ձեր առաջին հարցումը : Հա՛, չմտնամ շեշտելու, թէ իմ հիացումս կ'երթայ նաեւ հայ նոր բանաստեղծներուն : Վարուժանի, ի՞նչ մեծ բանաստեղծ. անոր իրապաշտ կտորները, սիրոյ վրայ, գլուխ-գործոցներ են... Լա՛ւ, ներեցէք այս ընդմիջումս համար, սերմն... — Առաջին հարցումս... : Առաջին հարցումէս առաջ՝ կ'ազդի յայտնուի հիացումս ձեր գործին համար : Եկած եմ իբրեւ հիացող եւ... Ընթացէ՛ք

անհամեստութեանս, իրրեւ հասկցող: Այս վերջին բառը ինձի չի վերաբերիր, այլ՝ հայ ժողովուրդին...: Բանաստեղծութիւնը սիրող ժողովուրդի մը կը պատկանի: Ու ի՞նչ հրճուանք է մեզի՝ ըմբռնելու ձեռք, փրանսական հրաշալի բանաստեղծութիւնը: Կը ճանչնանք գայն, կը զիմովնանք անով, սկիզբէն ի վեր: Ի՞նչ շքեղութիւն եւ ի՞նչ այլազանութիւն հոն:

Ամէն անգամ կ'ըսենք. — Ռասիներէ ետք, ա՛յ կարելի չէ ասկէ լաւ գրել: Կու գայ Հիւլան, անոր կը յարարէ Պօպէրը, Վերլենը, Ռեմպոն, Մալարմէն: Երբ ըմբռնենք Վալերիան, ըսի. «Ա՛յ ասկէ ետք կարելի չէ այս ձեւով ասկէ աւելի լաւ գրել»: Ու ահա քանի մը տարի առաջ գտայ ձեզ...

— *Քանի որ հասաք ինձի, հո՛ւ ալ կեցէ՛ք...*

Ձօգեց որ շարունակեմ եւ ինչ սկսաւ խօսիլ արագօրէն:

— *Վստահ եմ, որ պիտի հարցնէք, ինչպէս շատեր ըրած են, թէ ինչո՞ւ լեզուս կը վիտայ տարօրինակ բառերով: Կ'ուզեմ ինքնատիպ երեւալ, բառարանին մէջէ՛ն կը փնտռեմ այդ քիչ գործածուած բառերը, իմաստակուծութիւն ծախելու համար...*

— Ո՛չ, այդպիսի բաներ պիտի չհամարակէի ըսել ձեզի...: Առաջին ընթերցումով մը թերեւս մարդ տարուի խորհելու, թէ փնտրում է կայ ձեր բառերուն բնութեան մէջ, ձեր լեզուն, սակայն ոչ մէկ տոնն բռնագրօսիկ է ու ձեր բնական լեզուն է այդ, ձեր մտածումներուն հաւատարիմ գործիքը: Երբեմն ցէ բանաստեղծին համար լեզուն կընա՞յ նպատակ մը դառնալ, պաշտամունքի առարկայ, մա՛նուանք որոշ պարագաներու, օրինակ, պանդխտութեան մէջ:

— *Եթէ կը խօսիք ձեր ժողովուրդին մասին, թերեւս կրնայ պատահիլ այդ, լուռի կ'ըմբռնեմ ձեր ըսածը, բայց պէտք չէ իմ մասին չափազանցել անոր կարեւորութիւնը: Լեզուի մասին ահա իմ կարծիքս: Լեզուն, զոր կը գործածէ բանաստեղծը, կը համապատասխանէ՞ իր մշակած նիւթին, ա՛յս է կարեւորը: Ասոր համար քիչ առաջ հետաքրքրուեցայ նարեկացիով: Այդ դարձգարձիկ, իրենք իրենց վրայ ուրբուող հեղեղային նախազատութիւնները կը պատշաճին երգուած առարկային: Լեզուն, զգացումները, զազափարձները կ'ամուսնանան՝ իրարու հետ, ուրեմն՝ հոն կայ մեծ բանաստեղծութիւն մը: Երբ լեզու կ'ըսենք, կը հասկնանք, ի հարկէ, բացի բառերու շարքէն, ներքին կըտոյթ, շունչ, շարժում, եղանակ, լուծութիւն: Լեզու մը ունի լուծութիւններ...: Միայն մեծերը կըցած են գործածել այս հրաշալի վէճերը, — լուծութիւնը...*

— Ձերը ունի այդ յատկութիւնները. բայց ի՞նչ կը հասկնանք այդ վերջին բառով, կ'ուզէի՞ք բացատրել աւելի յստակօրէն:

— *Կրճատուած ոճ մըն է, մտածումը կ'արտայայտէք, բայց չէք ընդլայններ...: Ընդլայնում չկայ իմ քերթուածներուս մէջ: Վիպապայանութիւն, օրինակ, ամէն մտածում եւ զգացում կ'ընդլայնեն յետին մանրամասնութեան մէջ, շատախօսութիւն կ'ընեն, ճառի կը վերածեն քերթուածը: Արդի քերթուածը անտրամաբանական կը թուի յաճախ, որովհետեւ, այդ բոլոր ընդլայնումները հանուած են անոր մէջէն, մէկ զազափարձէն կ'անցնինք միւսին: Լուծութիւններ կան, ինչպէս կ'ըսէի քիչ առաջ:*

Ուրիշ խնդիրներ ալ կան: Օրինակ, հետեւեալը. բանաստեղծական բառեր կան, ուրիշներ՝ որ բանաստեղծական չեն: Լեզուներ կան, որ բանաստեղծական են, ուրիշներ՝ հակաբանաստեղծական: Յունականը հրաշալի է, լատինականը՝ չոր ու կարծր: Փրանսականը դեղեցիկ է, անգլիականը՝ ոչ: Անգլիականին մէջ ամէն առարկայ իր անունով պէտք է կոչել, ճշգրիտ լեզու է, վաճառականական լեզու: Մեզմէ երկու անգամ աւելի

Հա՛ շխոնամ շեշտել, թէ՛ իմ
հիացումս կ'երթայ նաեւ հայ նոր բա-
նաստեղծներուն: Վարուժա՛նը, ինչ
ձեռն բանաստեղծ. անոր իրասույտ
կտորները, սիրոյ վրայ, զուե-զուր-
ծոցներ են:

ՍԷՆ-ՃՈՆ ՓԷՐՍ



բառ ունին: Եւ էլիպագէթի զարէն սկսեալ ոտանաւոր կը գրեն: Այնքան
յատակ եւ ներզաշնակ են բառերը, որ զո՛հ կը զառնան այդ զէւրոթեան,
նոյնիսկ ամէնէն տաղանդաւորները, օրինակ, էլիոթը: Առարկայական է
անգլերէնը, ինչպէս լատիններէնը, իսկ յունական ու ֆրանսական լեզու-
ները վերացական են: Լեզուներն ալ ձեռագրներու նման են: Երկաթէն կտ-
րելի՞ է զարդ շինել: Ու ինձի կը թուի, թէ հայերէնն ալ վերացական լե-
զու է, ուստի՝ բանաստեղծական: Այսինքն՝ բառ մը կրնայ թիւադրել,
բացի իր իմաստէն, նաեւ ուրիշ բաներ:

— Այո՛, միշտ է ձեր ըսածը, մա՛նսումդ մեր գրաբարին, մեր հին
լեզուին մասին: Անցեալ օր, երբ կ'աշխատի հայերէնի թարգմանի ձեր
գործերէն հատուածներ, յանկարծ մտածեցի այս մասին: Որքա՛ն աւելի
գեղեցիկ պիտի ըլլար այդ թարգմանութիւնը, եթէ նարեկացիի լեզուով
կատարուէր: Բայց այդպիսի հարց չի կրնար ըլլար այսօր: Ո՛չ թարգմանիչ
կալ, ոչ ալ մա՛նսումդ ընթերցող...:

Ուրիշ հարցում մը, եթէ կը հանիք, մեզի համար շատ կարեւոր
Բացի գուտ բանաստեղծական արժէքէն գործի մը, որուն հիացողներն
ենք, ինչպէս ըսի, դուք մեզ կը հետաքրքրէք մաեւ աւելի, որսկհետեւ հե-
ղինակն էք «Աքսոր»ին: Արդ, մեմք կ'ապրինք տարիներէ ի վեր, դարերէ ի
վեր պանդխտութեան մէջ: Ու կը եհանանք ձեր բռնած դիրքին՝ այս դրժ-
քայտութեան դիմաց: Դուք տրամի չէք վերածած ախորը: Մեմք սակայն
ի՞նչ որ կ'ընենք չենք յաջողիք ազատի մեր դառնութենէն, մեր ցաւէն: Կը
տառապիմք, ու մեր տառապանքը մեզ դժբայտներու կը վերածէ: Ի՞նչ
պէտք է ընենք:

— Կը հասկնամ ձեզ, պէտք չէ լաք: Աքսորը տարում մը պէտք է ըլ-
լայ ձեզի համար, ինչպէս ինձի համար եղաւ: Պէտք չէ պատմէք աքսորը,
ձեր յուշերը, ձեր տառապանքները: Բանաստեղծը իր անձնական ցաւերու
մասին պէտք չէ խօսի, պէտք է անհետի իր նիւթին ետին: Թէ՛ ինչ կը մեծ-
նայ եւ թէ՛ իր աքսորը, այս ձեւով: Ուրի՞չ հարցեր...:

— Բանաստեղծին գերին, կամ պաշտօնին մասին: «Ամեր պաշտօն»ը
մեր մէջ» կը հարցնէք եւ կը պատասխանէք.— «Պատգամներու պարզա-

բանու՛մք: Միայն արեմն, պարզաբանու՛մը, որո՞՞նք են բուն պատգամները արձանագրելու արեմն, գիտունները արդեօք...:

— Ո՛չ, Պատգամները տիեզերքին մէջ են, բանաստեղծը դանոնք կը բերէ մարդերուն, կը բանածեւէ, կը պարզարանէ:

— Գիտունն ու բանաստեղծը նոյն ուղղութեամբ կ'աշխատին, ի՞նչ կ'ընէ մէկը, եւ ի՞նչ կ'ընէ միւսը: Իրարու հակառակ են անոնք:

— Ո՛չ, իւրաքանչիւրը կ'աշխատի իր մարդին մէջ, նոյն նպատակին հասնելու համար, — տիեզերքի ճանաչումը, ճանաչումը օրէնքներուն, որոնք կը զեկավարեն տիեզերքը, որուն մաս կը կազմենք մենք: Այնչի՛սն մէկն է անոնցմէ, որուն համար հրացում ունիմ ես: Անձնապէս ճանչցած եմ ու երկար ատեն խօսած հետը: Մեր դարու մեծագոյն մարդն է: Անոր արտասանած մէկ նախադասութիւնը, մա՛հէն առաջ, կը մնայ ամենազեղեցիկներէն մէկը, զոր ըսած եմ:

Իր աշակերտները, անոնք՝ որ իր թեւին տակ հիւսկան գիւտեր ըրին, ամէն օր կը ներկայանային իրեն՝ բանիով. — «Վարպէ՛տ, ձեր այսինչ վարկածը բացարձակ չէ, կը փորձենք մեր աշխատանոցներուն մէջ եւ տարբեր արդիւնքներ կը ստանանք, ինչպէ՞ս կ'ըլլայ»: Ուրիշ մը, ուրիշ աշխատանոցէ մը, կը յայտնէր նոյն մտահոգութիւնները, նոյն կասկածները:

Այնչի՛սն ըսաւ անոնց. — «Զեմ կրնար բմբունել տիեզերքի մէջ առնիշտանութիւն մը, չի կրնար ղիպուածներու խաղալիք ըլլալ տիեզերքը, մենք ենք, որ փորձերուն մէջ կը սխալինք»: Եւ վերջին նախադասութիւնը, ա՛յն՝ զոր կ'ուզէի կրկնել ձեզի. «Աստուած գալը չի նետեր»:

— Ի՞նչ է ձեր ըմբռնումը մարդկութեան մասին, ունի՞ք մասնաւոր փիլիսոփայութիւն մը:

— Հեղեղանին ամէնէն մօտ եմ, միութասիռնին կը հաւատամ: Մարդկութիւնը կը յառաջանայ միութասիռնի օրէնքով, շարունակ կը փոխուի, կը հողեփոխուի, սերունդները կը յայտնեն իրարու, ձգտելով երջանկութեան, համայնական սիրոյ: Աստուածներ չենք մենք, յիմարութիւն է նիպչէի գերմարդը:

.....

Վար կ'իջնենք, ծովային օդէն գինով:

— Կ'ուզէի՞ք մտածում մը գրել այս գերմանի էջին վրայ, — կը մտածում անոր:


Ան կը գրէ. «Ստեղծագործել՝ աւելի գեղեցիկ կեանք մը ապրելու համար, տեւելու համար»:

Կ'առնեմ ձեռագիրը եւ յուզուած կը մրմնջեմ եւ ինձի.

— Այո՛, ա՛յս է ճիշդ ուզածս, ի՞նչ լաւ հասկցաւ գիւ...: Սփիւռֆի մեր բանաստեղծներուն ուղղուած ի՞նչ յուզիչ պատգամ...:

ԿԱՆՕ ՓՈՂԱՏԵԱՆ

Ինչպե՞ս Եարժու՞մ



Յ. Գարսպէնյի Զննչան ՅՊանակին աւի-
թով, Մարտ 9ին, Լոս Անձելըսի մէջ տեղի ու-
նեցաւ յորեմանական հանդիսութիւն մը, ուր
յորեմար դրազէտը եւս ըսաւ իր խօսքը, որ կը
բովանդակէ իր հաւատոյ հանդանակին հիմնա-
կան գիծերը:

Կարապետի փորձառութիւնները եւ անոնց
հիմար կատարած իր շնչահարցումները հա-
ւատարի հիմք մը ունին եւ, ժառանգաբ'ը, անոնց
պիտի հանդիսանան լուս կամ բարձրամասի խոր-
հրդածութիւններու պեղեցիկ առիթ մը:

Հատորով վեց գործ լոյս ընծայած է Կարո-
պէնց եւ, չեալուած հրապարակագրական ու թըն-
նադասական ժառանգը, մամուլէ մէջ սրուած ըս-
տեղծագործական էջերը կրնան երեւ հատար եւս
լեցնել, բայց հակառակ առար՝ ստեղծագործա-
կան իր ծարաւը կը մնայ արբողած նայն վիճա-
կին մէջ, իր խօսքով՝ գեճմ քուսն է միշտ, քէ
վազուայ տակի՞ն ալի կարծես է յիմնուց:

Անկողը պիտի ըլլար մազթել, որ այդ ճիշ-
տուածը ուժի մէջ մնայ միշտ, որովհետեւ ինչ
դրազէտ՝ առանց այդ գիւտումին, տանց աւե-
կան այդ դատարկութեան...

ԳՐՈՂԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

Ես տակաւին մնում եմ երէկուայ փորձնապաշտ գրողը, որը կաղա-
պարուելի չի ուզում, չի հանդուրժում որեւէ կաղապար: Տակաւին փնտրու-
տուքի մէջ եմ թէ՛ որպէս ձեւ, թէ՛ որպէս բովանդակութիւն: Եւ զստակ չեմ,
թէ երբեւէ վերջնական հանդրուանի պիտի հասնեմ, որովհետեւ ինքը՝ կեան-
քը անհանդրուան է, աննախատեսելի: Այդ չի նշանակում սակայն, թէ պի-
տի դադարեմ փորձելուց, թէկուզ որքան էլ անանցանելի լինի վերելքի ճամ-
բան:

Գրում եմ, որովհետեւ կեանքը ո՛չ կատարեալ է, ոչ էլ արդար: Գրե-
լով փորձում եմ դտնել ճիշտ հարցումը, երբեմն էլ՝ պատասխանը: Գրելով
ջանում եմ փրկել ինձ, ապա՝ մարդուն: Հերոսներս ստեղծուած են, երբ տ-
նելի առջեւ է կանգնած մարդը, իսկ արդի մարդը խուճապ է ապրում: Երբ
հարցումներին պատասխան չեմ գտնում, ուժեղանում է ոճս: Գտնելու դէպ-
քում՝ ոճս տեղի է տալիս կուս բովանդակութեան: Հազուադէպ պահներին
ոճ ու բովանդակութիւն ներդաշնակ են ընթանում: Ստեղծուած է հրովա-
տութիւն:

Ես չեմ բաժանում Փրոյդեան այն տեսութիւնը, թէ ճշմարիտ ամէն ինչ

գրող պիտի սպանի արուեստի իր հօրը՝ ազատագրուելու եւ ուրոյն դիմա-
գիծ ստանալու համար: Անպատասխանատու այդ արարքը վայրագութիւն է,
վտանգաւոր եւ արտանիշը տհաս նկարագրի, որը փուլզման է ենթարկում
անհատին ու կայսրութիւններին: Որովհետեւ խուսափել պատմութեան հոյու-
մոյթից, նշանակում է խուսափել պատասխանատուութիւնից, թէկուզ ժո-
ղովրդավարական ինչպիսի կառոյցի մէջ, հակուած են հաստատելու իշխա-
նապետութիւն եւ ինքնայարատեւման մոլուցք: Արուեստագէտի ո՛չ թէ կո-
չումը, այլ պարտականութիւնն է ընդդիմանալ կոռուփարութեան կամայա-
կանութիւններին, ջննդատել սխալները եւ քողաղերծել խարդախութիւն-
ները, ա՛յնքան՝ մինչեւ որ մարդկայնանայ իշխանութիւնը: Իմ «Կարթագէ-
նի դաւտարը» վէպը բողոքի տղադակ է վիեթնամի պատերազմի դէմ, «Ալալի
գիրքը» ջննդատութիւն՝ սպառողական հասարակարգի դէմ, իսկ «Ամերիկ-
եան շուրջպարը», մեծ մասամբ, պատկերումը ամերիկեան հասարակութեան
ներկայ անկիրք ու աներազ թմբիրի: Ես դժգոհ եմ: Սակայն մենակ չեմ:
Ինչոր դրոշները դժգոհ են, որովհետեւ նրանք խիղճն են հասարակութեան:
Իմ գործերում շարունակ ներկայ է մարդ լինելու ողբերգութիւնը,
որից խուսափում չկայ: Սակայն խորքի մէջ ողբերգական գրուազների պատ-
կերումը ինքնանպատակ չէ, այլ՝ սիմֆոնի աղաղակ, եթէ կ'ուզէք, հրաւէր
դէպի կեանքի կրկնա՛ր՝ մխրճուելու, մաքառելու, մասնակից դառնալու եւ,
ի հարկին, ապառուելու յանուն անկարելի երազին, ինչպէս պիտի ասէր Սեր-
վանտեսը: Ուրում եմ ասել, դոյաթենական յայտարարութիւն է, առնուազն
այդ է եղել իմ նպատակը:

Տեսնո՞ւմ էք, թէ կեանքն ու վէպը որքան զուգընթաց են գնում: Նը-
կասեցի՞ք նաեւ, որ զու՛ր միշտ իմ հերոսն է՝ թակարդուած արտաքին գոր-
ծօնների ծուղակում: Մենք ծնուեցինք վայրագ աշխարհում եւ վայրագու-
թիւնը օրըստօրէ սաստկանում է: Պետութիւններ ու հասարակարգեր կան
այսօր, որոնք կամայական բիրտ ուժի վրայ են հիմնուած՝ իրենց հակա-
կշիռ տակ գտնուող երկրները վերածած լինելով համապարօ թանտերի: Ե-
թէ ճիշդ է այն տեսութիւնը, որին ես հաւատում եմ, թէ արուեստագէտը,
այս դէպքում՝ միլպասանը, է՛լ նաեւ պատմաբան, ապա նա իր գործերում
արտացոլում է ժամանակի կենցաղն ու բարքերը, հասարակական հոգեբա-
նութիւնն ու քաղաք-սոսեակական դրոյթները: Ես ջանում եմ հաւատարիմ
մնալ այդ կոչմանը:

Հակասականօրէն, արդիապաշտ լինելով հանդերձ, պայման չեմ նկա-
տում նորը ստեղծելու համար դասական կոթողների քանդումը, ոչ էլ նոր
խօսքի համար աւանդական արժէքների ոչնչացումը: Առաջինը վերջինի շա-
րունակութիւնն է, ամբողջացումը: Պատմութեան հետ եւ պատմութեան մի-
ջից ենք քայլում, թէեւ պատմութիւնը մեր նկատմամբ բարեացակամ չի ե-
ղել: Եղթալուել ենք մեր պատմութեան մէջ, պատմութեան բոռը ճնշում է
մեր ուսերը: Դարձել ենք Սփիւռք: Ստեղծել սփիւռքահայ գրականութիւն,
որը քաղկացուցիչ ու լրացուցիչ մասն է համայն հայ գրականութեան, եւ
աւելի լայն առումով՝ համաշխարհային գրականութեան: Մեր ամէն մի խօս-
քը հայութեան որոտով հասնում է համամարդկային սրտին: Հակառակ նա-
հանջական բոլոր ահազանդների, սփիւռքահայ գրականութիւնը ապրում է,
մաքառում, յարատեւում:

Այդուհանդերձ, Սփիւռքը ինքնանպատակ չէ, չի կարող լինել, թէեւ
հասել է մի հանդրուանի, ուր սփիւռքահայ իրականութիւնը հետզհետէ ու-
րոյն դիմագիծ է ստանում որպէս քաղաքական ուժ, տնտեսական մակար-
դակ ու մշակութային գործօն: Թէ որքա՞ն պիտի դիմանայ, կոխում ունի

Հայաստանի դիրքից, հայրենի պետութեան ողջախոհ մօտեցումից: Այլեւս ինքնաշարժ ճշմարտութիւն է, որ Հայաստանը շարունակ ներկայ է մեր գիտակցութեան ու ենթագիտակցութեան մէջ: Մեր հոգեւոր ու նիւթական բուրբ ճիգերը ուղղուած են յանուն թորհրդային Հայաստանի բարգաւաճման ու յառաջդիմութեան:

Ժամանակն է հասունութեան, մտքերի ու գաղափարների ազատ փոխանակման, որոնք եւ ձօր միջեւ, Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ, քոյրերի ու եղբայրների միջեւ, պարզ ու անձէս, անկեղծ ու համարձակ, եթէ ուզում ենք հասկանալ իրար, տոանց գունաւորումի, առանց նախապաշարման, առանց պայմանականութեան, յանուն հայութեան եւ հայրենիքի ամբողջականութեան, յանուն մարդու արժանապատուութեան:

Եւ որովհետեւ ոչինչ տեւական չէ որքան փոփոխութիւնը, ապա զբաղւած եմ լինելով, միաժամանակ զտնելով, որ մա՛րդն է բոլոր գոյականների առանցքը: Ահա թէ ինչու փորձում եմ ձեւ պարզեւել իմ աշխարհի քառսին՝ երևութիւնը պարփակելով սահմանների մէջ, ստեղծելով խօսք ու արուեստ, որոնք լաւագոյն դէպքում աւելի իրական են, քան կեանքը: Իմ մտահոգութիւնը մարդն է, ուստի իմ հերոսների մղձաւանջը՝ ի տես արդիւնաբերական միջոցառումների տիրապետութեան, միջազգային ռազմական մեքենաների տարածման եւ ինքնաշարժ կազմածների վերահաս դերի: Ես անանձնական միջոցառում մարդը կուշ է կելել պատի տակ եւ չգիտէ ուր է դանում: Իր մահկանացու լինելը կարծէք բաւական չէ, հիմա էլ կելել, նրան վանդակել են աշխարհագրական սահմանների մէջ, բանտատարի խուցերի մէջ, իր սենեակի չորս պատերի մէջ: Այլ խօսքով՝ մենաւորների ու մերժուածների մի ամբողջ բանակ, որոնք բնակուած են իմ էջերում:

Արդի կեանքի պէս բարդացել է նաեւ գրականութիւնը: Գիւտար է ճըշգորտել գրողին: Ամբողջական վէպը ոչ այլ ինչ է, եթէ ոչ համադրումը բուրբ մէջպերի: Այդ յորձանքը կլանել է նաեւ ինձ: Հանգանակներիս հարազատ մնալով հանդերձ, մերթ երեւան եմ գալիս որպէս իրապաշտ, երբեմն վիպապաշտ եւ ըստ պահանջի՝ նաեւ տպատարապաշտ: Սակայն ես ինձ համարում եմ արդիւնաւատ, յատկապէս իմաստասիրական առումով: Ահա թէ ինչու խոստափում եմ պաղափարախօսութիւնից, համոզուած լինելով, որ դա պաղափարախօսութիւնը ի վերջոյ յանգում է քարացած մոլեռանդութեան, որն, իր հերթին, ջանում է փոխարինել կրօնքին, իսկ ծայրայեղ դէպքում՝ բուն իրականութեան, փորձելով պարտադրել իրեն որպէս դիտութիւն: Եւ այսպէս, շարունակուած է բախումը արուեստի ու իշխանութեան միջեւ:

Այս բոլորից յետոյ, ամէն մի գրողի ներքին պատուհանում պսպղում է իր կեանքի առաւօտը: Ես ջանում եմ հասնել իմ մանկութեան այդ առաւօտին՝ ո՛չ որպէս կարօտ ու անցելի պաշտութիւն, այլ՝ որպէս թարմ ու անաղարտ բնագոյնների շտեմարան, ուր առաջին տպաւորութիւնները անմիջական են, դժանորէն անկեղծ ու անջինջ: Եթէ կարողանում եմ տարիների ու դիտելիքների թանձր վարպտրների միջից վերագտնել արեւի մի շող, կատշում եմ այդ շողին: Այդ օր, գրածս ինձ բաւարարում է:

Ուրեմն, պարզ եղաւ, որ ես նախ գրող եմ, ապա հայ գրող: Լրջօրէն եմ մօտենում գրականութեան, սակայն ոչ իմ նկատմամբ, որովհետեւ կեանքը աւելի եմ սիրում, քան գրականութիւնը: Իսկ հիւժո՞րը մասամբ թեթեւացնում է այս վաղանցիկ երթը:

Ինձ թւում է միշտ, թէ վաղուայ ստելիքս աւելի կարեւոր է լինելու:

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ՍԵՐՈՒՆԳԻ ՄԸ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒՆ
ՅԱՆՁՆԱՌՈՒ ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐԸ

Եւ այս տաղնապը կը ստանայ սուր տարողութիւն, երբ լրագրութեամբ զբաղող Յովիկը կը լծուի իր մեծ հօր առեղծուածը լուծելու աշխատանքին: Ի՞նչ ըրած է իր մեծ հայրը, ինչպէ՞ս ապրած է իր ճակատագիրը՝ մինչեւ վե՛րջ, թէ...: Հարցումը կը լարէ իր գոյութեան իմաստը եւ ան կ'ուզէ շատ աւելի անդին երթալ իրեն ծանօթ այն իրականութենէն, որ Յեզափոխութեան ատեն մեծ հայրը գէնք չէ վերցուցած, իսկ «Վեներուարեան սուրբապատրիարքի ժամանակ ուղեկցել է մէկիմ, մարդասիրութիւն է արել, բայց բախտը չի բերել»: Պէտք է լուծէ տարիներ շարունակ իրենց ընտանիքին անլուան կապուած առասպելը, ճշդէ իր հօր եւ նա՛ն իր կեանքին մէջ մճռական դեր ունեցած պապին ժառանգութիւնը, յստակացնէ ի՛ր տեղն ու աննիւթը ընկերութեան մէջ, որովհետեւ նախ կամազուրկ, ապա ըմբոստ, անհանդուրժելի Յովիկը կեանքի պայմաններուն հետ հաշտուած մարդոց դատումով՝ «վերջացած մարդ է», հակառակ շնորհալի, խելացի եւ բնատուր կարողութիւններով օժտուած երիտասարդ մը ըլլալուն:

Ինչպէս Հրայրը՝ Յովիկը եւս որոշ ուշացումով կը լծուի ինքզինք յայտնադործելու, իր գոյութեան նշանակութիւնը յստակացնելու կենսական աշխատանքին: Մեծ հօր առեղծուածը կարծես իր առեղծուածն է, կամ՝ ինք անոր սխալներուն հետեւանքները արեան ճամբով ժառանգած ժառանգահարը, որ իր անծանօթ պապէն, նաեւ իր հօրմէն աւանդ ստացած է ո՛չ միայն անոր անունը, այլեւ՝ հաւանաբար անոնց նկարագիրն ու ճակատագիրը՝ իրենց դրական ու բացասական կողմերով: Եւ վիպակի առաջին էջերուն մէջ սուր հեղինակը, շրջապատը մերժող բացասականութեամբ մեզի ներկայացող կամազուրկ հերոսը, ինքնավերլուծման ճամբով, արտաքինապէս կը ջանայ պատասխանել իր պապին կապուած հարցումներուն, սակայն խորքին մէջ՝ նա՛ն իր ինքնութեան յայտնադործման նպատակով ինքզինքնը, որպէսզի միանգամ ընդմիտ ձերբազատուի իր մեծ հօր կաշկանդումներէն, անոր նկարագրային-բարոյական բռնատիրութենէն, որովհետեւ, իրաւամբ՝ «...եթէ սա [այսինքն՝ պապը] է իմ միակ հարստաւթիւմը, ապա մի օր, վերջապէս, պէտք է ստաւգել, քէ ինչ է մերկայացնում իրենց: Ինձ քուում է, որ այդ հարստութիւնը աննիւթ շատ կաշկանդել է, քան թեւեր տուել»:

Այդ իսկ պատճառով, «Քնի ու Արթնութեան» «միջանկեալ գօտի»ին մէջ ապրելու կացութեան հետ հաշտուած անհեռանկար երիտասարդ հերոսը կը տարուի խորքին մէջ ինքզինք յայտնադործելու խաղէն, որովհետեւ անոր մօտ կը գոյանայ այն համոզումը, որ հարցերը կը փոխանցուին սերունդէ սերունդ, միշտ աւելի սուր տարողութեամբ, որ անոնք միայն սերունդի մը կենսափորձով հասատուած սեփականութիւններ չեն մնար, այլ արեան եւ

այլ ճամբաներով կը փոխանցուին յաջորդ սերունդներուն՝ զանոնք ժառանգելով շատ աւելի բարձր տաղանդներու, որոնց յուշումը միացեալ պատասխանատուութիւն է, շարունակական պատասխանատուութիւն, որովհետեւ զբարեյակնութիւնը եւ բարոյական պատասխանատուութիւնը միասնական եւ անբաժանելի հասկացութիւն են քոյր ժամանակների համար»(3) :

Ներկայացած է պապին առեղծուածը լուծելու առիթը եւ երիտասարդ լրագրողը ամբողջովին կը կշռուի այդ թնճուկոյ: Նախկին ծեր յուզախանի մը այցելութենէն տարի մը ետք, ան ժամանակ սպաննելու նպատատակով դարակէն կը հանէ իր մօտ մնացած ծերունիին յուշատետրը եւ կը սկսի այդքան հոգեւոր զայն: Վերջին էջը կը շահեմարտէ գրեթէ: Իր մեծ հօր վախճանը կը տեղեկագրուի՝ որոշ անորոշութեամբ եւ հանելուկային նախադասութիւններով:

Այսպէս՝

«Գիւղից շատ շէնք հեռացի, երբ ծոծկերիցս սկսած կրակի: Մեր բախտից անտար ծնու չէր: Այստեղ մեզ չէին կորոզ հետապնդի, անթափանց մտք էր (...) Դժբախտաբար, ուզեցիցնք մէկը վիրաւորուի էր թեից (...) վերք կտպեցի, բայց կտկտուեմ էի՝ որ կը կորագանայ՝ ճամբարի շարունակել: Համուսւմ էի, որ ետ դառնայ, հրաժարուց: Երբ փոխաբեմ միւս ուղիկիցս յայտարարեց, որ այլուս ի վիճակի չէ տուր գնաու: Սրտն երեւի վախեցրի էին կրակոցնը: Կտ իր տակ մուշակը փոխարինեց ընկերոջ կես ու հըրածոյն տուց մեզ (...) Դժբախտաբար, ես չեմ յիշուեմ անձնուր ուղիկիցս անուր, որ, չճայած վերջին ու վտանգին, ի՞նչ ուզեցիցի մինչև վերջ»:

Բարոյականութեան ժառանգութիւնը հաս եւս ինքզինք կը յուշէ: Պատահականութիւնը կը դառնայ «օրինաչափութիւն»՝ հեղինակին իսկ հաստատումով: Յովիկ իր պապին հարցումին պատասխանելու, «մինչեւ վերջ» ուղեկցողը ի՞նչ էր, թէ անոր տանտէրը առեղծուածը յատկացնելու տենդէն կը բռնուի եւ ամբողջովին կը կշռուի յետոյ տարի ետք, նոյն գիւղէն, կլիմայական նոյնպիսի պարաններու մէջ: Եւ հեղինակը, հաստատելով հանդերձ, թէ «սա նոյնպէս պատահականութիւն է», կարծես կը հերքի պատահականութեան վարկածը եւ կը ջանայ ընդգծել արեւան շարունակականութեան թելադրական փոստը, երբ յատկորէն կը գրէ. «... յիշումն տարով բաժնուած երկու օր կարող են այսօրան մման լինել»՝ կէսգիշերին սկսուած ձիւնով, պայտի ու բոռան ազգակցականութեամբ կապուած երկու մարդոց տագնապով, որոնցից մէկը հաւատարիմ շամ մման կրկնուած ու չըկրկնուած ձեան մէջ փնտտելու է միւսի հետեւը, սպա զաւցել սա այն պատահականութիւններից է, որոնք, ի վերջոյ, դառնում են օրինաչափութիւն»:

«Վարմիր ձիւնը» կը սկսի բացուիլ այս կէտէն, օրագիրին վերեւ մէջը բերուած հատուածէն, իր պապին (ի՞ր) անդրադարձող այդ քանի մը տողերէն եւ, երկար հարցադրումներէ ետք, Յովիկ ճիշդ կը յաջողի գտնել օրագիրին տիրոջ հետքը՝ անոր աղջիկը, նոր պատահար մը կու գայ խոչընդոտելու իր պապին հետքը գտնելու երթը: Եանկարծ, ինքզինք զարմեալ կը գտնէ անել ճամբու մը դիմաց, երբ մեղկոճի պետին աւելի քան քառասունամեայ աղջիկը, դանդաղ եւ ցրտութեամբ ընթացող վերաբերումէ ետք, կը յայտնէ, որ... Հայրը արդէն մահացած է: Սակայն կան օրագիրին երկրորդ եւ երրորդ տետրակները, որոնք ո՛չ միայն նոր լոյսեր շին սփռեր հարցին վրայ,

3)՝ Տես «Վահագն Գրիգորեան արժակազրէ դիմանկարի փորձը» Ալ. Քոֆչեանի շինելու է անհետանում մտրոյը, «Գարուն», 1984, թիւ 2՝ Փետրուար, էջ 48-52:

այլև աւելի կը բարդացնեն թնճուկը: Յեղափոխականին ազդիկը կ'արթնցընէ նոր կասկածներ՝ «Աստուած իմ, — քացակամչում է կիմը, — դուք իսկապէ՞ս ամենագլխաւորը չէք հասկացել: Ամբողջ հարցը այն է, որ դեռ է՞ն գլխից դուք կասկածուել էիք. թէ՛ ձեր պապը կարա՞յ է հերոսութիւն անել: Իսկ երբ իմացաք, որ մէկը կէս քամրից ետ է դարձել, ամփոքարէս որոշեցի՞ք, որ դա է ձեր պապը»: Իսկ թէ՛ մը Լաթ՝ «... այլևս թաքցնելու ոչինչ չունիմ: Դրանով մէկ ուրիշ բան է բացատրուել՝ ձեր թերաւատարութիւնը ձեր պապի Ոկտոբեր: Դուք մտածել է՞ք՝ որ ես ընդունա՞նք եմ նման բան անելու, գտել է՞ք, որ ոչ, եւ գարմանայի է թուացել, որ մէկ ուրիշը կարող է անել դա»:

Եւ հարցը՝ մահուրնէ երկու ամիս հոսք ձիւնի տակէն հանուած անճանաչելի դիակէն մասին զարգացող կասկածը Յովիկի մտքին մէջ, այսպէսով, շարունակ մազլցում կ'արձանագրէ («Ուզո՞ւմ էք ասել, որ մա բոլորովին ուրիշ մարդա է թաղել, լաց է եղել ուրիշի՞ն՝ վրայ, — հարցնում եմ ես»), մուշտակէ վերարկուները փոխանակելու պարագան աւելի կը բարդացնէ թնճուկը, պապին դիակէն վրայ վէրք կա՞ր, վրայի վերարկուն թ՞րն էր, տատը ո՞ր հագուստէն ճանչած էր իր ամուսինը, հարցեր՝ որոնք կենսական նշանակութիւն ունին առեղծուածի բացայայտման ուղղութեամբ, պատահականութեամբ դարձեալ անլոյծ կը մնան, երբ տան սեմէն ներս դեռ ոտք չդրած, ձիւնախաղով տարուած քրոջը դուակը, «Ի՞նչ է պատահել» իր հարցումին պատասխանելով՝ նորութիւն յայտնողի հպարտութեամբ կ'ըսէ՝ «— Մեծ տատին մեռել է»:

Մանուկի մը շրթներուն դուռած այս վերջակէտը ճարտար ճիւղքով վիպակը կ'առաջնորդէ իր անդիւր եղբակացութեան՝ մեծ հոր ճակատադիւրին առեղծուածէն մեկնելով իր կեանքի նպատակն ու պատահարներուն ընթացքը յաղթահարելու վճիռէն: Այս վիպակին եւ արձակագիրին միւս գործերուն մէջ զէթ անշաւ մը յիշատակուող Ռուբինոն Քրուզոն — իմա՛ իր պատեանին մէջ ամփոփուած Յովիկը —, հոս կ'անէ յանդուգն քալ մը, կեանքի իր կենսափորձով կը հաստատէ, որ մենակեաց, անտարբեր եւ անհեթեթ ապրելածնը չի կրնար ո՛չ միջոց եւ ոչ ալ նպատակ ըլլալ: Հետեւաբար, ան դուրս կու գայ «Քուն»ի դաստիարակէն, կ'անդիւր «միջանկեալ դատի» լուս տափաստաններէն եւ քայլերը կ'ուղղէ դէպի կեանքով ու արեւով լեցուն ձկնաթանկութեան կենսաթրթիւ հորիզոնները:

Մենաւոր եւ անշիղ մարդը իր կողմէն դուրս բերելու, մաթուսական թուակամներու արձակի երիտասարդ հերոսներուն քիչ մը ըմբոստ, քիչ մը մեծամիտ ու հեղնող նկարագիրը, որ նաեւ ողջ էութիւնն ու արիւնն է նաեւ Վ. Գրիգորեանի երիտասարդ կերպարներուն, կ'ապրի էական յեղաշրջում, կրք Յովիկ, իր նոր մաշցած օտտին ոգիով եւ պապին թելադրանքներով թեւաւորուած, կը մերձենայ իր սոհմի կարմիր ճիւղին, այսինքն՝ նոյնիսկ մեռած կարծուած նկարագրութիւններուն արիւն ու աւիւն հաղորդող հրաշալի, առինքնող, արեան ոգեղէն ժողովուրդներէն: Գիտակցութեան մակարդակին հասած գրական տիպար մըն է ան այլեւս, այլափոխուած, կենդանի եւ հեռանկար ունեցող հասուն մարդը, պապին, տատին, հոր եւ իր կենսափորձով հարստացած ա՛յն տղամարդը, որ կը գիտակցի, թէ ինչու էր մերտնց տուած աշխարհը այդքան թանկ ինձ եւ աւելի թանկացաւ, երբ տատիս մահով անդարձ հեռացաւ նրա մի մասը: Գիտակցում եմ, որ այն յախտնական չէ, եւ դա ինձ ստիպում է առաւել ճնշուիթեամբ ու սիրով մտածել նրա մասին, է՛լ աւելի ուժգնութեամբ սնուել նրանից եւ մէկ էլ (...) ստիպում է նաեւ յարգել այն, ինչ խոթք է քեզ, բայց արժանի է յարգանքի»:

Զարգացող խոստովանութեամբ հանգրուան առ հանգրուան ամբողջ-

ջայող, լիացող, թ'ր էութիւնը յայտնագործող երիտասարդն է Յովիկը, «Թագաւորի փափր սրդին» վիպակի Հրայրին աւազ եղբայրն ու անոր հաւանական ապագան: «Թակապէս, Յովիկը կարծես քաւում է Հրայրի սեղիքը: Կարծես առաջինը երկրորդի շարունակութիւնը լինի, բայց ոչ աւարտը» (4):

Իրաւամբ, անհատ-հասարակութիւն խանգարուած հազարակնցութիւնը վերահաստատելու ճիգը ստեղծագործական մակարդակով լուծելու ազնիւ փորձ մըն է «Կարմիր ձիւնը»: Ուսանելի կենսափորձը Յովիկին էութիւնը կը լուսաւորէ գիտակցութեան լոյսով, թէ՛ իր մէջ մի արարքը չի կերնար դուռ սեփական կենսագործութիւն ըլլալ, անիկա մաս կը կազմէ իր սերունդին հաւաքական կենսագրութեան, հարստացած՝ եւ սեփական կենսափորձով, եւ պայքերէն ու հայրերէն ժառանգուած ականջներով: Աւելի՛ն. անիկա պիտի փոխանցուի յաջորդ սերունդներուն, շատ հաւանաբար աւելի սուր տարողութեամբ, բայց պիտի փոխանցուի նաեւ ի՛ր կենսապայտօրանը, որուն շղթային մէկ անբաժանելի օղակն է իր հօր, տատին, մօր, ջրով եւ մա՛նաւանդ պապին չբացալոյտուած, խորհրդաւոր, թելադրականութեան ազդերէր հանդիսացող կենսագրութիւնը:

«...Տարիներ յետոյ ես գուցէ կսկիծով յայտնաբերեմ, որ դարձել եմ խմբագրութեամ երիտասարդ աշխատակիցներէ ծագրի աւ կատակների առարկան, գուցէ նաեւ, ով գիտէ, ինձ յաջողութի գարմացնել աշխարհը: Վերջին հնարաւորութեամ ես քիչ եմ հաւատում, իսկ ինչ վերաբերում է առաջինին, յոյս ունեմ, որ չի իրականանայ: Բայց դա կարեւոր չէ: Կարեւոր է, որ իմ ձեռքը տարօրինակ հնչի բոլորի ճերմակ հրաշքի կողքին եւ նրա անբաժանելի մասը լինելն յաջողութի ապացուցել շատ անգամ աւելի լաւ ու համոզող, ինչ արեցի այս պատմութեամ մէջ» (Ընդգծումը մերն է — Ս. Կ.):

«Կարմիր ձիւնը եզրափակող վերջին հալ տողերով՝ Վահագն Գրիգորեան ո՛չ միայն կ'ընդգծէ հաւաքական կենսի մէջ անհատին վերապահուած ներգործոն գերակատարութեան կարեւորութիւնը, ո՛չ միայն կը յաւաքութեանը հերոսը գրական կամ բացասական դասակարգումի ենթակող եւ ըստ այնմ նիւթին մօտենալու ձեւերը, այլեւ կը կառուցէ հոգեբանական այն ուսումնասիրուած շէնքը վիպակին, որ վարդապետը գիպալարին, համադրուած առ հանդրուան խորացող մենախօսութեան, պատահար ու պատահար շէշտաւորուող նկարագրային գիծերուն զուգահեռ՝ Յովիկին ընդմէջէն կը բերեղացնէ նկարագրին ու ողջ էութիւնը երիտասարդութեան հաւաքական գիմազիտին:

Այս գիտանկիւնէն մօտեցած՝ «Թագաւորի փափր սրդին» եւ «Կարմիր ձիւնը» վիպակները կը յաջողին ըլլալ ո՛չ միայն բնական զարգացումը մինչ այդ հրատարակուած պատմական ճանաչում երկու հատորներու եւ «Բալար օրերի ոտնամայնները» վէպին, այլեւ իրաւամբ կ'ըլլան այն հաստատա եւ բեղուն ենթահողը, որմէ կը սկսի դէպի «Մեծ արձակ» մեկնող Վ. Գրիգորեանի յայն ու լուսաւոր ուղին՝ «Փակ սեմեակ», «Խոստովանութիւնը», «Տեղաւորութիւն» եւ «Ազամա՛լաք» տրգասարեք հանգրուանը, այլ խօսքով՝ տընայան աշխատանքով, գրողական անսպասելի գիւտերով, ինքնուրոյն յղացումներով, բայց մա՛նաւանդ տաղանդի ստեղծագործ քրտինքով եւ կենսաթրթիտ արթնով նուաճուած վաստակը, որ զինք, արգարորէն, կ'անջատէ իր սերնդակիցներէն եւ իր անունը կը գետեղէ միջին սերունդի տիրական ներկայացուցիչներուն կողքին:

4)~ Տես Ա. Թովչեանի «Բառի սահմանները» հատորին նախավերջին ընթերցումը՝ «Ոչ միայն խոստովանութեամբ», էջ 228:

III

Եթէ վաճազն Գրիգորեան յաջողեցաւ ըլլալ իր սերունդի զմեծերու խմբակէն փախուստ տուած արձակագիրը, սերունդին միւս անունները, սակայն, երբեք շուքի մէջ չմնացին եւ յաջողեցան քալլ պահել առաջինին հետ: Ընչէ է, որ ո՛չ Ալեքսան Մեխակեան, ո՛չ Ալվարդ Պետրոսեան, ո՛չ վաճէ Պողոսեան եւ ոչ ալ, աւելի ուշ, Մերութան Տէր Գուլանեան, Վրէժ Իսրայէլեան, Ռուանդ Շատոյեան, Ռաֆայէլ Նահապետեան կամ Վարդան Գրիգորեան ունեցան զմեծ արձակչին բացուելու յանդգնութիւնը, սակայն, նոյնքան ճիշդ է նաեւ այն միւս ճշմարտութիւնը, որ պատմուածքին զէպի վերջակ նետուած իրենց հաստատ քայլերուն մէջ՝ ե՛ւ Ալեքսան Մեխակեան, ե՛ւ Ալվարդ Պետրոսեան, ե՛ւ վաճէ Պողոսեան, ե՛ւ Մերութան Տէր Գուլանեան, ե՛ւ Վարդան Գրիգորեան արդարացոցին իրենց անուններուն կապուած յոյսերը՝ ստորագրելով խոր կենսափորձով, ինքնատիպ կառուցով, շղուտ տիպարներով եւ համակող հոգեվիճակներով իրենց զոյութեան իրաւունքը նուաճած վիպակներ:

Հայրենի արձակի հաշտոյն կատարուած այս յաւելումներուն եթէ պահ մը մտենանք ժամանակագրական կարգով, անկասկած, առաջին հերթին պարտաւոր ենք կանգ առնել Ալեքսան Մեխակեանի «Անապատի օրերից մէկը»(5) վիպակին առջեւ: Աւելի քան տասը տարի առաջ լոյս տեսած Ալ. Մեխակեանի այս վիպակը նաեւ կը զարգանայ ներքին մենախօսութեան բուցիլը: Խոստովանութեան սրտարուխ ու վարակիչ զգայարաններու լարումով: Յար եւ նման Վ. Գրիգորեանի՝ այս արձակագիրը նաեւ ինքզինք հանդիստ կը զգայ խոստովանութեան ջուրերուն մէջ, որ իրեն կ'ընծայէ հերոսներու ամենաթաքուն սպորումներուն կծիկները քակելու առիթներ: Աւելցնենք անմիջապէս, որ ներքին մենախօսութիւններով զարգացող տրձակը այս սերունդին (նաեւ զիրենք նախորդող սերունդին) նախընտրած դրեւածեւն է: Հակառակ այս իրողութեան, «Անապատի օրերից մէկը» ունի իւրայատուկ նկարագիր, հեղինակին գրողական կարողութիւններուն եւ շնարքներուն մասին լաւագոյնս վկայող բաժիններ:

Մենախօսութեան լայն հնարաւորութիւններով դիպաշարը զարգացնելու գրական աշխարհահայեացքը եթէ արդարօրէն եզաւ նորագոյն տրձակագիրներուն գլխաւոր յատկանիշներէն մէկը, զիրենք բնօրնող երկրորդ յատկանիշը սերունդի մը տաղնապին ո՛չ միայն հայիլին, այլեւ անոր պաշտպան փաստաբանը ըլլալու քաղաքացիական յանձնառու կեցուածքը պէտք է նկատել: Այն նուրբ տարբերութեամբ սակայն, որ այս հասարակաց յայտարարը հայրենի երիտասարդ եւ նորագոյն արձակագիրները կը մեկտնդէ երկու-տարբեր խումբերու մէջ: Առաջին խումբը կը ներկայացնէ Հայաստանի մերօրեայ երիտասարդութեան տաղնապիններուն եւ երազներուն վրայ իրենց լուարձակները կեդրոնացուցած արձակագիրները, — վաճազն Գրիգորեան, Ալեքսան Մեխակեան, վաճէ Պողոսեան, Ալվարդ Պետրոսեան, Մերութան Տէր Գուլանեան, Վարութան Նալբանդեան, Վանօ Սիրադեղեան, Ստեփան Զաքարեան եւ ուրիշ անուններ, իսկ երկրորդ խումբը՝ մեր հետաւոր եւ մօտաւոր անցեալի արիննու պատմութիւնը ժամանակակից աշխարհահայացքով կարդալու եւ անկէ դասեր քաղելու տրամաբանութեամբ ստեղծագործող անուններ, որոնց համար էրդիրը կորանցուցած իրենց պայքերուն տառապանքը նոյնքան ժամանակակից նիւթ է, որքան հայրենի երիտասարդութիւնը յուզող բարոյական-ընկերային հարցերը: Նուազ թիւ չեն

5) «Ազնոտական գրականութիւն», 1974, թիւ 9՝ Սեպտեմբեր, էջ 10-31:

ներկայացնել նաև անցելի խուզարկումները, որոնք իրենց առաջին քայլերուն համար արդէն ունէին Բակունց-Դաշտենց-Գալլոյեան հոեակին եւ այլ անուններուն ստեղծագործ ճիգերով ամբացած բերքի ենթահողը: Հետեւաբար, Արեւմտահայաստանի կարօտը եւ մեր բռնադատուած հողերուն անլուր կանչերը իրենց ինքնուրոյն գոյներով եւ գիծերով ներկայացնելու համար, ամբողջ կեանք մը զբաղան այս ուղղութեան բիւրեղացման տընալան գործին նուիրած անուններուն զուգահեռ՝ իրենց պատերուն հաստարիմ թոռները չէին կրնար անտես ընել այս համամարդկային տրամալն ժամանակակից շունչ եւ հնչեղութիւն տալու հրամայականը: Եւ անոնք, իրաւօք, հակառակ հայրենի կարգ մը զբողներու եւ քննադատներու արտունջներուն, մշակեցին քաղաքացիական խոր դիտակցութեամբ հարստացած պատերու նպատակասլաց զբաղանութիւն մը:

Ո՛չ թէ հեռուոր կամ մօտաւոր անցեալ մը, ո՛չ թէ պատմութիւն դարձած անցեալի մը իրավիճակներն ու ղէպքերը լոյսին բերելու միտումն էր, որ այս տղաքը «հեռացուց» կամ «կտրեց» իրենց ժամանակի ընկերային, հասարակական եւ արհեստագիտական խնդիրներէն — ինչպէս ոմանք անարդարօրէն ամբաստանեցին զիրենք—, այլ այդ բարբառուն անցեալը իրենց ժամանակի կիզակէտին մէջ գետեղելու, ներկային զաղափարական ու պատանջատիրական ազգային լիցք եւ ուժականութիւն տալու յստակ մտադրութեամբ՝ անոնք շարունակեցին զարգացնել անցեալը ներկային կամընդ եւ կրկնակ տարողութեամբ զօրացած այսօրը սպառաջի բացերուն արձակող զբաղանութիւն մը:

Ժամանակին եւ ճակատագրին դէմ ծառայող տեպարներուն՝ խնթերու եւ իրայերու հարազատ յաջողներուն աշխարհը թուղթին փոխադրող ժառանգորդները եղան այս անունները, որոնք կուտեցան վարդան Գրիգորեան, Վրէժ Իւրայէլեան, Թոլանդ Շառոյեան, Դաւիթ Մուրատեան, Անգրայիկ Յարութիւնեան եւ ուրիշներ, որոնց արժանաւոր մէկ ներկայացուցիչին՝ վարդան Գրիգորեան ըմբօտ հերոսին, կուտակօնութենէն հրաժարած Արշալոյսի բառերով՝ «Կրկին Ստամբուլ է իշխելու աշխարհին (...) Կրկին ամէն մէկն իր աստուածն է ունենալու: Ով հաւատարիմ մնաց Աստուծոյ Որդու հաւատին, կործանուելու է: Ով սիրում է իր երկիրը եւ չի ցանկանում տեսնել իր կործանումը, թող գա՛յլ դառնայ, արովհետեւ եթէ գառնեքն էլ սէր ու ատելութիւն ունենային, վաղուց գայլերից գարնուրելի գազաններ դարձած կը լինէին» (6):

Անիի անկման դառն փորձառութիւնէն կամ մօտաւոր Հայոց Պատմութեան արիւնոտ եւ դեռ չհանդած վէրքերէն դասեր քաղելու եւ սեփական խօսք արձակելու գիտակցութեան այս որակին կարելի է հանդիպել վերեւ չիշուած երիտասարդ անուններուն մէկէ աւելի գործերուն մէջ, ուր զախ ու մախի՞ս փոխարէն՝ ժենք կը հանդիպինք հաւաքական կերպարի մակարդակին բարձրացած զանձինք նուիրեալներու կամ, նուազագոյն պարագային, նըւիրեալներու ուխտին եւ հաւատամքին հաւատարիմ շփուացող պատերու, որոնց շնորհիւ այս երիտասարդներուն արձակը կ'օժտուի հ'ւ գառնիւմով», եւ կենդանի կենսափորձով, հ'ւ վերլուծական-քննական աշխարհահայեացքով:

6) Տես «Հարամնայ սպասում»։ «Հարազատ տուն» պատմութեան ժողովածու (կազմ. Վահագն Գրիգորեան), «Սովետական զրոյշ» հրատարակչատուն, Երեւան, 1982, էջ 23-24:

IV

«Անապատի օրերից մէկը վիպակը հիմնովին կը տարբերի միահորի-
զոն մենախօսութիւններէն: Անիկա նոյնիսկ քայլ մը անդին կ'անցնի յետ-
դարձ ակնարկով եւ վերջիշումներով ստեղծագործութեան կըտոյթը զսպա-
նակող յաշոյ ալ փորձերէ, որովհետեւ Ալեքսան Մեխակեան նիւթին կը մօ-
տենայ երկու հեռաւորութիւններէ, երկու տարբեր դիտանկիւններէ: Առա-
ջին՝ կայ զրոյքը, որոշ հեռաւորութենէ մը պատմութիւնը ներկայացնող ա-
ռաքիլայական աչքը, երկրորդ՝ կենսափորձ-մեկնակէտէն խորհրդածուծէ
խորհրդածուծ անցնող, ներքին հոսանքին աւելի սանձարձակ մենախօսու-
թեան այլեքներուն յանձնուող անգուստ խոստովանողը՝ Արշակը, որ իր նե-
րաշխարհը ալեկոծած սպրումներուն բովանդակ զուժարը կը վտասհի եր-
կարաշունչ նամակին, ուղղուած՝ «սիրելիս»ին, երեսանարնակ իր երիտա-
սարգ կնոջ: Ձայնին այս տարբերութիւնը Ալ. Մեխակեան տեսանելի կը
զարձնէ նաև տեսողական մակարդակի վրայ, երբ հեղինակին զբիշով կա-
տարուած զուսպ, խիտ — երբեմն՝ հազիւ մէկ-երկու տող — նկարագրա-
կանին համար կ'օգտագործէ արամեան մանրատառ շափը — 8 փուսթօ —,
իսկ Արտակի ընդարձակ խոստովանութիւններուն համար՝ ընտանի պարզ
տողաշափը — 10 փուսթօ —: Երկու տարբեր ժամանակներն ու վիճակները
— իրապաշտ նկարագրութիւնն ու ներքին հոսքը — իրարմէ անջատելու եւ
շեշտուած զոյներով ներկայացնելու գրողական այս հնարքին Ալեքսան Մե-
խակեան կը դիմէ նաև այլ գրութիւններու պարագային: Արձակագիրին տ-
մէնէն հարագատ այս գրելաձևին նոյնքան կուտ պատկերին մենք կը հան-
դիպինք նաև «Մոլորակ ուրախ խոստովանութիւնը» վիպակին մէջ, որ
զարձակ կը շոշափէ երևաւորութիւնը յուզող հարցեր՝ երկու սիրահար-
ներու սրտանմոյշի ողորդութեան ընդմէջէն: Սակայն հոս, երիտասարդ-
ներու կողքին, «Անապատի օրերից մէկը» վիպակի «Մերակ»ին փոխարէն՝
կեանքի կը կոչուին մէկէ աւելի «ձերուկներ», որոնք կը սրեն սերունդներու
բարութիւնը՝ ընկերային-հոգեբանական քննարկումի մը վերածելով սիրա-
հար զոյգին ողբերգութիւնը:

«Սոստովանութիւն» բառին օգտագործումը խորագիրին մէջ, կը կար-
ծենք, արդէն բարացուցական տուեալ մըն է, որ աւելի եւս կը շեշտէ Ալ.
Մեխակեանի դրական այս նախասիրութիւնը: Հոգեկան լարուած կացու-
թիւններն ու յոյզերը արտայայտելու այս եղանակը Ալ. Մեխակեանի ար-
ձակին կու տայ ո՛չ միայն անմիջականութեան ջերմութիւնն ու մտերմիկ
շեշտը, այլև զայն կ'օժտէ իր տիպարներուն ներաշխարհին մէջ կատարուող
փոփոխութիւնները, սպրումներու տեղատուութիւններն ու մակընթացու-
թիւնները ներքնապէս պատճառարանելու, հոգեբանորէն հիմնաւորելու գե-
ղագիտական ուժականութեամբ:

Դասական արձակին տարբեր ունենալով հանդերձ, Ալ. Մեխակեանի
«Անապատի օրերից մէկը» վիպակը իւրայատուկ ստեղծագործութիւն մըն
է, ուր կեանքէն վերցուած պատկերներու միահիւստումով՝ զիպաշարը կը
ստանայ հոգեբանական եւ հասարակական կրկնակ բովանդակութիւն եւ
վիպակը կը դադրի լինարարական բանակումի գացող խումբ մը «անուղղայ»
երիտասարդներուն կենսաքին պատումը ըլլալէ:

Երիտասարդներու լուրջ տագնապներուն, սպրումներուն եւ երազնե-
րուն ոչ մէկ հաւատք ընծայող տարեցնելուն տեսակէտները հերքելու մտա-
դրութեամբ, Արտակ կ'առաջարկէ յատուկ խումբ մը կազմել այդ գանուղ-

զանքն էն, որովհետեւ ան կը հաւատայ, որ ծնողներուն կողմէ ճանարդաւորացիներն երեխայի տեղ զբուսած էրխտասարգները ունին իսկական տաղնապներ, ցանկութիւններ, երազներ, նկարագիր եւ աշխարհը դիտելու սեփական ոճ, որոնց պատճառով ծայր կ'առնեն ծնող-որդիներ կամ տարեցներ-երխտասարգներ վէճերն ու բախումները:

Անսպասին մէկ օրուան կեանքին նեղ տարածութեան մէջ առ երկուսթ սահմանափակուող այս վիպակը, առաջին մակարդակի վրայ, կը ձգտի պահպանել աւազանողմէ բունուած ճանուղիներ: Եւ խումբին միօրեայ տաղնապակի կեանքը, ընտրի կապարիչին վրայ կուտակուած օւսադպրոցը տարտղնելու եւ անկէ քանի մը դոյլ ըտր պահանջելու նպատակով ուսանող շինարարներուն ի գործ դրած ջանքերը: Ասիկա արտաքին շերտն է վիպակին: Աւելի ճշդ՝ ա՛յն զօղանակը, որ «Անապատի օրերից մէկ» մէն մի մասնիկէն, մենախօսութիւն-նամակի ծաւալող հոսքին պէքներով լայն պիտի բանայ սերունդի մը պարուսներուն, մաքառումներուն եւ համոզումներուն ամբողջական ժամանակը՝ իր ընկերային եւ հոգեկան բարձր հանգոյցներով:

Որքին մէջ, Արտակի, Անդրանիկի, Վառժի եւ միւս երխտասարգներուն աւազի նոր խաւեր կուտակող տաղանդմէն դէմ մզած կատաղի պայքարը մէկ այլ զբաւեռումն է սերունդին հաւաքական պայքարին: Կեանքի ճաւաղախաւերջուն եւ ճաւաղահոգմերջուն դէմ մզուած պայքարը հոս կը պարզէ ներդաշնակ միութիւն մը, երբ կախման կէտով աւարտող նկարագրութեան թելադրական վերջին նախադասութեանէն միւս ալ թո՛ւք կ'առնէ վերջուշներու, խոկումներու եւ հարցազրուաններու բնական հոսքը:

Եւ Արտակ կը սկսի իր կնոջ գրեւ ո՛չ միայն ընկատին ապրած ուրախութիւններուն եւ տխրութիւններուն ամբողջական տեղեկագիրը, այլեւ կը կարգայ իրենց կեանքի կարճ, բայց հարուստ փորձառութիւնը՝ անսպասային իրողութիւններու եւ տուեալներու մեկնակէտերէն թեւ ու թո՛ւք առած:

«Անուղղանքունն եւ իրենց պատասխանատուին միջև զոյութիւն ունի ճեղքանքի եւ արհամարհանքի խոր ճեղք մը: Արտակ պէտք է կարենայ լեցնել այդ ճեղքը՝ իր նկարագրի իրաւութեամբ, սիրելի հեղինակութեամբ, բարոյական ճշմարտութեամբ, բայց մանաւանդ կենդանի խօսքին ապացոյցը հանդիսացող նոյնքան կենդանի զործով: Եւ շնորհիւ իր այս արժանիքներուն, տակաւ առ տակաւ ստացակոյտերը հաւեցնող եւ իր հոգիին ջերմութեան եւ անուշութեան փաստերը տուող պատասխանատուն կը գրուէ իր ճանուղիներուն սիրտը, կը դառնայ անոնց հիացմունքի եւ պաշտամունքի առարկան, համեստութեան, վճռակամութեան ու իրաւութեան տիպարը, որ կը յուզէ անտեսուած երխտասարգներուն հոգւոյն նուրբ ու բուխ լարերը եւ կը դառնայ անոնց մտերիմն ու միտմամանակ խոտուպահանջ զեկամարը:

Սովորական կեանքի առօրեայէն տաղտկացած այս ճանուղիները՝ երբ բախում ու շփում կ'ունենան համեստ, անձնուրաց, բայց նաեւ խառնապահանջ Արտակի հետ, երբ կը համոզուին, որ իրենց հետ հաւասարէ հաւասար ապրող, քրանոյ, տաղնապող եւ իրենց չափ պայքարող Արտակը այլ մէկը չէ, եթէ ոչ իրենց պաշտպան փաստարանը, կ'ըզրայրանան անոր հետ, անոր խօսքը կը լսեն՝ ինչպէս աւազ ընկերով մը ցանկութիւնները եւ կը փաստեն «Ծերուկներուն եւ բուր կասկածամբաններուն, որ իրենք նկարագրի, աշխարհահայտացը, հաւատամբ եւ երազ ունեցող ստեղծագործ սերունդ են»:

Մենախօսութեան, անսպասային առօրեայի դառն փորձառութիւններուն եւ ժամանակի հարուածներուն գիմացող վերջուշներու միահիւստումով, Արտակ կը լաջողի բանալ ծալքերը ո՛չ միայն շիկացած հոգեվիճակներու

այտակերտագարը պատմութեան, այլեւ կը դառնայ հատու զէնք մը, որուն միջոցաւ Ալ. Մեխակեան կը յաղթահարէ ժամանակի ըմբռնումը, երբ կը յաջողի հաստատ կամուրջներ նետել անցեալի եւ ներկայի միջեւ: Կամուրջներ՝ որոնք վիզակը կ'առաջնորդեն հոգեվերլուծական այնպիսի՝ սուզումներու, որոնց շնորհիւ տիպարները կը կատարեն Մարդու նուաճման տաղանապով արեւոյտը երիտասարդներու հաւաքական դիմագրծը...

Կարելի է նշել բազմաթիւ մանրամասնութիւններ՝ Արտակ-Վահէ, Արտակ-Մանուէլ սկզբնական շրջանի բախումներէն, կամ իր մեծաւորին դիմաց պատեհապաշտ Հմայեակի ծեփեղումներէն: Սակայն անոնք կը մընան մանրամասնութիւններ, վիզակի սեփական տարածութիւնէն վերցուած շերտեր, որոնք պարզապէս ժամանակի եւ ներքին հոգի թափը աշխուժացնող մղիւ ուժեր են, ընդհանուր միջոցառումը աշխուժացնող զսպանակներ: Մնաց որ, մենախօսութեան եւ ներքին կլիմայական փոփոխութեանց երանդներն ու շրջապատի մանրէրը պատմելու որեւէ փորձ չի կրնար ձեռքարկուել զայն խեղաթիւրելու, սովորական պատմութեան մը վերածելու վտանգէն: Նման ստեղծագործութիւնները կարելի է կարդալ միայն շիդրով եւ հոգեկան դրութեան աչքերով:

Այսպէս են նաեւ Ալ. Մեխակեանի տիպարները: Ընդէն է, որ նիհար, ջղուտ, տղամարդկային արժանիքներով հարուստ Մանուէլը հակապատկերն է շահամուլ, զծնող ու խորամանկ Հմայեակին. ճիշդ է, որ ծերունի հոգիին՝ կեանքի ասքն ու պաղը ճաշակած Արիւթայի եւ գոռոզ ու ձեռականութեան սիրահար «Մերուկային նկարագրներուն միջեւ բեռններու հեռաւորութիւններ կան, այսուհանդերձ, անոնք ծայր աստիճան ներդաշնակ միութիւն մը կը կազմեն, որովհետեւ կեանքի մը դիւրաբ լրացնող եւ ընդդէմ դրոյններն են, որոնց միջեւ զարգացող բախումներով կեանքը — այս պարագային՝ վիզակի երիտասարդներուն կեանքը — կը վերածուի յոսի թարջերու եւ ընկերային արտոնքի: Ղէ՛մ ձաւարի ստեղծագործ պայթարի, նպատակաւոր փոխափոխութեան, որուն հաւատարիմ երիտասարդները ոչ մէկ զոհողութիւն կը խնային, հատուտելու համար նախ իրենք իրենց եւ ուրիշ ամբողջ շրջապատէն, որ վեհ, ազնիւ ու մտայուն արժեքներու ի խնդիր պայթարող թէկուզ հիւանդ ու նիհար Մանուէլներուն է ապագան, սերունդներուն երազն ու տեսլականը դարձած լուսապայծառ, ընկերային ախտերէ եւ սովորութիւնէրէ ազատագրուած ապագան, որուն պայթարը ի մի պիտի խմբէ «այդ լուս հրարուի» Մանուէլները, որոնք «չափազանց գեղեցիկ» են, «չափազանց մարդկային, չափազանց իրաւ, չափազանց յարաշարժ, կենդանի, վարակիչ»...

Իսկապէս վարակիչ տիպար մըն է Մանուէլ, գաղափարապաշտ դժբաղակիր մը, անձնագոհ, զլուս հրարուի» մը, որուն եւ Արտակի միջեւ զարգացող սէրն ու համակրանքը Ալ. Մեխակեան կը խարսխէ ամուր ենթահողի վրայ:

Մանուէլը խօսուն է վիզակին վախճանը, անսպասի (իմա՝ նաեւ կեանքի) քմահաճոյքներուն զէ՛մ պայթարած ուժաթափ Վառմի, Անդրանիկի եւ տակաւին պայթարող յամառ Մանուէլի եւ Արտակի ներքին փոթորիկը, հոգիին զգացական հողմը, որ կը թափանցէ հերոսներուն ներքին աշխարհին մինչեւ ամենամութ խորքեր:

Ձուրի մնացած վերջին կաթիլները խնայողաբար օգտագործելու ժամերը երեւան կը հանեն Մանուէլի հոգիին ամբողջ գեղեցկութիւնը: Կարելի չէ շփոթել վիզը, երբ մեր աչքին առջեւ կը պարզուի զներքին դաշտանկարը՝ այն հիւանդ ու նիհարակազմ երիտասարդին, անկողինի վրայ ուժապառ ինկած տղուն, որ ջուրի կաթիլներուն ամէնէն աւելի պէտք ունեւ-

նալով հանդերձ, երբ Արտակ խմել կը պահանջէ իրեն երկարած բաժակը, ան սնմիջապէս կ'արձագանգէ. «Իսկ տղաների՞ն» ... «Իսկ դու»...

Ըսինք, որ Ալ. Մեխակեան ծանօթ է նիւթը հմտութեամբ զարգացնելու, տիպարներ ստեղծելու եւ հողեկան հարցադրումները սրելու արուեստին: Մեխակեանի նոյնիսկ մանուկներու համար մշակած կտորները ունին հասուն բովանդակութիւն, նպատակասլաց տեսլական եւ շունչ, բայց նաեւ՝ ճիշդ ժամանակին, ճիշդ տեղին եւ անհրաժեշտ ուժղնութեամբ գրուած փտկող-բացող վերջակէտ:

Այսպէս՝

«...— Զար, ինքն իրեն շնչաց Արտակը, վերցրեց մահճակալի տակ պստած բաժակը եւ մօտեցաւ Մանուէլին: — Խմիր, Մանուէլ:

«Մանուէլը չշարժուեց, չպատասխանեց:

«— Մանուէլ... Մանուէլ...

«Ու ցնցեց բնկերաջը:

«Մանուէլ ափերով երկու կողմից պինդ բռնեց ցաւոյ մէջքը, նստեց մահճակալին, նայեց Արտակին, ձեռքը տարաւ մահճակալին տակ, ույնտեղից հանց իր բաժակը, որի մէջ էլ նայման ջուր կար, զգուշօրէն մեկնեց Արտակին:

«— Ես էլ քեզ համար եմ պանել: Դու առաւօտեան էլ չիտնցիր...»

Որտե՞ր, զուտ, տաք քանի ժը նախադատութիւն՝ նկարագրելու տլամը, եւ նոյնքան մը խորհրդածութիւն, որ կը պարզէ կացութեան հոգեբանական կլիման, որմէ ներշնչուած, մենք եւս կ'ուզենք Քայսալէս անվերջ զգալ Մանուէլի մօտիկութիւնը: Ուզում եմ անվերջ գրկած պանել նրա նիստը ուսերը, որոնք աւելի անիրաժեշտ եմ անպատում, քան մի քանի տափաշիչ ջուրը, քան քէկուզ հագար ջրհորներ»:

V

Առաջին օրէն ուշադրութեան արժանացած անուն մը եղաւ Վրէժ Իւրայէլեան: Անոր հոլովոյթին ազացոյցները հանգիստացան մասնաւոր «Մայրամուտի ձիերը» շարքին «Քառասուններկուբարդ գիշերը» եւ «Հինգերորդը» անուն պատմութեան (7), որոնց յաջորդեցին նոյնքան ուշագրաւ այլ ստեղծումներ: Տարի մը անց, «Իսրայել» ամսագրի էջերուն երբ լոյս կը տեսնէին Պերճ Զէյթունցեանի «Ուրախալի առիթ» խորագրեայ «Բարի խօսք ասելու» էջին յաջորդած էրիտասարդ արձակագիրին «Միայն մէկ անգամ» եւ «Մէկին գումարած մէկ» պատմութեանը՝ անոր անունը դուրս կու գար նեղ շրջանակներէն եւ կը մտնէր «Երան շրջանառութեան» մէջ:

Յայտարարելէ ետք, որ յատկապէս «Մէկին գումարած մէկ»ը «հասուն եւ աւարտուն գործ է», Զէյթունցեան կ'ընդգծէր. «Հեղինակը կարողացել է ներքափանցել մանկական ներշնչութիւնը, գերծ մնալով անկեղծ մանկականութիւն խաղաղութեան վտանգից, գրական այն վառ միտումից, որին այնքան յաճախ եմ դիմում որոշ մանկագիրներ, ստեղծելով մանկական հոգեբանութեամբ արհեստական մոգեւորներ: Իսրայէլեանի հերոսները ունեն իրենց բարդ աշխարհը, իրենց նայման բարդ փոխադարձութիւններն ու յուրջ հոգսերը (...): Անքորոքը հաճոյքով կը կարգայ այս պատմութեանը, կը հիանայ Միքուժամով, որ սովորել է եւ հիմա էլ ինքն է հեղինակութեամբ ուժով արիշմբիմ ստիպում սանրել՝ ապրելու այնպէս, որ ամէն ինչ դառնայ

7) «Քարուն» ամսագիր, 1982, թիւ 6՝ Օգոստոս, էջ 10-30:

նայման պարզ, արքան «ճշկին գումարած մէկը»։ Ուշադրութեան է արժանի յատկապէս պատմութեան ֆինալը»։

Մանուկներու խոր եւ հարուստ ներաշխարհը մանկական հայեացքներով խուզարկող եւ անոնց իւրայատուկ մտածելակերպն ու ապրումները հարազատութեամբ վերակենդանացնող այն արձակագիրներէն է Վրէժ Իւրառ յէշեան, որ իր այս պատմածքով կու գայ ընդդէմը, թէ՛ գեանկական աշխարհին պիտի նայել ոչ թէ մեր, այլ հենց նրանց հայեացքով, ոչ թէ դրսից, այլ ներսից»։

Այս մտեցումով գրուած «Մէկին գումարած մէկ» պատմածքը մեզի կը ներկայացնէ երիտասարդ բռնցքամարտիկ Մերութանի լուռ ողբերգութիւնը։ Ամենայն պարզութեամբ ապրելու, կեանքի հարուածներէն եւ անոր թմահաճ պարտութիւններէն երբեք չցնցուելու ուսմունքը իր պատանի աշակերտներուն աւանդած երիտասարդ բռնցքամարտիկը հասած է Եւրոպայի ախոյանութեան եզրափակիչ մրցումին։ Եւրոպայի ախոյան դառնալու մեծ յոյսեր ունի Մերութան։ Ամէն մարդ կը սպասէ այս հաւանական ախոյանին վերջնական յաղթանակին։ Հաւաքուած է նաեւ դիւղի բնակչութիւնը՝ մեծով ու պզտիկով, պատկերասփիւռի պատտարին գիմաց։ Մական կը պատահի անսպասելին եւ ան խայտառակ պարտութիւն մը կը կրէ։ Եւ Մերութանի դատարակած վաղուան բռնցքամարտիկները, մանկական մաքուր ու դիւրաբեկ դասական լարերով յատկանշուող մանուկները, պահ մը կը դառնան հասակակիցները իրենց պայկերուն, անմիջական շարունակութիւնը՝ «եթէ այժմ չես համարձակուիր սպաննել» սպանակիքով դանակը Գեւորի կողորդին սեղմած պայկին, ու երբ արեւածաղիկի պէս հպարտ Մերութանի ձեռքերը վար կը կախուին, Գեւորին սուղաբէց կարդացած պապը կհոսով կը բանայ դուռը եւ կը գոռայ իր պատանին վրայ. «Լաց չիմես, լաց չիմես»։

«Մերութանը անշարժ կանգնել է դէպի մեզ եւ ժպտում է։ «Լաց չիմես», — տատիս վրայ բարկաճում է պապս։ Մերութանը ժպտում է հակառակորդին եւ նրա հարուածներից նայնիսկ չի ցնցում։ Ես այդ ժպտոյն համաչնցի։ Լուռամկարում եմ տեսել, արեւածաղիկների՞ վրայ եմ տեսել, արտնձգ եմ տեսել... «Լաց չիմես, Մերութ, լաց չիմես», — գոռում եմ ես։ «Մերութ, լաց չիմես»։ Մերութանը ժպտում է։ «Լաց չիմես», — տատիս վրայ գոռում է պապս։ Մրցավարը բարձրացնում է իտալացու ձեռքը։ Մերութանը ժպտում է՝ իբր իր համար եւ յաղթելը, եւ պարտուելը մէկին գումարած մէկ է»։

Գիւղին անտեսումին արժանացած, միայն մանուկներէն եւ պատանիներէն պաշտուած, ապա՝ ախոյան դառնալէ ետք, բովանդակ դիւղին պաշտամունքին առարկան դարձած երիտասարդ բռնցքամարտիկին ողբերգութիւնը քանի մը տողով պատկերացուցած այս վախճանին շփ ուշադրու է հերոսին եւ իր մտերիմներուն միջեւ ծաւալող երկխօսութիւնը, որուն անդրազարնայով՝ Պ. Զէյթունցեան կը մատնանչէ.

«Է՛եաւարութեան վրայ տեղի ունեցող այս անիրական դէպքով, որն իրականից անլի մեծ ներքին լարում ունի, ապրումների հարուստ երանգներ եւ ընդամենը կէս էջ ծաւալ, որը լի է կոմիքով ու տիրութեան շաղախով, որը լի է մանկական օրերի անմտաց ձայներով, ընդհանրացման բաւական ծանրակշիռ լիցք է պարունակում»։

Կեանքի բարախուն միճակներու վրայ կեդրոնացած, իրականութիւնը «բաց հայեացք»ով քննող վերոյիշեալ պատմածքը եթէ կը յաջողի վերադառնել իրականութենէն աւելի իրական լարումներուն թրթոցումները՝ նուաճելով «ընդհանրացման բաւական ծանրակշիռ լիցք», նուազ հետաքրքրա-

կան չեն ճամնայն ուշադրութեան եւ խրախուսանքի» արժանի այս պատմը-
ւած Քաշարին «Միայն մէկ անգամ» եւ այլունուն գրութիւնները:

«Գիշերը գիւղը մնամ էր քնի մէջ խօսող մարդու, որմ ինքն իրեն չի
լսում» իմացական պատկերով սկսող Իսրայէլիանի «Միայն մէկ անգամ»
պատմուածքը եւս ընթացիկ գրութիւն մը չէ, այլ երիտասարդ Հայոյի նը-
կարողի իրեն ու ապրումներուն բովանդակ հրդեհը զգացողական հոսքի մե-
րածող կենդանի ստեղծում մը, յուշն ու ներկան շարժապատկերային քնե-
նիքով իրարու մէջ ընդելուզող սանդղագործութիւն մը, ուր ի յայտ կու գայ
ներկան ու անցեալը անբռնազրօս հաւասարեցումի ենթարկելով: Իսրայէլ-
իանի յատկութիւնը, որ կրկնակի ուժգնութեամբ կը հնչէ ժանաւանդ ա՛յն
հատուածներուն մէջ, ուր երկու ժամանակներուն միահիւսումէն ծնած
խորհրդածութիւնները կը բարձրանան բանաստեղծական միճակներու մտ-
կարդակի:

Այսպէս, կեանքի ընթացիկ դէպքերն ու կացութիւնները յուսնկա-
րող ցուրտ ոսպնեակ մը չէ Վ. Իսրայէլիան: Կեանքը եւ անոր թելադրական
միճակները անձնաւորելու տեսողական նուրբ զգայարանը անախիս արժա-
նիքն է այս երիտասարդ արձակագիրին, աւելի ճիշդ՝ իր ստեղծագործական
հոսքին մեկնակէտը, որմէ թռիչք առնելով՝ թափանցիկ ջրաներկով ան կը
նկարէ հողեկան եւ նկարագրային համապատկերը ամբողջ կեանքը դիզա-
կան դժտան առօրեայով անցուցած Հայոյի, լուռ ու մունջ իր դժբախտ ճա-
կատագրին հետ հաշտուած զեղջիկուհիին, որ իր խօսքը ըսելու, միայն մէկ
անգամ մերկ ճշմարտութիւնը բարձրադասակ յայտարարելու մտաւանդու-
թեամբ կ'ապրի ողջ կեանք մը, եւ երբ պատմուածքի աւարտին կու գայ այդ
բախտաւիթ պահը, խեղդուած խօսքը կը դառնայ աւելի խօսուն, քան բո-
վանդակաւից բոլոր խօսքերը:

Թելադրական այս հրապոյրին առնիթեր, կարելի չէ պահ մը չհիանայ
ու չշուգռել ի տես ամէնէն աննշան դէպքի կամ կացութեան դիմաց ճեղա-
ւորի ապրումներով տուայտող հերոսուհիի հոգեմիճակին: Հայ գեղջիկին
մաքրամաքուր հոգին ու փխրուն զգայարանները անհատականացնող տիպաչ
մը է ան, ճակատագրին կողմէ համբերութեամբ հարուածուած զոհ մը, ո-
րուն ամբողջ կեանքը անցած է սպասելով հրաշքին, որպէսզի երբ Աստուած
իրեն ներկայացնէ պատեհ պահը, ան ըսէ ի՞նչ խօսքը, որովհետեւ ամէն մարդ
կեանքի մէջ գոնէ մէկ անգամ ըսելիք պէտք է ունենայ, պէ՛տք է ըսէ ի՛նչ
նշմարտութիւնը:

Հետաքրքրական այս մտայնացումին վրայ կառուցուած «Միայն մէկ
անգամ»ի այս համը հերոսուհին կ'ապրի իր անխօս ողբերգութիւնը՝
ցուելով նոյնիսկ գիւղի ակումբի պատուախն վրայ ցուցադրուած հնդկա-
կան ժապաւէնի հերոսներուն դժբախտութեան հաշտութիւն, հակառակ անոր,
որ մտաքրիւ Հայոն... «Մինչեւ վերջ էլ գլխի չընկաւ, քէ ինչի մտտիմ է
Ֆիլմը, բայց երեսներն զիստակից գուշակեց, որ աղքատութիւն է եղի:
«Մեղք եմ, — մտածեց Հայոն, — ի՞նչ վատութիւն եմ արել, որ Աստուած
պատժել է»: Լաց եղաւ, կուշտ լաց եղաւ»:

Ժապաւէնի հերոսներուն ողբերգութեան համար տառապող Հայոն
միայն բարին ու լաւը կրնայ ցանկալ ա՛յլ միայն իրեն ծածօթ ու անծանօթ
մարդոց, այլև՝ Ենկոյին (իրենց կովին), ծառերուն, գետին, ժայռին եւ
քնութեան եւ տիեզերքի մէջ մի մասնիկին: Ահա թէ ինչու ան ամենայն
արտով կը ցանկայ, որ սպասուած հիւրը ճայտակալ-սպիտակ լինի, երկար
վզով ու կապոյտ աչքերով, բարակ, աղեղնաձև յօնքերով, եղունգներով՝
մանիկիւր: Թող գրմբուն ծիծաղ ունենայ, փայլ չէ, որ ինքն չի լսի այն:

Նրա ամուսինն էլ թող քարձրահասակ, թիկնեղ տղամարդ լինի, շէկ մորու-
ֆով եւ լայն ֆակատով»:

Աժօթխած, պատուախնդիր եւ լուսկեաց Հայ գեղջկուհիի Հասարակաց
տիպարը մարմնաւորող Հերոս մըն է Հայոն, իսկ «Միայն մէկ անգամ»ը՝ իւր-
տացած խոհերով յատկանշուող յաջող պատմուածք մը: Մանաւանդ ուշա-
գըբուս է Հայոյի տեսիլքը ներկայացնող թափանցիկ Հատուածը, ուր գիւ-
ղացիները, կաթով լեցուող լիճը, անոր մէջ սուզուող կովը, կաթի գոյն
ստացած շրջակայ դաշտերը, մէկ խօսքով՝ դէպի գիւղ Հասող կաթի Հեղեղը,
չէկ մորուքով եւ յայն նակատով Հայոյի ձայնին վրայ յայտնուող Հրաչքը՝
ձերմակազգեստ տղամարդը կը դառնան երազային համերգ մը, Հրաչքին ի-
րականութիւնը, եւ երեզի սուպետին անակնկալ երեւումին Հեա՝ զՅրա սա-
ֆերի տաջնու ֆանտազմ եւ կաթմափրփուրն ու այն ամէնը, ինչ գիշերային
գիւղի խաղաղութեան մէջ ամսպատիւրդն էր յայտնուելը:

Ինչպէս «Մէկին գումարած մէկ»ին մէջ, այս պատմուածքին աւար-
տը եւս կը բարձրանայ վախճանական արամը ընդհանրացնող ուժական մա-
կարդակին: Թեյազրկան ուժականութիւնը կը թրթռացնէ աւարտը, երբ
տեսիլին կը միանայ Հայոյի սեռային աշխարհը, պատգաններն ու անձկու-
թիւնները լուսարձակի տակ թերող վախճանական վիճակը: Կը վիպայնա-
նայ պահը, քաղաքէն եկած Հիւրին ցանկալարոյց շրջազգեստը դադարօրէն
փորձող Հայոն կը բռնուի ներքին տեղատուութիւններու եւ մակընթացութիւն-
ներու բարբարոս ալիքներուն մէջ, եւ երբ սենեակի շեմին կը յայտնուին
Հիւրերը, յանկարծ, Հայոն դարձեալ կը յիշէ երազը՝ «Ենկնի սարուքերով
մարմինը, լայն ֆակատով եւ շէկ մորուֆով տղամարդուն, առնանցող կա-
թը, գարնարած գիւղացիներու... Ջրալաշի Անտան քարձրացրեց լճի եր-
կաթեայ արգելակները, կաթը դայի մէջ հոսաց եւ պուսկիներինց հոսեց ցած,
Շեկան ծանրացած կռպիւր կողպեց, շէկ վարսերով մի կին գրնգումն ձայնով
ճրթրթաց, երկու անօգնական ռուֆեր ծուլուցին, քազում սրբատաշ ֆարք
իրար վրայ ելան»:

Տարբեր ժամանակներէ վերջուած պատկերներու մեծքածով յատկա-
նշուող այս վերջաբանին մէջ, Հայոն կը ներկայանայ միայն մէկ անգամ լուս-
նիք իր խօսքին ամբողջ պարունակով, որ պատմուածքը կ'աւարտէ՝ գոյն իր
զազաթնակէտին Հասցուցած Հետեւեալ խորհրդապատկերով.

«Հայոն բաց ու խաւի արեց շուրթերը, շուրթերի հետ շարժեց ձեռ-
քերը, եւ այնպէս, ինչպէս երեխաներն են օճառի պղպղակ քնցնում, Հայոյի
քերամից թռան երկու սպիտակ աղանձիներ. «Ամօթ... ամօթ...», եւ յետոյ
Հայոն երկար դադարացրեց շուրթերը, բայց հիւրերը այլեւս ոչինչ չլսե-
ցին»:

Մենք կեդրոնացանք վ. Խորայէլեանի այս զոյգ պատմուածքներուն
միայ, որովհետեւ անոնք յաւազոյնս կը բացայայտեն այս երկտասարդ
արձակագիրին սեփական աշխարհը եւ անոր դրական առանձնալուսակու-
թիւնները: Այս իրականութեան խօսուն էջերուն մենք կը Հանդիպենք նաեւ
«Մայրամուտի ճիւղեր» պատմուածքներու շարքին, «Հարազատ տուն» ժո-
ղովածուի «Զագնակ» անուն կտորին եւ Հայրենի մամուլի էջերուն Հրա-
տարական ալ ստեղծագործութիւններու, ինչպէս՝ «Հերթական արձա-
կուրդ», «Նագէի պրոֆեսորը», «Քեռի Մգրօ», «Փակ շրջանակ» թատերա-
խաղին մէջ:

Փաստօրէն, գիւղն է վերջէ Խորայէլեանի արտամօտ աշխարհը՝ իր ե-
րիտասարդ-երիտասարդուհիներով եւ թուրքին հաթաղանէն փրկուած Հայ-
րենի Հողակտորին միայ կորուսած իրզրի կարօնն ու փոխ վրէժը սպրդող
ճերմակներով: Մնաց ու տեսիլ ունեցող ներկայացուցիչներ են անոնք,

որոնք կապոյտ հայեացքներով եւ երիտասարդական հուստքով կը բացւին կեանքին, կ'անցընեն լուրջ փորձառութիւններ, կ'ապրին ծանրակըշիտ տաքնայններ եւ իրաւամբ կ'ըլլան «Երկիր կորուսեալքի կանչերուն եւ պատգամներուն հուստարիտ տեսլաւոր ծերունիներ:

Այս վերջին տիպարներուն ներքին յոյզերը լոյսին բերող կտորներու պարագային, սասունցի ծեղոներէ սերած Վ. Իսրայէլեան կը ջանայ զարգացնել Ա. Բակունցով սկսած, Ս. Դաշտենցով եւ Հր. Քոչարով աւելի եւս հաստատուած, բայց մա'նաւանդ Մ. Գալշտեանի նուսնումներով նուերականացած դրական ուղղութիւնը՝ իր մասնակցութիւնը բերելով «Վապոյտ Երգնկայի Ն. Աղալեանի, Ս. Շառոյեանի, Վանօ Միրազեղեանի եւ այլ անուններու ճիգերուն:

Գարդալով Վ. Իսրայէլեանի պատմուածքները, մեզի համար աւելի եւս բացայայտ կը դառնայ այն իրողութիւնը, որ անոր արձակը կը ընտրուի տարբեր մամանակներէ զազուած թեմաներու զաղմագանութեամբ, բնական պատկերներ եւ տիպարներ կերտելու եւ պարզ թուացող կացութիւնները նոյնիսկ հոգեբանօրէն քննելու կարողութեամբ:

Աւելին՝ Վ. Իսրայէլեան ո'չ միայն ծանօթ է կեանքի պարզ պատարկները հոգեբանական վերլուծման ենթարկելու գաղտնիքներուն, այլեւ՝ իր ներսուզումները թեւադրականութեամբ օժտելու արուեստին: Մա'նաւանդ ուշադրաւ են իր երիտասարդ թէ՛ ծերունի տիպարներուն (օրինակ, «Սիւսի մէկ անգամ»ի Հայտն, «Մէլիմ գումարած մէկ»ի Մերութեանը, անոր հոգեհարստութիւնէ կ'ալ արտայայտութիւնը եղող «Նազի պոֆիւստը»ի նազէն, «Բեռի Մարտի Մարտ», «Հեղինոն գնում է կոնկրետ»ի Հեղեար տառը եւ «Դաստարի շրջանակ» թատերախաղի Արշակ թեոն) հոգեկան անհանգըստութիւնները, որոնք տողերու միջեւ սպիտակ տառերով կը շեշտադրեն այրող հարցադրումներ, զաղտնարական բովանդակութեամբ ջեմացած թրադրական եզրայնագումներ, որովհետեւ այդ անհանգստութիւնները կը բխին արդային հոգեբանութեան ակունքներէն:

Վերջապէս, ինչպէս կը հաստատէ Գառնիկ Մկրտչեան. «Իսա մի ամբողջ ժողովրդի անհանգստութիւնն է, տառապանքով ու արիւնով ներծծուած իր ճամբին բազմաթիւ գերեզմաններ ստեղծած, բայց գերեզմանի անյայտութեան հետ չհաշտուող ժողովրդի մտանքութիւնը» (8):

Հեղինար տասի, Քեռի Մարտի, Արշակ Քեռիի եւ այլոց վերլուծներով, ներքին «բոկտուած ելեւէջներով» եկող ձայները, իրաւամբ, կը դառնան հոգեկան ոգեշնչող ազդակներ՝ վերապրելու ե'ւ անցեալը, ե'ւ ներկան:

Կուտ ըսելիքով, դիպչալարի հոլովոյթին հետ զարգացումէ զարգացում ընթացող տիպարներով, վառ մենախօսութիւններով, բայց մա'նաւանդ ժուժկալ ու հեզասահ գրեխօսութեամբ պատմուածքը ամուր ենթահոգի վրայ խարսխող արձակագիր մըն է Վ. Իսրայէլեան, որուն գրչին տակ իր մշակած նիւթերը կ'ունենան հերոսին հոգեբանական վիճակներէն ներշնչուած շիկտցումներ, պատուը կ'ընդհատուի համապատասխան ներաշխարհային անակնկալ ժայթքերուն, որոնք Վ. Իսրայէլեանի գրչին տակ կը դառնան հակաշտուած ձայներ եւ իր գրութիւնները կ'օժտեն նպատակասլաց բովանդակութեամբ:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(Շար. 2)

8) «Քարուն», 1962, թիւ 11՝ Նոյեմբեր, «Ժամանակի մեծախօսութիւնը», էջ 67-68:
digitised by A.R.A.R.®

ՃԱՄԲԱՐԱՅՈՒՆ ՄԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ



Հիմնականում հանրայայտ են խորհրդային համակենտրոնացման մամբարների գոյութիւնը, պատմութիւնն ու յարուցած ահաւոր անբաժութիւնները խորհրդային եռաարկութեան կեանքում: Համբարային իրականութիւնը, ընկանաբար, վերաբերում է եւ հայութեան խորհրդային հատուածին, որը իրերի բերմամբ դատապարտուած է կրելու խորհրդային ամբողջ քնակութեան մակատագիրը, յաւելեալ ու իւրայատուկ դժուարութիւնները չհաշուած:

Արդ, այս կամ այն կազակցութեամբ, ահարա-քանտանամբարային սանձարձակ մեշամիջոցների գոհեր են դարձել նաեւ, ինչպէս յայտնի է, անհամար թուով հայեր, ընկանութեան բաշար խուերից, ներառեալ մտաւարականներն ու արուեստագէտները: Այդ գոհերից շատերը քիչ թէ շատ յայտնի են, իսկ անհամեմատ անլի շատերը՝ բոլորովին անյայտ: Քանզի իրականում քացակայում են տեղի ունեցածի մշգրիտ հաշուառման ընթացիկ հեարաւորութիւնները, գտնէ մինչեւ հիւնա, բերեւ էլ ընդմիջտ:

Ուստի՝ իւրաքանչիւր գրաւոր վկայութիւն, որն այս կամ այն չափով աղբնչութիւն ունի մամբարային անծայրածիր աշխարհի էջուած հայերի հետ, մոյմիսկ ամեմամասնակի տարուութեամբ ու հարեւանցի դիրքերից, անփոխարինելի կարեւորութիւն է ձեռք բերում ինքնին մեզ համար: Անա եւ այդպիսի՝ այն էլ քաւական ցայտուն վկայութիւններից մէկն է, որն այժմ արժէ թարգմանաբար ներկայացնել:

Խօսքը վերաբերում է ռուսերէն «*Կոնտրինէնտ*» եռամսեայ հանդէսի 46րդ համարում (1985 թ.) տպուած մի ամփօփ յօդուածի: Դա Ալեքսանդր Խայուլինի՝ «Իրողութիւններ եւ վկայութիւններ» բաժնի շրջանակում հրատարակուած «Տաղանդի սպանութիւնը» յուշագրական շարադրանքն է:

Յօդուածագիրը պատմում է իր մամբարային կեանքի մի որոշակի փուլի ու, մա՛հաւանդ՝ մի հայ երիտասարդ գեղանկարչի՝ Կարապետ Մանուսեանի արուեստի ու ռքերգական ճակատագրի մասին: Դատելով շարադրանքի բովանդակութիւնից, նկարագրուող ժամանակաշրջանը ընդգրկում է թէ՛ ալյալէս ասած «նախաճինայեան» եւ թէ՛ «եւտճինայեան» տարիներ, թէ՛ եւ ստոյգ թուականներ չեն նշում:

Ընդհանրապէս մամբարային իրականութեան, իսկ մաս-

նաւորապէս յօդուածում ներկայացուող իրողութիւնները վերաբերեալ իմ կողմից յատուկ բացատրութիւններ տալու հարկ չկայ: Բաւական եմ համարում բուն յօդուածի ամբողջական՝ քարգմանութիւնը, որի մէջ արդէն շատ բան է ասուում՝ անմիջական պարզութեամբ, որքան էլ փափրածաւալ յիճի ներկայացուող յօդուածը:

Լ. Մ.

Ո. Խ Ա Խ Ո Ի Լ Ի Ն

ՏԱՂԱՆԴԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ երիտասարդ զեղանկարիչ Կարապետ Սանոսեանը մերթապառնէ էր նրա համար, որ բարեկամներին ու ծանօթներին ցոյց էր տուել իր՝ գրաքննութեան կողմից շթոյլատրուած նկարները: Այդպիսի մի «յանցագործութեան» համար նրան դատապարտել էին 25 ասրուայ բանտարկութեան, յատուկ խստութեան ճամբարներում:

Նրան ես առաջին անգամ հանդիպեցի Բրատսկի հիւանդանոցում, որը պատկանում էր «Ողբերի» (Լճային) յատուկ ճամբարին: Երկու անգամ անհետանալու նրան պատգարակով տանում էին հիւանդանոցային դօտի: Նա պարզապէս ժաշկ ու ոսկոր էր, իսկ այն ժամանակ կրել էր իր պատժաժամկէտի միայն առաջին կէսը:

Բրատսկի հիւանդանոցում այն ժամանակ տիրութիւն էր անում ժայռ Ծամոտան: Նա ինքն էլ մի քիչ զբաղւում էր զեղանկարչութեամբ, ուստի՝ բարեացակամ էր նկարիչներին հանդէպ: Երբ Սանոսեանը մի քիչ կազդուրւեց, Ծամոտան նրան թողեց հիւանդանոցում անորոշ ժամանակով, հիւանդի անուան տակ, եւ նրա համար մի փոքրիկ արուեստանոց պատրաստեց՝ հազուադ չորացնելու համար նախատեսուած դատարկ շրանոցում: Ծամբարներում 13 տարի տառապելուց յետոյ, արդ թւում եւ այն տառապանքից յետոյ, որ սիրած արուեստով զբաղուելու հնարաւորութիւն չէր ունեցել, Սանոսեանը վերջապէս իր տրամադրութեան տակ ունեցաւ վրձիններ ու ներկեր, ինչպէս եւ՝ թէնս փոքրիկ, բայց եւ այնպէս առանձին ու լաւ լուսավորուած արուեստանոց: Նա այն ժամանակ, յիշում եմ, ամբողջովին ողորուած էր ևրջանկութեամբ եւ դործի անցաւ անդուսպ ետանդով:

Հիւանդանոցում նրա առաջին նկարը եղաւ մի մեծ պատասա, երկուսուսով-երեք մետրի չափով, որը նա վերնագրել էր «Իլիարանում»: Երկի նիւթը բացայայտօրէն խորհրդային չէր, բայց հիւանդանոցի վարչութիւնը, որը վարժուած էր դիարանին, ինչպէս որ անհրաժեշտ աւտօրեայ ուրիշ ամէն

ինչի, նկարի նիւթը համարեց սովորական ու անօրհայ: Նկարչին բաւական յաջողութեւլ էր նրա մարմնաւորումը: Միտեանց վրայ անկարգ թափուած դիակների լեռնակոյտի յետնախորքում նկարիչը պատկերել էր մի սեղան, որի կափարիչը փայլում էր ցինկապատ ծածկոցով, իսկ սեղանի վրայ, արեւան լճակի մէջտեղում, երիտասարդ բանտարկեալի՝ փորձութեբ թափուած դիակն էր: Դիակներն ողորդ ձեռքում բռնել էր մեռածի սիրտը ու կտրուում էր այն: Իսկ շուրջը կանգնած էին ճերմակ խալաններով եւ բուք ու անտարբեր դէմքերով կազերիսները (պետանմաննդութեան կոմիտէի աշխատակիցները) եւ նրանց մէջ՝ մայր Շամոտան ինքը: Նկարիչը Շամոտայի դէմքի ու յատկապէս աչքերի արտայայտութիւնը «որսացել» էր այնքան ճշգորէն, որ դիմանկարային նմանութիւնը արտասովոր ու զարմանալի էր: Հիւանդանոցի պետը հիացած էր նկարչի աշխատանքով եւ նկարը կախեց իր առանձնասենեակում, Սանտեանի խորհրդով՝ խուլ պատից, երկու խոշոր քառակուսի պատուհանների դիմաց: Երբ մեզ որեւէ առիթով այդ առանձնասենեակ էին կանչում, մենք զարմանում էինք մեր ընկերով վարպետութիւնից: Թւում էր, թէ այն տեղում, որտեղ կախուած էր նկարը, պատը փլուած է եւ այդ փլուածքի մէջ դիարանի կտորն է, ոչ թէ նկարուած, այլ իրական, այնպիսի՛ն՝ ինչպէս որ կար, իր դիակներով ու դիակներով:

Շամոտայի տեղակալը կայիտան Գասպարեանն էր: Նրա առանձնասենեակի համար Սանտեանը նկարեց մի նկար, որը վերնադրեց «Կամալէ»: Բայց նկարի վրայ ոչ մի կին չկար: Պատկերուած էր բանտի խուց՝ քրէական յանցալործ տղամարդկանց համար: Նրանք բոլորն էլ կանգնած էին բանտախցի մինչեւ առաստաղ հասնող վանդակաւոր պատուհանի մօտ: Բանտի բակ էին քշում կանանց խումբը: Քրէակներն էր նրանց նայում են պատուհանի միջով: Եւ նայողների դէմքերի արտայայտութիւններն այնպիսիք էին, որ բոլորովին պարզ էր զտնուում, որ կանացի սեռին կարօտ տղամարդիկ իսկուպէս «կանայք» են տեսնում:

Նկարն ռեպիներեան այն նկարին էր նման, որի մէջ զապորոժցիները նամակ են դրում թրքական սուլթանին: Կենդանի եւ լիարին քնաւորութիւններն նոյն բազմազանութիւնն էր. միայն թէ՛ մարդկանց հագուստը այնքան երկրորդանգ չէր, որքան որ Ռեպիների մօտ:

Երբ նայում էինք «Կամալէ» նկարին, Ռեպիների նկարին նման լինելը եզրակացում էր ինքնին: Եւ հենց Սանտեանը նկարել էր զրեթէ Ռեպիների պէս. նոյնքան երկար, մետրանոց կամ աւելի, վրձիններ, նոյնքան խոշոր, բայց ճշգրիտ ու նուրբ քրումներ...

Հիւանդանոցում իմ գտնուած ժամանակ նկարիչը նկարեց եւ իր վերջին նկարը, որը նրա համար ճակատագրական եղաւ: Իրա պատճառով նա դուրս հանուեց հիւանդանոցից, ու դարձեալ երկար ժամանակով, թերեւս էլ ընդմիջտ վրկեցին նրան վրձիններից ու ներկերից եւ նրա մէջ վերջնականապէս սպանեցին ինքնատիպ ու տաղանդաւոր նկարչին:

Նրա այդ վերջին կտաւի պատմութիւնն այս է: Մայր Շամոտան նրան խնդրել էր նկարել մի նկար, որի վրայ պատկերուելու լինի Լենինը: Սանտեանը համաձայնուեց ու նկարեց այնպիսի մի նկար, նա դա անուանեց «Լենին»՝ ի հաճոյս Շամոտայի, Լենին ճիշդ կը լինէր դա կոչել «Մայր-Հայրենիք»: Բայց «Լենին» անունն էլ շատ ուժեղ էր: Այդ անունով նկարն ու նկարիչը մի տեսակ մահապատժի էին ենթարկուած ամբողջ կոմունիստական վարչաձեւը, նրան կանդնեցներով պատմութեան անարգանքի սինի մօտ: Նրանք ունէր երկու մետր բարձրութիւն եւ մէկուկէս մետր լայնութիւն: Մայր-

Հայրենիքը պատկերուած էր գեղեցիկ կնոջ տեսքով, — ուսական պարզ-
 փողոցական դէմքով, փողոցական դունդ ու կենտախալտ հանդերձան-
 քով: Նրա յոնքերը խստորէն տեղաշարժուած էին, զայրալի աչքերում, դէմ-
 քի իւրաքանչիւր ծալքի մէջ կար անհասանելի ներքին, գրեթէ դիւցազնա-
 կան ուժ եւ անսահման տիրութիւն: Նա դէպի առաջ էր պարզել ձեռքը, ասին
 ու ժամները շերեփի նման հաւաքել, եւ այդ շերեփի վրայ կար մի փոքրիկ,
 ժամանաւափոց էլ պակաս, հրէշիկ, որը վարձանալիօրէն նման էր Լենինին:
 Նրա լայն ալոյսներով դէմքի վրայ մի ինչ-որ զարմուհական ու ժոնգո-
 լական քան կար, իսկ ուսական՝ ուլիչ: Հրէջը ձեռքով բռնել էր մի ասլըր-
 ճանակ, դա շեշտակի ուղղելով Մայր-Հայրենիքի բարձր ու շիտակ, վեհա-
 պանծ ճակատին:

Չնայած դէմքի փոքր չափին ու բուրբոյրին մանր աչքերին, Մանու-
 եանը յստակօրէն պատկերել էր նրանց արտայայտութիւնը: Դրանք արտա-
 յայտում էին միաժամանակ թէ՛ խորամանկութիւն, թէ՛ վախ եւ թէ՛ լրիւ
 անյուսութիւն:

Հրէջը Մայր-Հայրենիքին սպանում էր արճանակով, բայց այնպէս
 էր թւում, թէ Մեծն Մայր-Հայրենիքը, ահա-ահա՛, իր ժատները բռնեց
 է դարձնում եւ նրանց սեղմուելուց կը ճրթնթան ոսկորները եւ այլևս ը-
 պանաւիք չի լինի:

Մանուեանը մի անգամ ատուտեան այդ նկարը տեղաւորեց ճաշար-
 նում, երկու բաշխիչ պատուհանների միջև: Նկարը Հիանալի, ձեռքի աչ-
 խատանքով պատրաստուած շրջանակի մէջ էր. դա պատրաստել էր ատաղ-
 ծաւորեական արտագրամասի բրիգադավար՝ հիանալի փորագրիչ-վարպետ
 Գրիգորի Չապաւելը, քաղաքացիական պատերազմի կիսադարգէտ, անարժա-
 նարար փառարանուած կուռք Վ. Ի. Չապաւելի ազգականը: Նկարի լուսաւո-
 յումը երազօրժուեց նկարիչ ու էլեկտրագործ՝ դրեմօր թաթար Հաքիմ Ծախ-
 պովի մտայնացման համաձայն:

Իրենց կաթսայիկներում ստանալով ապուրը (բալանդան), իսկ կաթ-
 սայիկներին խուփի մէջ էլ՝ ապուրից մի քիչ աւելի թանձր լիւան, կալանա-
 տրները մի քիչ հեռանում էին բաշխիչ պատուհաններից ու կողքից երկար
 ժամանակ Հիանում նկարով, մինչեւ որ հսկիչները նրանց վզակոթին խփե-
 լով աշխատանքի էին քշում:

Հակառակի նման՝ այն նոյն օրը, երբ ճաշարանում կախում էր «Լե-
 Ան» նկարը, իր սեւ դորձերի իրականացման համար հիւանդանոց այցելեց
 ճամբարի վարչութեան օպերատիւային ծառայութեան պետ՝ ենթազնդապետ
 կազանկովը: Մտնելով ճաշարան եւ նկարը տեսնելով՝ նա կանգ առաւ սրտ-
 շի մէջտեղում ու երկար նայեց կտաւին, ապւելով նկարչի վարպետութեան
 մեծութիւնից, իսկ ապա, հաւատարիմ մնալով ամէն մի գեղեցիկ բան ոչըն-
 չացնելու իր պարտականութեանը, զրպանից հանց մեծ, ծալովի դանակը
 եւ, նկարին քիչ մօտենալով, կտրտեց այն՝ խաշիք քաշելով:

Միեւնոյն օրը, ճաշարանի յետեւում խարոյկ վառուեց եւ կրակը ու-
 չընայցրեց թէ՛ «Մայր-Հայրենիք», «Ինարամուս» ու «Կամայե» նկարները,
 եւ թէ նկարչի բազմաթիւ փորձանկարները (էքզիզները)՝ «Մտալիւս պատկա-
 սեւ թէ նկարչի համար: Նա ուզում էր պատկերել երիտասարդ Ստալինին՝
 զերծիչ նկարի համար: Նա ուզում էր պատկերել երիտասարդ Ստալինին՝
 Թիֆլիսի կենտրոնում օրը ցերեկով փոռտային կառքը կողպատելու պահին:
 Փորձանկարներից մէկում Ստալինը պատկերուել էր տանից մէկէ տանիքի
 վրայ՝ կառքի պահակների վրայ երկրորդ աստիճանը նետելիս. առաջինն արդէն
 հարուածել էր կառքի առջեւից զնացող պահակներին... Հաւաքուեցին ու

Հրկիզուեցին Շամոտայի կողմից նրան տրուած բոլոր վրձիններն ու ներկերը:

Մանոսեանը, Շամոտայի թույլտուութեամբ, կրում էր երկար մազեր, ուղիղ մազաբաժան սանրուածքով: Սեւ եւ խիտ լինելով՝ դրանք նման էին աբիւծային հսկայական, ներկուած բաշի: Կազանկովի կարգադրութեամբ, այդ մազերն անմիջապէս խուզուեցին խուզամեքենայով եւ վարսաւորանոցից նկարչին ուղղակի աւարան «Շիդօ» (տուգանային մեկուսարան): Մեկուսարան դրին նաեւ բրիգադայար Չապաեին, նկարի շքանակ պատրաստելու, եւ էլեկտրադործ Շախպոյին, լուսաւորութիւն պատրաստելու համար: Երեքին էլ յետոյ ուղարկեցին անյայտ ուղղութեամբ, չիմացանք ուր:

Երբ նրանց մեկուսարանից պահակատուն էին տանում՝ տեղափոխելու համար, Սանոսեանը հեկեկում էր: Իր նկարներէ վախճանը աւելի ծանր էր նրա համար, քան մարմնական մահը:

Յետոյ մենք իմացանք, որ նկարչին նորից են դատել: Ծամբարային գատուարութիւնը կարճ էր տեւել. ամբաստանելով նորից դատապարտուել էր 25 տարուայ խիստ տեսակի ճամբարների: Ժամկէտի կէսն արդէն կրած լինելը հաշուի մէջ չէր: Նոր ժամկէտով նրան ուղարկել էին Մագազան՝ հանգամայնութեան:

Ես բախտ ունեցայ Սանոսեանի հետ կրկին հանդիպելու Ուստ-Կուսում՝ խորուշողիան ձեհալից յետոյ: Ուստ-Կուս էր քրտորուել նա՝ աչքի մէկը կորցրած: Միւսով էլ վատ էր տեսնում եւ կրում էր ստուերաւորուած ակնոցներ: Բայց մի ինչ-որ հրաշքով նա դեռ կարողանում էր նկարել, եւ տեղաւորուեց աշխատանքի, իբրեւ նկարիչ, քաղաքային մշակոյթի ասնը: Մի անգամ, երբ ես մտայ մշակոյթի տան նրա արուեստանոցը, վատմանի թղթի կտորի վրայ նա գծեց իմ մատիտանկար պատկերը, որը պահում եմ՝ իբրեւ ամենաթանկ յիշատակ իմ յաղտնաւոր բարեկամից, որի արտասովոր տաղանդը սպանեց Գուլագը: Իրանից երկու ամիս անց նա վախճանուեց: Մենք նրան թաղեցինք այնտեղ, որտեղ որ նա կտակել էր, արդէն զգալով, որ իր կեանքի ժամերը հաշուրւած են, — Ուստ-Կուսի դերեգմանատան հեռաւոր աջ անկիւնում, ծերացած խիթափիճիների խիտ ծաղկաթմբի յետեւում, նորահաս, սոսափող տերեւների վեջու բնի մօտ, որը եւ նրա համար դարձաւ իւրաքանչեւ կենդանի յուշարձան: Մենք՝ նրան թաղողներս, միջոցներ չունէինք մէկ սւրիչ՝ դրանիտեայ կամ նոյնիսկ էթանազին բետոնէ յուշարձանի համար:

Սանոսեանի գծած իմ փոքրիկ ու հասարակ դիմանկարը թերեւ միակն է, որը մնացել է նրա երկերից:

Ռուսերէնից Քարգմանից՝
Լ. ՄԿՐՏՁԵՄՆ

23.1.1986 թ., Միւնխեն




ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ս. Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջնիկն ընդառաջելով, նախարարաց խորհուրդը որոշած է Սեպտեմբերին Երևանի մէջ կազմակերպել Հայկական միջնագրեան գրականութեան նուիրուած միջազգային համագումար մը:

Այս առիթով ակադեմիոս Եջուարդ Զրյաշևան նուսն է, թէ Հայ գրականութեան զարգացման միջնագրեան հանգրուանը կ'ընդգրկէ պատմական մեծ ժամանակաշրջան մը՝ եւ զարէն միջին ժ.Ը. դար: Այս ժամանակաշրջանը հարուստ է համաշխարհային նշանակութիւն ունեցող աշխատութիւններով եւ գործերով, որոնց հեղինակներն են Մովսէս Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Ենոքեայի, Տրիկ, Սայաթ-Նովա եւ ուրիշներ: Համագումարին զիւցուցումներով Հանգէս պետի գան Մուկուչյէն, լեկենդրատէն, Թիֆլիսէն, Բոստաճէն եւ խորհրդային այլ շաղաքներէ գիտնականներ եւ գրականութեան ժամանակներ: Համագումարին պետի հրահրուին զանազան երկիրներէ աւելի քան 80 գիտնականներ, ինչպէս նաև՝ Սփիւռքի զաղուցիներէ անհատներ:

ԱՐՄԵՆԻԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԺԱՆԱՆԱՅ «ՄԵԿԵՆԱՍ» ՄՐՅԱՆԱԿԻՆ

Պուլհոս Արշէտի «Que Hacemos» ամսաթերթը, զազմագրուարանի մշակութի գարտուգարութեան հովանաւորութեամբ՝ 28 Ապրիլին, կատարեց «Մեկենաս» մրցանակներու բաշխումը: Այս տարի մրցանակը յաւկայտուած է Արմենիա մշակութային Ընկերակցութեան, «Արիստեթիկ» հիմնադրութեան, քանաւոր եւ գրական



«ԱՐՄԵՆԻԱ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՐՈՂ

զետ տղթ. Անիէլ Գաթիթեային, ինչպէս նաև՝ «Պանքո Մաթո» ու «Նուպիսա-Փիքարտո» ընկերութեանց:

Սոյն մրցանակներուն նպատակն է զնահատել ախ անհատները, որոնք իրենց ճիգով կը նպաստեն կամ տնտեսագէտ կ'օժանդակեն մշակութային գործակցութեանց զարգացման:

Ձեռնարկը անշէ ունեցած է Պուլհոս Արշէտ մշակութային կեդրոնի սրահին մէջ, ուր խոսք ասած են զազմապիտութեան մշակութի գարտուգար տղթ. Մարիա Օ'Տոնէլ, գառակազմի անդամներէն Քայէ ֆոնթենէ եւ յիշուած ամսաթերթին անօրէնը՝ տղթ. Գորիէ Քուրանթու:

Արմենիա Մշակութային Ընկերակցութեան կողմէ մրցանակը սասցած է ընդ. տղթ. Ադրանիկ Արշէտեան, որ շնորհակալութիւն յայտնած է զնահատուցի այս արտայայտութեան համար եւ թուած հաստատութեան կատարած աշխատանքները՝ մշակութային գեանի վրայ:

**ՍՕՍ ԱՄԳՍԵԱՆ
ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ**

Այժմ Աթաշի մէջ տեղի ունեցած շարժապատկերի համամութեան վատասեմին, յաւաքոյն ղերակատարի մրցումակին արժանացած է հայրենի տաղանդաւոր ղերասան Սօս Սարգսեան, անուանի արժանկազից Ստեփան Զարեանի շնորհիւ այդին պատճառով հիմամբ պատրաստուած ժապաւէնին մէջ մարմնաւորան իր ղլխաւոր ղերին համար:

**ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՄԱՐԱՆԻ 100ԱՄԵԱԿԸ**

Վերջերս, Հայաստանի մէջ տեղի ունեցած է Պոլսոյ Կեդրոնական վարժարանի հիմնադրութեան 100ամեակին նուիրուած հանդիսութիւն մը: Հանդիսութեան ներկայ եղած են Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ Կարէն Դաւլաբեան, գիտութեան ու մշակոյթի ղործիչներ, գասարժաններ, նախկին կեդրոնականացիներ եւ օգիւստաւոյ ղրօսաւըրընիներ:

Ներկանի Պետական Համալսարանի դասախօսներէն Հայկ Դադարեան ներկայացուցած է կեդրոնականի պատմութիւնը, ղործունէութիւնն ու հայ մշակութային կեանքի մէջ անոր ունեցած ղերը:

1880ին, Պոլսոյ Դալմիտոյ թաղամասին մէջ, Վարժապետեան պատրիարքի եւ հայ մըտաւարականներու ջանքերով բացուած կը կոտարարի Կեդրոնական վարժարանին, այն հետանկարով, որ վարժարանին սաները հետազային կարենան դասնալ ուսուցիչ կամ իրենց ուսուցը շարունակել եւրոպական համալսարաններու մէջ:

Կեդրոնականի մէջ դասաւանդած են հեղինակուոր անուններ, ինչպէս՝ Միխայ Զեյնալ (տնօրէն), Յակոբ Պարոնեան, Մամբէ Գարագաշեան, Յովսէփ Երեմեան (Մերենց), Ռէթէոս Պէրդէրեան, Նիկա Տեմիրճեպալեան, Հրանդ Ասատուր, Տիրակ Զարգեան (Ինսար), Լեւոն Սեղոսեան (Լ. Յանթ), Վահան Թէքէեան եւ Կասաբ Զարեան: Իսկ երաժշտութիւն դասաւանդած է Կոմիտաս վարդապետ, Կեդրոնականի իր սաներին կազմելով ղԳՈՒՍԱՍՆ Իրգլախօսարի կոմիտէ:

Կեդրոնականի մէջ աւակերտած են Միտք Մեծարենց, Հրաչեայ Աճառեան, Արշակ Զօպանեան, Արշակ Արգոյանեան, Նրուիան, Յակոբ Մեմուրի, Յակոբ Սիրուրի եւ այլ ղէմքեր:

**«ՀԱՅԵՐՈՒ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԴԻՒԱՆՆԵՐԸ»**

Ապրիլ 24ի նախօրեակին, Յրանական ճծայեարք հրատարակչատունէն Փրանսերէնով լոյս տեսած է Հայերու Յեղասպանութեան ղիւսմանը անուանով 800 էջոց ղիրք մը, որ ցարը միայն ղերմաներէնով հրատարակուած էր:

Գիրքը պատրաստուած է Հայկական Յեղասպանութեան մասնաղէտ Թեա Հոֆմանի ղողմէն, որ իր արխիւային նոթերը քաշած է 1919ին հրատարակուած Ե. Լեփոխուի ղԳԵՐՄԱՍԻԱ եւ Հայաստան հատրէն:

Լեփոխու իր այս ղործին համար ֲղոտաւորած էր իր արամագրութեան տակ ղրուած Գնլմանիոյ արտաքին նախարարութեան արխիւները, որոնցէ իր ղերքին մէջ ան հրատարակեց 400 փաստաթուղթ, այսինքն՝ հիւպատոսներու տեղեկագրերը, նամակներ, ախանտեսներու վկայութիւններ, որոնք Թուրքիոյ ղերման ղետպանին միջցաւ Պերին ղրկուած էին: Հոֆման այս փաստաթուղթերէն ղնարած է 120 հատ:

Հատորը ղերմաներէնէ Փրանսերէնէ թարգմանած է Մարի Յրանա Լըթընու: Նախարանը ղրած է Գերմանիոյ պատմութեան լուսֲղոյն մասնաղէտներէն Ալֆրէտ Կրոսէու: Յրաններէն հրատարակութեան համար Հոֆման ասորաւորած է ղորքը ներկայացուլ կարճ ղրութիւն մը, որուն կը հետեւի Լեփոխուի երկու ներածականը: 1914-1918 ժամանակաշրջանը ղիզըրկած փաստաթուղթերուն վրայ աւելցած են նաեւ Զէյթունի եւ Սուէսիոյ ղէպերուն եւ Վանի հերոսամարտին նուիրուած բարձիներ:

Այս ղերքը նպատակ ունի ի ղերել հանելու թուրքիոյ բոլոր սուտերը, ղիննու պատմութիւնները, անղաւեր փաստաթուղթերը, կեղծ իտքերն ու յայտարարութիւնները:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՍԱԿԱՆ ԵՒ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ՝
ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼԱՍՐԱՆԻՆ
ՄԵՋ**

Միշիկընի համալսարանին մէջ տեղի ունեցած է պաշտօնական բացումը Հայկական հետազոտական եւ հրատարակչական կեդրոնի մը: Հանդիսութեան ներկայ եղած է Է. իր մասնակցութիւնը ղերած է յերակուտական Տնօրէտ Ռիկրի (ղեմօղրատ), Ան կարեւոր ճառ մը իտած է եւ լեչուած է կարեւարութիւնը նման կեդրոնի

ժը՝ Հայկական Տեղագրություններն և ևայ ժողովուրդի քաղաքակրթության բերած նպաստի ուսումնասիրության ուղղությունը. «Արարիչը է, որ առիթ չտրուի քարտեզում քսելու, քե աքանազարթունքը անորչ են կամ հարցումներու պատասխանները գոյաբխն չունին, կամ ալ իրենց յանցաւոր քաղաք կասկանի ենքարկի (...) Տեղագրութեան իրականութիւնը պէտք է որ պատմութիւնը քարտեզին հաշի պահանջները (...) Ոչինչ այնքան յետադիմ կը քաջատանջ մեր ազգայնին, որքան անցիկ վայրաց անմարդկութիւնը ժամայու հրամայականը մերմիտ կայր վարձը»:

Տոքթ. Տէնիս Փափազեանի անդրաբերումը, Համալսարանի ճիշդաւ այս կեդրոնը պիտի կողմէ տուեալներու պահեստ ժը և ևայ ժողովուրդի պիտի զարմեի բարբ և նորագոյններուն՝ ամբողջ Ամերիկայի տարածքին: Մրազրուած է կեդրոնը ստանի մէկ միլիոն տուարի նիմազըրումով ժը:

18 Մայիսին, 900 հոգի ներկայութեան, նորարաց կեդրոնին մէկ ցուցադրուած է «Վկաները» ժողովուրդը, (Նոյնին 28 վերադարձներու վկայութիւններ), ինչպէս նաեւ՝ «Ստարականներ» խոտաքանակ երկրի մը մէջ, որուն պատմիչը Գալիֆորնիայ նահանգապետ Մ. Տէքսէնեանն է: Այս գործը նոյնպէս նուիրուած է Մեծ Նոյնին:

**ՕՍԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԻՄ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՏՐԱԿԸ**

Գրեւի «Ներկայ» գեղարուեստական գրականութեան հրատարակատունը յոյս ընծայած է ուկրաինացի Նյանաւոր բանաստեղծ Լեոնիտ Պերվոմայսկիին երկերու ուկրաիներէն երկնաւորեակը: Ան բազմեց տայնած է Հայաստան: Ասոր «Վայրի միտք» գիրքին մէջ կան Հայաստանին ու ևայ ժողովուրդին նուիրուած ամբողջական շարքեր:

Նրկատորեակին առաջին գիրքին մէջ առանձին բաժին ժը նուիրուած է Ռ. Հայաստանի՝ «Վիրմանի» գոլիտ» («Հայկական սերունակ») ընդհանուր խորագիրով: Այս բաժինն մէջ տեղ գտած են «Գերիները», «Հայկական գիւմի», «Գուտարը» լեռներում, «Զուարթնոց», «Ոչարակ», « Յուրմուկամ քաղիւն» և այլ բանաստեղծութիւններ, որոնց մէջ Պերվոմայսկիին արտայայտած է ևայ ժողովուրդի նախաձեռնութիւնն ու բազմազարեան գրառութեան ներկայութիւնը իր ունեցած անհուն սէրը:

**ԽԱՉՔԱՐ ՄԸ ԼԵՓՈՒՌՍԻ
ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱՅ**

Իտալիոյ Միլան քաղաքի աւետարանական համայնքի նախաձեռնութեամբ՝ Ապրիլի սկզբը սեղի ունեցած է մեծ հայտեր ներաննէս Լեփուրսի յիշատակին նուիրուած գիտատեղով ժը: Նոյն առիթով, յատուկ նախաբաններ ժը ընթացքին՝ Լեփուրսի գերեզմանին վրայ գեղարուած է Հայկական խաչքար ժը:

Հանդիսութեան ներկայ գտնուած են Եւրոպայի զանազան լրբաններէն ժամանած հայեր, ինչպէս նաեւ Վիեննայի Միլան ժամանոթ պատուիրակութիւն ժը, դիւնաբանութեամբ՝ Վազգէն Ա. կաթողիկոսը ներկայացնող հոգեւորականի ժը:

**ՅԻՇԱՍԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՆՈՒՐՈՒԱԾ
ԱԼԵԿՍԱՆ ՄՆԱԿԵԱՆԻ**

Անոցը հիւանդութեան ժը պատճառով կանխահառ ասրիքին մահացած Ալեքսան Մնակեանի յիշատակին նուիրուած յարգանքի և մեծարանքի հանդէսը սեղի ունեցաւ կերակի, 26 Մայիս 1936ին, «Յ. Տէր Միլանի» թատերասրահին մէջ, կազմակերպութեամբ՝ «Համազգայնի» Երջանային Վարչութեան և Պուրծ Համադի ժամանակեղին:

Հանդիսութեան բացումը կատարեց Գրիգոր Շահինեան, որուն յալորդեց Ստեփան Կոմիտեան, որ դաւանակի վրայ մեկնարանեց Ալ. Մնակեանի կողմէ զանաւորուած շորս կրգր՝ «Եւմուխի ղունիր», «Հայկական հիմ», «Զարթիր որդեակ» և «Սոսկումն անաւոր»:

Առաջին խոսողը եղաւ Վազգէն Լեփեմեզեան, որ դիւնաւոր գիծերով ներկայացուց եղբարախա երաժիշտին ազգային դիմապիւր՝ երբև յանձնաւոր, ևնուտան և քոսիկից արուեստագէտ: Հայ հոգեւոր և աշխարհիկ երաժշտութեան ժարգերէն ներս Ալեգոր նուաճած գիտական և գեղարուեստական որակը ընդգծեցի ետք, Վ. Լեփեմեզեան ժամանակեց, որ ան ցուեղած-պրպտած է նաեւ մեր հնագոյն առանդարիւններն ու ժողովրդային կինցողակերպերը — ազգային սարազ, ևն, Սկարչուքիւն, քանդակագործութիւն, հարտարարական, ճիւղակագրութիւն, հուսովացի նգանակներ, հուսի, համի, գոյնի



առանձնաշատկութիւններ, շոշափիլիփի խրո-
յառանկ մեր գգայութիւնն ու զգայնութիւնը,
պարզ, երաժշտութիւնը, շարժումը: Նման
հիմքի, խորհոյի վրայ լուսապայծառած հայ-
կական ամեն դրսևարում կամ հայտ մեր սի-
պարի կերտում մեծագոյն սրբապղծութիւնն ու
այլատեքումն էր բնականաբար, Ալեքսի հա-
մարն:

Այս, իստիկ էտը Ալեքսան Մնակեանի
ժարդկային գիծերուն մասին, ան ծանրացաւ
հեղաճամբոյր ու հարդրական ժարդուն վրայ,
վեր առնելով անոր անսակարկ եւ գիտակից նը-
ւիրումի խօսուն օրինակը:

Էլը Հարպոյեան, դանեակի ընկերակցու-
թեանը Մանգան Իմիտանի, մեկնարանեց Վե-
րախանքում շուէին տակն եւ շարժեցորը հը-
զերը, որոնց երաժշտութիւնը յօրինած է Ալեք-
սան Մնակեան:

Ելիբոբզ խօսողը եղաւ Էթիէն Քիւփէլեան,
որ Քրտնահրէնով բարձր գնահատեց Ալ. Մնակ-
եանի հմտութիւնն ու անհատականութիւնը, որ
չէր հանդուրժէր որեւէ սխալ եւ չէր չնդունէր
որեւէ անպարտութիւն: Ետունակելով, ան անդրա-
դարձաւ հայ մշակոյթի հանդէպ եղծրորախոս ե-
րաժիւանի սուկցան պաշտամունքին, անոր
ժարդկային պարզ գիծերուն եւ հարուստ հու-
թեան եւ, իր խօսքը փակելով՝ բարձրաբերելի
վրայ նուազեց Ալ. Մնակեանի յօրինումներէն
մէկը՝ «Օրոր»:

Այս բեմ բարձրացաւ լիբանանցի բանա-
տեղծ, երաժիշտ եւ երգչուհի Մանուէր Բա-
զանի, որ բանաստեղծական շունչով կատարեց
հարունկչուր էրենց 28 տարուան բարեկամու-
թեան: «Առաջին անձրեւներուն պէս Քափան-
ցիկ» Ալեքսան Մնակեանը լիբանանեան երաժը-
տութեան բերած նպաստը ընդգծելով, Մ. Բա-
զանի բաւ. «28 տարիէ ի վեր, լիբանանի մէջ,
ոչ մէկ երաժշտական զորք կամ երգ, Բանպա-
նիներուն պտտկանի թէ ուրիշներուն, մուպուկե-
ցաւ առանց Ալեքսի: (...) Մեծ մարտահրաւը-
ներու ընթացքին, իր Ֆէյրուզ պարտաւարած
էր մերկայանալու աշխարհի բոլոր կողմերէն ե-
կած երաժշտատեքներուն, մեզի կ'ըսէր, շքեղած
ատենն ձգեցէ որ լսեմ Ալեքսի աքորտիտին
ձայնը եւ, վտան եղէք, որ պիտի յաջողանէ»:

Մանուէր Բազանի արտայայտ արտա-
յայտութիւնն էր, քեմ բարձրացաւ ար-
հեստավարժ հուարածունեկէ կազմուած խումբ
մը, որ յիշատակի այս հանգիստութիւնը փակեց
հայկական պարեղանակներով:

ԸՆՈՐՀԱԿԱԼ ՈՒՓԵԱՄԲ ԱՏԱՅԱՆՔ

- ԱՐԵՒԱՄԱՐ — Բանաստեղծություններ —
Մուշեղ Իշխան, Պեյրուք, 1986, 96 էջ,
հրատարակություն՝ Համագրայինի Պեյրուքի Մամանհիլի
վարչության
«Համագրայինի վահե Արեան Տպարան»
- ԵՐԿԵՐ — Բանաստեղծություններ եւ արձակ էջեր —
Ռուբեն Սեւակ, Անթիլիաս, 1986, 652 մեծադիր էջ,
հրատարակություն՝ ՀեճՈՄԻ, թիւ 2:
- ՄԱՐՈՒԹԱՅ ԱԱՐԻ ԱՄՊԵՐԸ — Պատմամեթոդներ —
Մուշեղ Գալոյեան, Պեյրուք, 1986, 328 էջ,
հրատարակություն՝ «Գառնի» մատենաշարի թիւ 1,
տպագրություն՝ «Հայ Տիպ Գամփիլկրաֆ - Թեֆնոփրես»:
- ՎԵՐՋԻՆ ԲԱԺԱԿԸ — Վիպակ —
Զապէլ Եսայեան, Անթիլիաս, 1986, 145 էջ,
հրատարակություն՝ «Գառնի» մատենաշարի, թիւ 2,
տպագրություն՝ «Հայ Տիպ Գամփիլկրաֆ - Թեֆնոփրես»:
- ԹԱՏԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ — Թատերգություններ —
Շահան Շահնուբ (քեմականացում՝ Գրիգոր Շահինեանի),
Պեյրուք, 1986, 64 էջ,
հրատարակություն՝ «Շիրակ» հրատարակչատան:
- ԳԱՆԱԽԻ ՎԱՆՔԵՐ — Ալլամ —
Հրատարակություն՝ «Հայկական Հարստարայետություն
Փաստաթուղթեր» մատենաշարի, Միլան, 1986, 73 մեծադիր էջ:

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 20 Լ. Ո.

Տարեկան բաժնեգին 200 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 20 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեամ տալար

بَاكِينُ

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԷՐԵԱՆ
ԱՄԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
Ս. ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban
Tel. 296898

تموز ١٩٨٦

digitised by A.R.A.R.@